

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

9 Հոկտեմբեր 1922ին, Պուլկարիոյ Ֆիլիպէ (Փլովտի) քաղաքին մէջ, կը ծնի Յակոբ Օշականի անդրանիկ մանչ պաւակը՝ Վահէ Օշական:

1923ին ծնողքին հետ Ֆիլիպէէն կը փոխադրուի Կիպրոս, ուր Նիկոսիոյ Մէլգոն-եան կրթական հաստատութեան մէջ հայր Օշական կը ստանձնէ ուսուցչական պաշտօն:

1926ին նախակրթութիւնը կը ստանայ Մէլգոնեան վարժարանի մէջ, մինչեւ 1934:

1935ին ծնողքին հետ կը տեղափոխուի Երուսաղէմ եւ կը յաճախէ Անգլիական Հայ Սքուլը (St. George's School), որուն ուսումնառութեան շրջանը կ'աւարտէ 1940ին:

1941-1942 տարիներուն կը ծառայէ անգլիական բանակին մէջ՝ իբրեւ ուստիկան, սերժանտի աստիճանով: Մաս կը կապ մէ բանակայիններու համար հրատարակուող բանակի անգլերէն թերթի խմբագրութեան:

1942ին, Գահիրէի «Յուսաբեր Գրական Յաւելուած»ի Սեպտեմբեր - Հոկտեմբեր միացեալ համարին մէջ, լոյս կը տեսնէ Վահէ Օշականի առաջին պատմուածքը՝ «Պիրատէր Յակոբ», որ կ'արժանանայ Բ. մրցանակին:

1942էն ետք Վահէ Օշական հետզհետէ ընդգծուող յաճախականութեամբ կ'արտադրէ բազմաթիւ գրութիւններ, որոնք լոյս կը տեսնեն սփիւռքահայ տասնեակ մը պարբերականներու մէջ:

1943ին Երուսաղէմէն կ'անցնի Հայֆա եւ կ'աշխատի բանակի զինուորական արժիէին մէջ՝ իբրեւ հրասայլերու ածիւսթօր:

1945ին կը վերադառնայ Երուսաղէմ եւ իբրեւ մեքենագէտ կ'աշխատի էլեկտրական ընկերութեան մը մէջ:

1946ին կը մեկնի Փարիզ: Տարի մը ֆրանսերէն ուսանելէ ետք, կը մտնէ գիտական համալսարան՝ երկրաչափ դառնալու նպատակով: Հակառակ հայր Օշականի պնդումներուն եւ սպառնալիքներուն՝ կը սկսի յաճախել Սորպոնի գրականութեան համալսարանը, ուրկէ 1951ին կը ստանայ Licence ès Lettres՝ պիէն մանսիոնով:

1952ին կը վերադառնայ Պէյրութ՝ ընտանիքին տէր կանգնելու համար: Կը զբաղի ուսուցչութեամբ եւ տասնամեակներ շարունակ ֆրանսերէն լեզու, գրականութիւն, իմաստասիրութիւն, քաղաքակրթութեան պատմութիւն եւ հայ գրականութիւն կ'աւանդէ Քալիֆի մարտնիթներու դպրեւանքին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեւանքին, B.U.C.ի, A.U.B.ի, Հայկապեան քոլէճի եւ կրթական այլ հաստատութիւններու մէջ՝ մինչեւ 1975, երբ իրանական քաղաքացիական պատերազմին հետեւանքով կը տեղափոխուի Միացեալ Նահանգներ:

1956ին Պէյրութի մէջ լոյս կը տեսնէ Վահէ Օշականի բանաստեղծական առաջին հատորը՝ «Պատուհան» խորագրով:

1963ին կը տպուի բանաստեղծական երկրորդ գիրքը՝ «Քաղաք»ը (Պէյրութ):

1967ին կը վկայուի իբրեւ docteur ès lettres de l'Université de Paris: Աւարտածանին նիւթը եղած է «Le Roman Arménien Occidental de 1850 à 1930 et Les Influences Étrangères»:

1971ին կը հրատարակուի բանաստեղծութիւններու երրորդ հատորը՝ «Քառուղի» (դարձեալ Պէյրութ):

1975ին կը հաստատուի Միացեալ Նահանգներ՝ Ֆիլատելֆիա, ապա՝ Սան Ժրան-սիւքօ:

1980ին Նիւ Եորքի մէջ լոյս կը տեսնէ Վահէ Օշականի բանաստեղծական չորրորդ գիրքը՝ «Ահագանգ»ը:

1982ին Քլիվլէնտի մէջ կը հրատարակուի Վահէ Օշականի «The English Influence On West Armenian Literature In The Nineteenth Century» անուն ուսումնասիրութիւնը:

1983ին Նիւ Եորքի մէջ լոյս կը տեսնէ բանաստեղծական հինգերորդ գիրքը՝ «Խուճապ» խորագրով:

1986 Նոյեմբերին Վահէ Օշականի «Փախստականը» անուն պատմուածքներու հատորը կ'արժանանայ «Գէորգ Մէլիտիսեցի գրական մրցանակ»ին եւ լոյս կը տեսնէ յաջորդ տարին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի տպարանէն:

1987ին կը հիմնէ եւ կը հրատարակէ հայ մշակոյթին ու գրականութիւնը անգլիախօս օտար շրջանակներուն ներկայացնող R.A.F.T անգլերէն հանդէսը:

1988ին կը հրատարակուի արձակ գրութիւններու երկրորդ հատորը՝ «Թակարդին շուրջ» (դարձեալ Նիւ Եորք):

1991ին Աւստրալիոյ մէջ լոյս կը տեսնէ իր վեցերորդ քերթողագիրքը՝ «Արուարձաններ», որ կ'արժանանայ Փարիզի «Գաւուրճեան գրական մրցանակին»:

1993ին կ'արժանանայ Հայաստանի Գրողներու Միութեան «Յովհաննէս Թումանեանի անուան մրցանակ»ին:

1993ին «Համապատասխան»ը կը յայտարարէր Վահէ Օշականի գրական գործունէութեան յիսնամեայ յոբելեան, որ յաջորդ տարիներուն կը նշուի սփիւռքեան պանապան գաղութներու մէջ, Միացեալ Նահանգներէն մինչեւ Աւստրալիա, Սուրիա, Լիբանան եւ այլ երկիրներ:

1994ին, գրական գործունէութեան յիսնամեայ յոբելեանին առիթով, Պէյրութի մէջ «Մաշթոց» մատենաշարը կը հրատարակէ Վ. Օշականի գրականութիւնը ներկայացնող ծողովածու մը՝ «Հատընտիր» անունով:

1995ին Պէյրութի մէջ կը տպուի «Սերունդներ» խորագրեալ արձակ գրութիւններու երրորդ հատորը:

1996ին Սիտնիի մէջ լոյս կը տեսնէ Վ. Օշականի բանաստեղծութեանց եօթներորդ հատորը՝ «Համբոյր» խորագրով:

1996ին Անթիլիասի մէջ կը հրատարակուի ութերորդ քերթողագիրքը՝ «Ինքնութիւն»:

1996ին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը Վահէ Օշականը կը մեծարէ «Մէսրոպ Մաշտոց» շքանշանով:

1996ին Վահէ Օշական կ'այցելէ Հայաստան եւ Արցախի ու Ստեփանակերտի համալր-սարանին մէջ, աւելի քան երկու ամիս, կը դասախօսէ արեւմտահայ գրականութեան մասին:

1998ին Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ռոպէրթ Քոչարեան Վահէ Օշականը կը պատուէ «Մովսէս Խորենացի» շքանշանով:

2000 Յունիս 30ին Վահէ Օշական կը մահանայ Մ. Նահանգներու մէջ՝ արտի կաթուածի հետեւանքով:



Հայ միւրթը առողջ է եւ արքայադուր, հայ ժողովուրդի արեղծագործական կարողութիւնները կը մնան կենսունակ եւ Ափրոքը կ'արդարապէս իր գոյութեան իմաստը ու առաքելութիւնը:

Վահէ Օշական

ՅԱԻԵՐԺ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԵԼԻՆ

Անբացատրելի է առեղծուածը իրենց ժամանակը լուսաւորած ճշմարիտ մտաւորականներուն ու եզակի արուեստագետներուն: Անոնց բուն հասակն ու կշիռը յստականալ կը սկսի այդ բացառիկ ծնունդներու մա՛նաւանդ անժամանակ կորուստէն ետք, երբ մահը սարսափի ու ամայութեան ահաւոր վիի մը կը բանայ հոգիներուն խորը, ահազանգելով ժամանակաշրջանի մը շիջումը:

Այդպէս կը թուի: Անոնց անժամանակ մեկնումով աւելի կը պարզուի լռութեան անապատին միապաղաղ ահաւորութիւնը եւ կեանքը կարծես թէ կը նահանջէ աներեւոյթ ովասիսներ:

Անկասկած, պահ մը այս հոգեվիճակը ապրեցան բոլոր անոնք՝ որոնք վերջին կէս դարուն, մօտէն կամ հեռէն ապրեցան Վահէ Օշական անուն մարդուն, հայուն, մտաւորականին, արուեստագետին եւ գաղափարապաշտին մտերմութեան մէջ, կամ անոր ստեղծումներուն ու յօդուածներուն թարմութեամբ շնչաւորեցին իրենց օրերը:

Եղա՛ն տարօրէն ինքնանման այս աշխարհի ոլորտներուն մէջ եւ հարցւտացան անոր մշտանորոգ գանձերով: Խանդավառութեան Վահէ Օշականի հետ, միասնաբար բաժնեցին անոր տառապանքներն ու երազները, յուսաբեկումներն ու նորոգ յոյսերը, ոգեւորութեան պարտութիւն չձանչցող գրագետին ամրապնդած գալիքին լոյսով եւ այդ լոյսը՝ յանձնառու արուեստագետի հաւատքն ու վճռակամութիւնը ըրին իրենց մնայուն, անբաժանելի եւ անդաւաճան ընկերը:

Այսպէս էր Վահէ Օշական:
Իրաւամբ եւ ամենայն զօրութեամբ:
Միշտ առաջին դիրքերու վրայ:

Շիմա, քառասուն օրէ ի վեր, լռած է Վահէ Օշական մարդը, սփիւռքահայը, բանաստեղծը, արձակագիրը, գրականագետը, մտաւորականը, հրապարակագիրը, դասախօսը մշակութային ու հանրային գործիչը: Դադրած է բաբախել սիրտը: Ֆիզիքապէս մեր կողքին չէ այլեւս հայ մամուլի էջերուն թէ սրահներու բեմերուն, սպիտակ թուղթի լայնքին թէ ժողովներու ընթացքին մի՛շտ ձառագայթուն, մշտաբորբոք, ինքնատիպ, խիզախ, զարտուղի եւ երբե՛ք չծերացած այս տարօրինակ երիտասարդը, որ իր բացակայութեամբ այսօր կը դառնայ ա՛լ աւելի շեշտուող ներկայութիւն եւ այդպէս ալ պիտի մնայ ու շարունակէ ապրիլ իր գիրով, խօսքով, հաւատքով ու երազներով:

Տեսլապաշտ իր էութեամբ: Այդ էութենէն թելաւորուած տպագիր ու անտիպ հարուստ վաստակով: Յաւերժակա՛ն ներկայութեամբ:

Ապացոյց՝ իր մահուան քառասունքին առիթով հրատարակուած մեր այս յաւելուածը: Իբրեւ նմուշ անոր էջերուն տրուած ստեղծումներն ու իր հարուստ վաստակը մեծարող յօդուածները:

Յարգա՛նք իր վաստակին:

Այս յաւելուածին պատրաստութեան նիւթապէս օժանդակեցին խումբ մը գրասէրներ: **Յնորհակալութիւն**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

21 *Համառօտ Կենսագրութիւն*

31 *Յաւերժ Երիտասարդ սիրելի*

31 *Բովանդակութիւն*

ՎԱՆԷ ՕՇԱԿԱՆ

41 *Յորելեանի մը առիթով*

ՎԱՆԷ ՕՇԱԿԱՆ

221 *Թէլէֆոնը*

ՅԱԿՈՒԲ ԿԱՐԱՊԵՆՅ

251 *Վահէ Օշականի «Ահազանգ»ը*

ՎԱՆԷ ՕՇԱԿԱՆ

281 *Տարեդարձ*

291 *Զաղար*

291 *Հոգեհանգիստ 1*

291 *Հոգեհանգիստ 5*

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՍԵԱՆ

311 *Բանաստեղծը*

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ

331 *Վահէն*

ՎԱՆԷ ՕՇԱԿԱՆ

341 *Օրէնք*

ՌԱՖՅԻ

351 *Երգիծանկար Վահէ Օշականի*

ՎԱՆԷ ՕՇԱԿԱՆ

351 *Մտածումներ*

ՅԱԿՈՒԲ ԿԻԼՈՅԵԱՆ

361 *Կը փնտռէի ներկայութիւնը*

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

371 *Հոգեհանգիստի փոխարէն*

ՎԱՆԷ ՕՇԱԿԱՆ

371 *Անժամանցելի իրաւունքներ*

ՎԱՆԷ ՕՇԱԿԱՆ

61 *Ծառ*

61 *Ինքնութիւն*

71 *Մտածումներ՝ Գրականութեան մասին*

ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

81 *Երկրորդ միջնարարին*

ԳՐԻԳՈՐ ՊԸԼՏԵԱՆ

91 *Ան/իներն՝ Վահէ Օշական*

ՎԱՆԷ ՕՇԱԿԱՆ

111 *Զանի մը նոթ*

«Սեւ Յելերի սերմնացանը»ի մասին

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ

141 *Հասարակ յայտարար*

151 *Արեւմտեան մամուլը՝ Վահէ Օշականի մասին*

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԻՒՐԶՃԵԱՆ

161 *Վահէ Օշականի հետ*

ՎԱՆԷ ՕՇԱԿԱՆ

191 *Յեղափոխութիւն եւ մտաւորականութիւն*

ՌՈՒԶԱՆ ԱՌԱԶԵԼԵԱՆ

201 *«Ես վստահում եմ մեր ժողովրդի մտքի զօրութեանը»*

ՇԱՀԱՆ ԴՈՒՄՏ

211 *Վահէ Օշականը*

ՇՈՒՇԻԿ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

381 *Վահէ Օշական*




ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

391 *Յոգնակիները համադրող եզակին*

ՎԱՆԷ ՕՇԱԿԱՆ

401 *Հաշուեփակ*

Խմբագիր՝ ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



ՅՈՒՐԵԼԵԱՆԻ ՄԵ ԱՌԻԹՈՎ

«Խուճապ» էն Ետք՝ «Փախստականը» (1987) եւ մանաւանդ «Թակարդին շուրջը» (1988) կ'արտայայտեն հայ լուսամտի դասակարգի մը ջղաճնութիւնը, անհամբերութիւնը՝ ի տես թուրքին անդուհանքին եւ հարկւրամեայ առասպելներուն, «միթոս»ներուն շարունակաւող գոյութեան եւ որոնք աչապահներու նման դեռ կը սահմանափակեն հայութեան տեսողութիւնը: Յնցում մը, յեղափոխական արարք մը պէտք էր: «Աւարայր 80»-ը փորձ մըն էր վարդանանց

Սփիւռքահայ գրականութեան վաւերական դէմքերէն հանդիսացող Վահէ Օշականի յիշատակին եւ վաստակին նուիրուած «Ազդակ»-ի սոյն յաւելուածը կը բանանք միշտ ինքնատիպ նոյնիմքն Վահէ Օշականի մէկ էջով՝ «Յորելեանի մը առիթով» խորագրեալ յօդուածաշարքին վերջին հատուածներով:

1994ին, իր գրական գործունէութեան յիսնամեայ յորելեանին մասնակցելու նպատակով՝ «Ասպարէզ» օրաթերթի 1994 - 1995 տարիներու 19 Նոյեմբեր, 3, 10, 17 Դեկտեմբեր եւ 7 Յունուար համարներուն մէջ Վահէ Օշական ստորագրեց իր գրականութիւնը կշռադատող «Յորելեանի մը առիթով» խորագրեալ յօդուածաշարքը, որուն եզրափակիչ վերջին երկու րաժիմները կը հրամցենք ստորեւ:

Թիւնն է եւ մենք՝ հայերս ոչ մէկ ազգէ նուազ ենք այդ մարդին մէջ: Յորելեան մը սքանչելի պատեհութիւն է շեշտելու Սփիւռքեան ինքնութեան այսպէս անուրիութիւնը, ճոխութիւնն ու քալէյտոսքորիք նկարագիրը եւ խորհելու, թէ ո՞րքան բարձր ըլլայ մշակոյթի արեւելիքին, ուր կ'ապրինք իրրեւ համայնք՝ այնքան նպաստաւոր կ'ըլլան մեր վերապրումի կարելիութիւնները: Հայաստանցիք անկարող են այս պարզ իրողութիւնը հասկնալու,

պատերազմի մեծ դերակատարները ազատագրելու րրածոյացած տիպարներու բանտերէն, ուր թիւներ էին գիրենք, հրդդարէն ի վեր, անթիւ սերունդները վարժապետներու, վանականներու եւ պատմագիրներու: Բայց բուն ականը, լարուած ու պատրաստ պայթելու՝ «Օծուճ»-ն էր, որ կողմըն էր նետուած ամէն հայու՝ արթննալու եւ քննելու իր ներսի անձը եւ չափելու, թէ ինք ո՞ր չափով պատրաստ էր տէր կանգնելու իր ազգային սրբութիւններուն (այս սրբութիւն բառը պէտք է որ չակերտներու մէջ աւնուի, որպէսզի մարսելի ըլլայ մեր օրերու արթուն, մշակուած ու նոր միտքերու կողմէ), որ աս պարագային եկեղեցին էր: Դժբախտաբար իր նպատակին չհասաւ գրութիւնը ու հանրութիւնը, ազդուած քանի մը հիւանդ ու տկար միտքերէ՝ իր ուշադրութիւնը դարձուց երկրորդական մանրամասնութիւններու վրայ ու չտեսաւ մեծ պատկերը: Այնպէս որ առասպելը ու միթոսը կը մնան անխախտ ու մեր հայերը, խաղաղ ու անդորր, պիտի սպասեն նոր գրողներու, որ գան պայթեցնեն կապանքները: Իսկ Տէր Աւետիսը չէր գիտեր, թէ ինչ հերոսական էր իր արարքը, ինչ ուժեր գինք կը մղէին առաջ եւ ինչու ինք աւելի հօօր էր, քան երիտասարդները, բայց ոչ՝ աւելի վաւերական: Բայց տէր Աւետիս ուրիշ բան մը գիտէր:

«Տան պաղ ու իլլրտուն լուսութեան մէջ իրեն ալնայէս բուեցաւ, թէ իր առանձնութեան ետին երեք սեւազգեստ երիտասարդներ միշտ պիտի ընկերանային իրեն ու ապահովէին իր բռնակիլին ընթացքը սերունդէ սերունդ: Այն ատեն իրեն հասաւ Մհերին, բռնակիլին լացին մեղմ՝ ձայնը ու այդ վայրկեանին քանալան գիտէր, թէ խորհրդաւոր, անթիւ համբաւներով, լեռներէն, դաշտերէն ու անմարդկային, հսկայ մայրաքաղաքներու արուարձաններէն՝ իր ցեղը կը շարունակէր քալել վտանգաւոր իր ուղին ապագային մէջ:

«Երեցկիկնը լոյսը վառեց»:
Տէր Աւետիսը տիպարն է այն հայուն, որ գիտէ թէ կրօնքին Աստուծո՞մէն եւ մշակոյթին Լուսոսէն աւելի հօօր ուժ մը կայ, կեանքին Ուժը, որ կը դեկավարէ մարդկային ճակատագիրը: Իր պատարագը անոր ըրեր էր, որովհետեւ հայ ժողովուրդին խորագոյն իմաստութեան հետ հաղորդ՝ ինք այդ ուժը միայն կը ճանչնար եւ անոր միայն կը վստահէր: Ահարեկիչները, ազնիւ ու արի մարդիկ՝ անոր գործակալներն էին, ըստ իրեն, եւ անոր էր որ կը յանձնէր իր թողնիկին ու ազգին ապագան:

Երէցկիկնին լոյսը վառելն այ պատահական արարք մը չէ, այլ կը մտնէ մեր ազգային մշակոյթի հոլովոյթին մէջ: «Օծուճ» կ'ուզէ շեշտել, թէ կինն է գլխաւոր դերակատարը մեր մշակոյթի պաշտպանութեան եւ փոխանցման մէջ՝ եկեղեցիին մէջ երեք ահարեկիչներու եւ հաւատացեալներու ճակատումին ընթացքին, միայն պարսկահայ տիկին Սիրվարդն էր, որ իրապէս կուուած էր ազգային սրբութեան պաշտպանութեան համար, եւ հիմա երէցկիկնն է, որ ապագային լոյսը կը վառէր: «Խուճապ»-ին «Փիճ»-ը ազատ բանաստեղծութեան մէջ եւս, մայրն ու աղջիկն են, որ կեանքին ճշմարտութեան համաձայն կը շարժին, մինչ Մարտիրոս աղան կը կառչի աննշան երեւոյթներու ու կը փլի տրամին ճշունմին տակ:

Այսպէս է որ յիսնամեակ մը առիթն է շեշտելու որոշ հիմնական սկզբունքները մեր ազգային ինքնութեան մասին: Ինքնութիւնը մշակոյթի մը ամէնէն յարգի արտադրու-

ու յաճախ հայերէն լեզուն չգիտնալը կամ գիտնալը միակ չափանիշը կը նկատեն մարդու մը հայութեան: Քիչ չէ թիւր սփիւռքահայոց, գլխաւորաբար հին սերունդէն, որոնք նոյն կերպ կը մտածեն: Իրականութեան մէջ, հարցը շատ աւելի բարդ է, քան այդ պարզամտ ըմբռնումը, որովհետեւ ինքնութիւնը յոյսքին մէջ լեզունէն գատ շատ մը ուրիշ բաներով շարունակուի: Այս յորելեանին մասնակցող մտքի մարդոց բազմամշակոյթ ընդթր փաստեց այս հաստատումին ճշդութիւնը:

Մնաց «Արուարձաններ»-ը, լոյս տեսած երեք տարի առաջ, Լոս Անճելըսէն: «Խուճապ»-ն է, որ կը շարունակուի շատ աւելի խորունկէն ու բարձրերէն ու կը պատմէ ողբերգութիւնը մարդուն, որ ինքնութիւնը կը փնտռէ, ապրի կը փորձէ, ճիգ կ'ընէ հասկնալու, թէ ի՞նչ է սա իրականութիւնը, որ թափուեր է չորս կողմը, մարդ էակին շուրջը կը դառնայ, որ հասկնայ անոր ու իր ինչ ըլլալը, բայց կը կորսուի բառերու լարիւրինթոսին մէջ...: Բայց չի յուսահատիր: Դէպի կեանք, կեանքին շուրջ, կեանքէն մահ, մահէն անդին — ամէն ինչ ճամբայ կ'ելլէ, դէպի տեղ մը կ'ուղղուի, սակայն չի կրնար դպնալ ու ատկէ անդին կ'անցնի, սակայն հոն է դեռ, մահէն անդին...: Ահա ինչպէս կ'աւարտի «Արուարձաններ» հատորը:

«Տուն կը մտնէ / դուռ-պատուհան կոնակի վրայ կը բանայ / պարտեզ կ'ելլէ ցատկելով / կը լուսցուի անձրեւին տակ / կը չորցուի հովուի շունչով / մեծ ինամբով կը ծալուի տերեւին մէջ / կը պլլուի լոյսի շողին / կը կծկուի փոշիի մը չոր գիրկը / յետոյ / շարքի կ'անցնի կայուններու ետեւը՝ կ'անշարժանայ: / Հեռուն կեցած / կը դիտեմ»:

Կեանքն է, որ չի մեռնիր, այլ կերպարանք կը փոխէ, ու ետ իր տեղը կ'անցնի ընտելեան մէջ ու հեղինակը, փոխանակ ապրելու իրրեւ մարդ, կը վերածուի գիտակցութեան մը, որ «հեռուն կեցած կը դիտէ»: Ի՞նչ փոխուեցաւ առաջուան վրայ, երբ ապրող, վազող ու սիրող էակ էր ան, մարդոց մէջ մարդ: Ոչինչ — առաջ այ դուրսն էր ու կը դիտէր. հիմակ այ դուրսն է ու կը դիտէ: Ո՞ւր մնաց մահը — չկայ: Այս է ընդթր արուարձանին, հեռուն կայնած, աքսորուած մարդոց մէջ ու ինքզինքէն, անկարող քաղաք մտնելու, մասնակցելու կեանքին: անկարող մեռնելու, անկարող ապրելու:

«...ոչ մեռնիլ կայ ոչ յարութիւն / ոչ ալ կեանք / միայն խորքի պատառ մըն է եղածը՝ հովերուն մէջ երեքուն / առանց բեմի, դերասանի / միայն մեկը եկը տարիքի առած մեկակեաց եւ ամուրի հիւլէներ՝ / վարագոյրի արանքէն դիմացի տան մերկ կիները ցակալով / յետոյ իջնել փողոցի ամբոխներուն իսառնուիլ / բայց չզոյնալ ու չնայիլ ոչ ոքի / քալել անվերջ միլիչեւ հատնին մայրերը ու վերջ գտնեն լամբերը / միլիչեւ որ մարդ էակին կօշիկներուն շիրտուրը միայն մնայ / որոնք անդու շարունակելն նոյն համբէն նոյն մութ ողորկ կարօտով / որ կը յորդի կայարաններու թրաքթորներու միջատներու տրտում արտէն / կը լեցնէ մթնշաղի ուրուագիծը՝ կեանքի անյագ տեւջանքով: / Երթեւեկին ճիշդ մէջտեղը՝ օթոյի մը իտեթ ճչակը աւրուեր է / դարեր ի վեր մէկ ձայնի վրայ կը գարնէ՝ կարելի չէ կեցնել / հոյէն երկիկն՝ անջրպետի զանգուածը կը թրթռայ իր աղմուկէն / սակայն չկայ չկայ ձայն / ժիտրիկն մէջ էրիկ-կնիկ փսփսալով շատ մտերիմ բան մը կ'ըսեն իրարու»:

Օրաթերթի մը էջերը այս քանի մը հարեւանցի նկատողութիւններէն աւելի ծանր գաղափար չեն կրնար տանիլ ու պիտի չողորան գրական պարբերական լուրջ մամուլի մը պակասը Սփիւռքի մէջ, որովհետեւ մեր պայմաններուն մէջ, պակասող բանի մը վրայ ողորալը աւելի մեծ վնաս կը հասցնէ մեր մշակութային ուժին, քան այդ պակասը ինքը: Կը խորհիմ, թէ առողջ կեցուածքը այն է, որ իր տրամադրութեան տակ գտնուած միջոցներով իր նպատակը կ'իրագործէ՝ առանց չեղելու իր հիմնական ծրագրէն: Ամէն ողոր ու կոծ կը տկարացնէ մեզ, անգիտակից կերպով արդարացում մը կը փնտռէ ստեղծագործական ծովութեան: Աշխարհին հոգն է հայութեան ինչեր կը պակսին — մարդիկ մեզ կը դատեն ու կ'արժեւորեն մեր իրագործումներով, ոչ իսկ մեր անցեալի փառքով: Մէկ իմաստով, ամէն ոգեկոչում եւ արդար փառարանում մեր մշակութային գմայելի վաստակին — ըլլայ ատիկա հայ արուեստի գլուխ - գործոցներու ցուցադրութիւն, Կիլիկեան փառաւոր պատմութեան ոգեկոչում, պատմական յաղթանակներու եւ հերոսամարտերու տօնակատարութիւն, Յեղասպանութեան եւ քաղաքական դատի հարցի արծարծում, եւ այլն — աշխարհի իրականութեան, թուլցնել մեր կորովը՝ եթէ պիտի ծառայէ միայն մեզ ու մեր գանգուածները ոգեպարնդելու եւ հպարտութեան զգացում մը արթնցնելու մեր մէջ: Ինծի կը թուի, թէ մեռած անցեալը միայն ներկայի իրականութեան մաս կազմելով, անոր օրէնքներուն յարմարելով կրնայ արժէք ունենալ: Վերջին հաշուով, ինչ կ'արժէ տունի մը պատէն կախուած հոյակապ եւ անգտանելի քամանչան՝ եթէ տան մէջ չկայ մէկը, որ կարենայ գայն ճաշակով նուագել: Անշուշտ գեղեցիկի վայելքը կայ, որ սակայն զգայարաններու հաճոյքէն անդին քիչ անգամ կ'անցնի, եթէ առարկայ մը չէ, չի փոխանցուիր սերունդէ սերունդ՝ եթէ անոր ոգին, անոր անտեսանելի կողմը մաս չի կազմեր մարդոց կեանքին: Թանգարանները, մատենադարանները գմայելի վայրեր են, բայց վայ անոր, որ չի գիտակցիր, թէ հոն դրուած գեղեցկութիւններուն հեղինակները իրեն նման կորսուած, շուարած մարդիկ էին, որոնք սակայն դժգոհ էին իրենց օրուայ գաղափարարանութենէն եւ արուեստէն, իրենց դարու ոգիէն ու նոր տարագներ կը փնտռէին կեանքի իրենց իմացութիւնը արտայայտելու: Երբեմն կը խորհիմ, թէ սխալ է կարծել, թէ «հայ մշակութիւն» ամէն հայու սեփականութիւնն է, այլ՝ միայն անոնց, որոնք կրնան գայն գնահատել, պահպանել, ապրիլ եւ ապրեցնել անոր ոգին: Նոյնն է պարագան «հայ լեզուին»․ ան կը պատկանի անոնց, որոնք գայն կը սիրեն, կը յարգեն, կը ճանչնան եւ գիտեն գործածել: Ուղղաբար սխալները, քերականական թերիւնները, որոնք կը վիտան մեր միութիւններու ձեռնարկներու ազդերուն, թուլցնիկներուն մէջ, կը փաստեն, թէ գանոնք խմբագրողներու մօտ յարգանքն ու սէրը կը պակսին լեզուին հանդէպ: Լեզուն չգիտնալը մեղք չէ անշուշտ, սակայն անոր շիտակ գործածութեան հանդէպ անհոգ ըլլալը՝ մեղք է: Կարելի է ըսել, թէ անոնք տէրն են հայ լեզուին՝ պարզապէս որովհետեւ հայ ծնած են: Չեմ գիտեր...

Այս քիչ մը երկար նախարանը՝ տալու ընդհանուր տրամադրութիւնը, որուն մէջ տեսնելու է գրական յորելեանի մը սարքումը: Կեանքի պարզ ճշմարտութիւններ կան, որոնք պէտք է երբեմն լոյսին բերուին, որպէսզի չմոռցուին հեւ ի հեւ մեր օրերու վազքին ընթացքին: Նախընթաց տողերն ալ այդ նպատակին կը ծառայեն: Կը մնայ հիմա քանի մը ճշդումներ ընել, աւելի յստակացնելու համար ցարդ ըսուածներուն ուրուագիծը: Յորելեանի մը մասին գրուած չորս յօդուածները մաս կը կազմեն յստակ ծրագրի, որ գրական սկզբունքներ ու հարցեր արծարծելն էր:

Անցեալ տարուայ Հոկտեմբեր 2ի յորելեանը այդ պատրուակը տուաւ ինծի, որ պատասխանն էր նաեւ բոլոր անոնց, որոնք գարմանքով, ու քիչ մըն ալ չարութեամբ, հարց կու տային, թէ ինչպէս «անկախ» ճանչցուած մէկը կը յօժարէր «Համագային»-ի նման «կողմ» եւ «պահպանողական» կազմակերպութեան մը հովանիին տակ անցնիլ: Քանի մը սրտակից մտաւորականներէ գատ, միւսները վստահօրէն հաշիւ մը ունէին մաքրելիք — ոմանք Յակոբ Օշականի դէմ անգոր, անոր տղուն վրայ կը թափէին դառնութիւնը, ուրիշներ «Օծում»-ի սրբապղծութեան վրէժը կ'աւնէին, կային որոնք արդիականութեան դէմ իրենց անգոր գայրոյթը կը պարպէին հրապարակաւ, եւ այլն: Տեսակ մը «քաթարսիսի» հոյակապ առիթ՝ երբ մարդիկ քաւութեան նոխազ մը կը գտնեն, որպէսզի իրենք մաքրագործուին իրենք ախտերէն: Այս «միջանկեալ» ակնարկութիւնը անձնական դերանուն եզակի առաջին դէմքին՝ շեշտելու, թէ, ըստ ին, սփիւռքահայ գրողին ինքնութեան մէջ բարոյական յատկանիշը առնուազն

ա՛յնքան կարեւոր է, որքան իմացականը, տաղանդն ու կրթութիւնը:

Ծրագիրը՝ սփիւռքահայ գրագէտին տիպարը եւ անոր դիմագրաւած մտաւորական եւ այլ տաղանդներու բանաձեւելու փորձն էր: Դժուար, նոյնիսկ արուեստական է այս երկուքը յստակօրէն գատորոշելը — ինչ արժէք կը ներկայացնէ գրագէտը իր սկզբունքներէն, իր տաղանդներէն դուրս: Շատ քիչ...: Սփիւռքի գրագէտի առաջին սկզբունքը՝ ամէն բանէ առաջ գրագէտ ըլլալն է, անկախ՝ իր միջավայրի ճաշակէն եւ ակնկալութիւններէն եւ ազգային գաղափարարանութենէն: Այս տեսանկիւնէն՝ մենք ունինք փոքրաթիւ գրագէտներ, որոնք գլուխ կը բռնեն ընկերային ճնշումներուն՝ յանուն մտածումի անկախութեան: Գալիք սերունդը վստահօրէն շատ աւելի ազատ պիտի մտածէ, քան մենք: Եւ կան անոնք, որոնք հաշտ են մարդոց միջինին գրական ըմբռնումներուն հետ, խրախուսիչ ճառեր կը խօսին, շիտակ խմբագրականներ կը գրեն, իրենք իրենց ընկերային պաշտօն մը կու տան, մէկ խօսքով՝ կը պահեն աւանդութիւնը: Այս իմաստով միայն անոնք անփոխարինելի մարդիկ են:

Երկրորդ սկզբունքը՝ տէր կանգնիլն է իր ժառանգութեան, այս պարագային՝ Արեւմտահայ եւ Սփիւռքահայ մշակոյթին: Այս իմաստով էր, որ յորելեանի առիթը յիշուած գիրքերէն ու կատարուած ընթերցումներէն չկար մէկ էջ՝ որուն ներշնչումը, նիւթը կամ թելադրանքը չկապուէր մեր հայ կեանքի գրական ու այլ հարցերուն հետ: Ժառանգութիւն պահելու եւ մշակելու ձեւերը շատ են, սակայն չկայ աւելի լաւը, քան անոր համոզումներուն եւ նոյնիսկ «միթ»երուն ըրիտ հարցադրումի ձեւը: Ինչ թել է որ կը կապէ Արմենակ Հայկունիի պատմութեանքներուն եւ Վազգէն Շուշանեանի վէպերուն հոգեբանական կյիմաները իրարու՝ եթէ ոչ հայութեան յաւիտենական պահանջը սիրոյ եւ գուրգուրանքի, բան մը՝ որուն այնքան հաղորդ են այդ երկու գրողները: Բայց նոյնքան յաւիտենական է պահանջը ժխտելու այդ զգացականութիւնը, մերժելու կրօնքի կամ խիղճին միութարական սփոփանքը՝ յանուն մարդու ինքնանկախութեան եւ յստակատեսութեան, բան մը՝ որուն փորձառութիւնը կայ Սփիւռքի շատ մը գրողներու մօտ, Որբունիէն ու Շահնուրէն մինչեւ Պըլտեան եւ իր ժամանակակիցները:

Ուրիշ սկզբունք՝ մերժումը «երկու չափ երկու կշիռ» հայկական սովորութեան, որ մեր գրականութեան մէջ աւեր կը գործէ մէկ դարէ աւելի եւ հաւանաբար արդիւնք է մեր քաղաքական գաղափարարանութեան, որուն ախտը վարակած է մեր քննադատական մտածողութիւնը: Յորելեանը սքանչելի առիթ էր վերարծարծելու ամբողջ այդ հարցը: Հարցէ աւելի «դատ» մըն է ատիկա, ազատագրումը հայ մտքին՝ քաղաքական եւ լրագրական քարոզչական ախտէն: «Հայկական է՝ պատուական է» կ'ըսէինք, երբ տղայ էինք, սակայն երբ մեծցանք՝ շատերս չանդրադարձանք, թէ արուեստի մէջ ատիկա չի քալեր: Հիմա գիտենք, թէ ո՛չ միայն հայկականը պատուական չէր, այլեւ կը զգանք, թէ ինչո՞ւ գրագէտին մէջ կը ծաղկի նոր, բայց ընկան ընագղ մը, որ գինք կը ձգտի դուրս նետել ազգ յղացքի սահմաններէն դէպի համամարդկային ոլորտները: Այս ձգտումին կը հակադրուի մեր ամբողջ ժողովրդային հոգեբանութիւնը, որ իր մտաւորականներէն կը պահանջէ ազգային յանձնառութիւն մը՝ թէ՛ կեանքի եւ թէ՛ մտածումի մէջ: Հոս է, որ արուեստագէտին ազատ մտածումի իտէալը կը միջամտէ ու կրնայ տեղի տալ ամէն տեսակ դժուարութիւններու, կրօնականէն մինչեւ ընկերային ու քաղաքական հեղինակութիւններու հետ: Սփիւռքի մէջ չկան բանտեր, ոչ ալ գրաքննիչ իշխանութիւններ (առհասարակ...), բայց կայ ուրիշ բան մը, որ կարգապահութիւնն է, որ գրողը ինքը պիտի ստեղծէ ու պարտադրէ իր գործին մէջ: Փայտօրէն, հերոսութիւնը դժուար է հոս, Սփիւռքի մէջ:

Սփիւռքեան գիտակցութեան մը ստեղծումը եւ բանաձեւումը, հայկական այժմէական ինքնութեան մը կերտումը, լեզուական նոր նկարագրի մը փնտռութեանքները, գաղութէ գաղութ նետուելիք մտաւորական կամուրջները, համաշխարհային արուեստի հետ քայլ բռնելու հրամայականը, անցեալի մշակոյթը վերանորոգելու գործը, Հայաստան — Սփիւռք մշակութային առողջ յարաբերութիւններու խնդիրը, Սփիւռքեան մշակութային գարգացումը, Հայ Դատին հետապնդումը եւ Հայաստանին ու Արցախին բերուելիք անհրաժեշտ օգնութիւնը — ահա քանի մը ուղղութիւններ եւս այն աշխատանքէն, որ կը կատարեն մեր օրերու մտաւորականները: Յորելեան մը համագումարի պէս բան մըն է, ու հոն է, որ այսպիսի հարցեր կը բիւրեղանան մարդոց մտքին մէջ:

ԾԱՌ

Կր հարցնեմ -
 երջանկութեան մորացկաններ...
 որքան հեզանք, արհամարհանք
 որ ալ կոտորին գորտ-աչքերու պնակները
 որ ալ դադրի՝ դրոշարշար
 ծիծաղելի սա զուգերու, երեքներու, չորսերու...:


Տառապանքի աշկերտներ...
 որքա՛ն գուր, արգահատանք
 որ ալ դադրի՛ք կարասիներ ըլլալէ
 ու չերկարէք ձեր ասիերը
 վանդակներու ետեւէն
 ամէն քայլի տոմսակ ուզել,
 խղճմտանքէս:

Կեանքը կրծող ուրուականներ...
 քանի՛ ծայտուն, պատռելու եմ
 ձեր վրայէն
 որ ալ դադրիք դերասաններ ըլլալէ,
 կառափիս մէջ ցատկոտող.
 Փշաթելի քանի՞ գօտի
 անցնելու եմ տակաւին,
 որ գամ կեանք
 ձեր շիղերու ժամադրութեան՝
 ու պոռամ -
 կենդանացէ՛ք:

Ու երբ մարդիկ
 կենդանանան
 եւ ետ նետեն
 ծաղրանկար, վաճառական
 սա Աստուծոյ երեսին՝
 վարձու հոգին,
 կենդանանան
 ու հոտ ծծեն -
 ի՛նչ լոռութեամբ կը ծեփեն
 վայրկեաններու թաց ասիերը,
 ի՛նչ կարօտով կը սուզուին
 էջրին մէջէն շեղբի ծիրին,
 ի՛նչ վրէժով կը խոփեն
 արգանդներու խորհուրդները...:

Քայց երբ մարդիկ ընտելացած
 ալ ետ դառնան
 ու պոչ բռնեն,
 դեղագիրներ ձեռքերնին
 մահուան դրան,
 տարիներով, տարիներով,
 ու դէմք կոչեն ծոծրակները
 ու կեանք կոչեն
 ըլլալ բայի խոնարհումը,
 պիտի լսե՞ն
 ու հասկնա՞ն
 սա ձայնը -
 թշուառակա՛ն...
 անցագիր ես ու ոչինչ
 մինչեւ այն օր՝
 երբ՝
 ջրհեղեղէն դուրս ժայթրող
 առաջի՛ն մարդը չըլլաս:
 ... Եղա՞ր -
 ցնցէ ջուրը վրայէդ,
 շունի մը պէս
 ու հարցուր...:

ԻՆՔՆՈՒԹԻՒՆ



Ես սուտ մարդն եմ
 ցուցափեղկի գաճէ արձան
 որուն ոչ որ բարեւ կու տայ
 կարծելով թէ տեղս կայնած
 մէկը կայ
 համեղ պատառ անօթութեան աչքերուն մէջ
 սովը սառած՝ ճերմակ լոյսի ակոսներով
 զիս կը լափեն հազար կողմէն ու կը կլլեն
 բայց չեն գիտեր ինչու քաղցը դեռ կը կրծէ
 ներսը տեղ մը մթին փոսը յատակ չունի
 հուժկու հովը լուռ անդադրում
 կը փչէ:

Անքուն գաղտնի
 էլեքթրոնիք սեւ աչքն եմ ես
 թանգարանին դուռը գոց էր
 իր բացումին առաւօտէն
 կը դիտեմ
 վանտալներու խելառ
 գրոհ գիշերին մէջ
 թաղի լաներ ապակիները կը փշրեն
 ներսը արդեօք գանձեր կա՞ն թէ պարապ է
 ոչինչ երբեք հոն չէ մտած չէ պահուրտած
 ես եմ միայն չոսած պշնած ու շուարուն՝
 հրաշքի մը երեսումին
 կը սպասեմ:

Անտես անյայտ
 անէութիւն մարդն եմ ես
 անպէտ շքեղ մեծդի ոստար
 հսկայ փարոս գիտակցութեան
 լոյս կու տամ
 տիեզերքի հարթավայրը կը շողշողայ
 բայց ես ներսը մութին նստեր՝ ի՞նչպէս գիտնամ
 ուր է լուցկին գարնեմ կեանքին յանկարծ վառի
 կարելի է ես եմ միակ տեսանելին
 բառերու մէջ խանձարուրուած միակ ողջը՝
 խորհրդաւոր կրաֆիթի
 կը գծէ:

Ես լրտեսն եմ
 ըլլալ բայի նրբանցքներուն
 կը սլքտամ զիս կը փնտռեմ
 ո՞վ է ի՞նչ է տեղս անցեր
 ու կ'ապրի
 կեանքս փախեր ինձմէ ծածուկ վանք մտեր է
 ետին թողած անթիւ անդէմ դերանունը
 մարդոց մասին իրար ձեռքէ ի՞նչ կը խլեն

յետոյ չկան՝ կարօտներու գիրկը ինկած մինչ սգաւոր հիւլէները մեծ բակ կու գան՝ ես եմ միայն որ տակաւին կը փնտռեմ:

Անգոյ մարդն եմ որ չէ եղած ու ալ չ'ըլլար բանդագուշակ կրկներեւոյթ՝ ամէն ինչի ձեւը առնող դէպքն պէս ձեր կեանքին մէջ առօք փառօք կը բնակիս կը յօշոտեմ ներսէն դուրսէն ձեզ կը պարպեմ մինչեւ ձեզմէ ուշքի կեղեւ միայն մնայ ու ներս նայիք բան չգտնէք բացի ինձմէ ու փոխանցէք մէկզմէկու՝ մինչեւ հասնիս անմահութեան դարպասները ու հատնիմ:

Ոճրագործն եմ բանտ նետուելիք միա՛կ մարդը փախտակաւ կը թափառիս փողոցներէն ազատ անմեղ բայց ես եմ մարդոց ցեղի աննախընթաց պատուհասի ազդանշան տիւ ու գիշեր թակը լախտը թաղանթներուն ու կոպերուն՝ ճամբայ բացէ՛ք ճշմարտութեան թաքսիներով պիտի սուրամ պիտի անվերջ ձեզ կոխկոտեմ որ արթննաք - ապրիլ չի կայ առանց մահէն անցնելու:

Մարդ էակն եմ վկայ չունիմ նոտար չունիմ բառէ լաստ մը վրան ելեր նշան կ'ընեմ բան մը կ'ըսեմ թէ ինչպէս ես սա մարմնին վարձակալն եմ ու տանտէրը գիրար գրկած դանակ դանկի ողջ ողջ թաղուած վայրկեաններու շաղախին մէջ քար չկտրած՝ գուցէ յոյս կայ կեանքի ծէսը հեղ մը լարել բանալ սիրոյ գաղտագողի ամբարտակը ու փորձ ընել մահը չեկած ապրելու:

Խեղճին մէկն եմ տաշեղ ցեխոտ՝ սեւ սրինգէն ժամանակի՝ գետին ինկած խուլ սուրբերու խօլ շուրջպարէն կոխոտուած ունայնամիտ եպերելի մեղծ թերածին բառատունէն վոնտուած լկտի սիդէխ փօձագալար մեղք ու յանցանք զիս կը հեղձեն եղծ շուշփան եմ ժանգոտ սոնակ խորտակ յեսան նեխ դոժինքի քակոր ժահս աշխարհ բռներ՝ ուրիշ կեղերք ուրիշ կորուստ չունիմ ես:

Ես Աստուածն եմ որ պիտի գայ ստեղծելու լոյսի շողը խաւարին մէջ փսփսալու անցաբառը խեղճ մարդոց ծուղակ ինկեր՝ ապուշապուշ կը ծիծաղիք յոյսի յիմար թոուցիկներ բռներ կեցեր դաշտերու մէջ տգիտութեան տառապանքի մրրիկներու ցաւի ճիչէն ա՛լ խուլցեր եմ արդէն կոյր եմ լեզուս շատուց բռնուած է - պատգամ չունիմ խրատ չունիմ՝ ես աւ եմ:

ՄՏԱԾ ՈՒՄՆԵՐ՝ ԳՐԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Երբ ետ կը նայինք աւարտող հարիւր տարիներուն, արդար հպարտութեան զգացում մը կը համակէ մեզ: Այդքան տենդագին ու բարձրորակ արուեստ՝ սա պզտիկ ազգին կողմէ...: Վարուժանի, Թեքեանի, Տերեանի ու Գարենցի տաղանդներուն վկայութիւնը հայ միտքը միջազգային արուեստի մակարդակին կը հանէ, մինչ Օշականի վէպով հայ գրական տաղանդը աշխարհի պատմութեան մեծագոյններուն հետ կրնայ մրցիլ:

Ես ինքզինքս կը դաւանիմ յանձնառու գրող, մտաւորական. մէկը՝ որ բարոյական պարտաւորութիւններ ունի, որպէսզի հայութիւնը տեւէ եւ իմ գործս կարդացողներ ըլլան ամուսնացն: Եթէ ես չպայքարիմ, որ հայութիւնը դիմանայ աշխարհի երեսին եւ հայերէն լեզուն կորսուի 50- 60 տարի վերջը, ես ո՞ր կ'ըլլամ: Անմահութեան ախորժակը շատ սուր է մարդուն մէջ:

Բանաստեղծի մը կեանքին ընկերային ու ֆիզիքական մասը, իր իսկ աչքին՝ անհամեմատօրէն նուազ կարեւորութիւն ունի, քան իր գործը, որ միակ արժէքներկայացնող իրականութիւնն է: Ճիշդ է. այս իրողութիւնը Սփիւռքի գրագետին համար եւս, միայն սա տարբերութեամբ, որ հայ ծնիլը ինքնին արդէն իւրայատուկ, եղերական ճակատագիր մըն է, որ կը բարդուի իր անձնական ճակատագրին վրայ՝ ստեղծելու համար այն եզակեան էակը, որ ըստ իս՝ բանաստեղծութեան հիմնական բնոյթը այնպէս մը բառերը դասաւորել է, որ յանկարծական մտերմութիւններ ստեղծուին, պատկերներ ու բառեր, որոնք իրար չեն ձանջցած տակաւին ու յանկարծ կայարանի մը մէջ կը հանդիպին իրարու, նստարանի մը վրայ նստած են քով քովի... այդ յանկարծական տեսարանէն բաներ կը ծագին, որ կը տանին դէպի անտարագելի միջոցներ ու մտածումներ, որոնք արձակով երբեք չես կրնար տալ:

Որքան ետ կը նայիմ մեր մշակոյթին, մեր ժողովուրդի պատմութեան մռայլ օրերուն վրայ, այնքան կը զգամ, որ ասիկա նոր չէ: Եւ մեր ժողովուրդին մէջ կան զօրաւոր ակեր: Մենք գաղտնի գէնքեր ունինք: Միք մըն ալ այդ է, որ կ'երթա՛նք կոր...: Ե՛րբ մենք, հոս մնալու դատապարտուած ենք գրեթէ: Եայր դժուարութիւններ ունի, ճիշդ է. թիւը կը նուազի, հողը ձեռքէն կ'երթայ, ճիշդ է: Սակայն ձեռով մը ես իմ վրաս կը չափեմ հայութիւնը, որ ծունկի պիտի չգայ: Եթէ իմ մէջս կեանք կայ, հայութեան մէջ ալ կայ: Ասիկա փաստելու պէտք չկայ. այս բաները կը զգաս, գիտես:

Ես լաւատես մարդ եմ խառնուածքով եւ չեմ տեսներ ի՛նչ պատճառ կայ յուսահատելու: Այո, գործեր ծուռ կ'երթան աշխարհի վրայ, բայց ուրախութիւն մը ունիմ մէջս, որ գրելու աքթին մէջ է նաեւ: Իմ բոլոր գրածներս մռայլ բաներ են, բայց վերջին վայրկեանին միշտ լոյս մը կը պայթի հոն, միշտ յոյս մը կը քալէ եւ ես երբեք չեմ ընդունիր պարտուիլս: Կը մերժեմ, որ ծունկի բերուած եմ: Եւ որքան ատեն որ մէջս կեանք կայ, ուժ կայ, ես աւելի զօրաւոր եմ, քան բոլոր ժխտական հարուածները:

ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋՆԱՐԱՐԻՆ...

Քանի մը կողմեր ունի ողորացեալ Վահէ Օշական, — բանաստեղծ, վիպագիր, թատերագիր, հրապարակագիր, որոնք անուակն ծանօթ են որոշ խաւի մը, խօսուած են, չափով մը արժեւորուած: Ան ունի եւ անծանօթ կողմ մը, որ ո՛չ այսօրեան ընթերցողին ծանօթ է, ոչ ալ մօտաւոր ժամանակներուն լրիւ պիտի յայտնուի, — նամակագիրը:

Մեր գրականութեան արշալոյսէն ի վեր, թերեւս չէ եղած գրող մը, որ իրեն չափ նամակ գրած ըլլայ, ըստ իր մէկ խոստովանութեան՝ օրական երեք հատ եւ տասնամեակներու վրայ, բիւրաւոր նամակներ, որոնց խողովակով վաղը յաւելածական ղիմագլխով մը պիտի ներկայանայ Վահէ Օշական, իր ժամանակին իրադարձութիւնները ու գործօն տարրերէն շատերը անողոք բաւերով մերկացնող «անողոքելի»ներէն մէկը:

Ա կնարկ եցին ք այս մասին, որովհետեւ յիշատակի այս քանի մը տողերը ունին նամակային հէնք մը, մեզի գործած հարիւրաւոր թուղթերէն վերջին մէկ-երկուքին սրբաւոր ընոյթը: Մէկուն հիմնական նիւթը կը վերաբերէր հօրը նամակակնիին, որուն մեկ ենասութիւնը խոստացած էր ստանձնել ծանօթ մեկենաս Յարութիւն Սիմոնեան, իսկ յաջորդին մէջ կը յայտնէր, թէ միաժամանակ կ'աշխատի երեք գործերու վրայ, մէկը Արցախին նուիրուած Ալլոյմը, կրտսեր որդւոյն աշխատակցութեամբ: Յաւոք, ո՛չ հօրը նամականին վերջնական փուլին մէջ մտաւ, ոչ ալ իր երեք գործերը հասան իրենց աւարտին:

Փայլուն տրամադրութեան մէջ չէի, երբ յիշեալ նամականին խմբագրելու առաջարկը ինծի կ'ընէր, ոչ ալ հայրենական, մշակութային ու գրական իր միւս հետաքրքրութիւններուն ու հարցումներուն պատասխանելու սիրտ մնացած էր ինծի, ուստի հեռագրական ոճով երկտող մը փութացուցի իրեն, թէ շուտով կը ստանայ վերջին նամակներուն պատասխանը: Ու գրուեցաւ այդ նամակը, երկարաչունը բան մը, որմէ ետք իմացանք, որ հիւանդանոց ինկած է: Մեր անձկութիւնը փարատեց Ամմանէն հասած հեռագրային հաղորդակցութիւն մը, ըստ որուն՝ վերադարձած է տուն: Ի յուր այդ ամբիջ տեղեկութեան գրուեցաւ տուն դարձրող ըզնոյնող ու ամբողջական ապաքինման մաղթանքներով լի երկրորդ նամակ մը, Յունիս 29 թուակիր, գոր յաջորդ օրը թղթատարին յանձնելէ ետք, «Ազդակ» օրաթերթին մէջ կարդացի Վարուժան Խտրչեանի բեմադրած Յակոբ Օշականի «Մինչեւ ո՛ւր» թատերախաղին կապուած յայտարարութիւն մը, թէ այդ գիշեր վերջին անգամ ըլլալով պիտի ներկայացուի անիկա:

«Մինչեւ ո՛ւր»ի հանդիսաւոր օրուան բեմադրութեան հանդիսատես եղած էի թէեւ, բայց այդ պահուն անդրադարձայ իսկոյն, որ անոր մասին որեւէ յիշատակութիւն չէի ըրած Վահէ Օշականին գրուած վերջին նամակներուն մէջ եւ ինք, Վահէ Օշական, ինչպէս յաճախ կը պատահէր նման առիթներու, պիտի ուզէր իմանալ տպաւորութիւնս: Այդ անդրադարձը պատճառ դարձաւ, որ կրկին անգամ ներկայ ըլլամ ու տրամադրութիւն մը բորբոքի մէջս: Առաջարկեցի Գալէին, որ ընկերանայ ինծի: Ուրախացաւ: Թատերասրահի մուտքին

ականատես եղայ «Հայագիտական»ի մեր ուսանողուհիներէն Հուրիի աճապարանքին: Ուրախացայ:

Աւելորդ է ըսել, որ ես գոց գիտէի «Մինչեւ ո՛ւր»ը, որ ըստ իս, Օշականի տասնհինգ թատերախաղերէն ամէնէն ուժեղն էր, իր կենդանի տիպարներով ու ընդգրկած հոգեվիճակներու բարդութեամբ, բախումներու կրքոտութեամբ, թէ ապրումներու քնարականութեամբ: Ի յուր Միկա Արանի հեղումներու կամ կրքոտ փայտակումներուն, գոքանչին անողոք որակումներուն, կասիայի աստուածային վերաբերումներուն, Արծրունիի գուսպ կեցուածքին ու միւսներուն աղօթքներուն ու լրբութիւններուն, մտքիս մէջ կը ձեւաւորուէր յաջորդ օրուան գրուելիք նամակը...

Քանի մը օր առաջ, բեմադրիչ Վարուժան Խտրչեանի, համագաղնական Մարտիկ Տէմիրճեանի հետ պատասխանած էինք «Մինչեւ ո՛ւր»ի մասին Սոնիա Քրիշճեանի պատրաստած հարցումներուն, որոնք ձայնասփռուած էին «Վանայ Ձայն»-ին:

Երկրորդ միջնարարին, թիկունքիս շարքէն մանկամարդ աղջիկ մը, ձայնասփիւռային մեր աչք ելոյթին քանի մը բաւով անդրադառնալէ ետք, դողողուն ձայնով մը յարեց:

— Այսօր մեռած է Վահէ Օշականը:

— Ի՞նչ...
Մանկամարդ աղջիկը հաստատեց բոթը:

Ձեռքս տարի արդէն սիրտի չնմանող սիրտիս: Կարծես երկինքը փուլ եկաւ վրաս:

Մէկէն առանձնութիւն մը գգացի. առանձնութեան այն տեսակը, որ քանի մը անգամ կրկնուած է մէջս, սրտակիցներու անդարձ մեկնումներու ատեն:

Միայն հօրը ճամբով սիրելի չէր ինծի Վահէ Օշական, սիրելի էր մանաւանդ իր ստեղծած արժէքներով: Ովկիանոսներու առաջացուցած անջրպետը քիչ նշանակութիւն ունէր մեզի համար: Իր մնայուն ներկայութեամբ...

Հակառակ 78 տարեկան հասակին, կանուխ մեռաւ Վահէ Օշական, շատ կանուխ, որովհետեւ ո՛չ ոք գգաց իր ծերութիւնը, այսինքն՝ ընաւ չծերացաւ, այսինքն՝ միշտ աշխուժ մնաց, գործօն, ամէնօրեայ ներկայութիւն, մամուլ թէ սրահներու մեր բեմերուն միշտ ըսելիք ունեցող եւ ըսելիքը համոզումով ու համարումով միաձուլած ուժ, ի մասին մշակութային ու ազգային ընդհանրութիւններուն մէջ բարձրացած մեր հրատապ հարցերուն, կամ գինք անհատապէս ճարակած ու ճարակող խնդիրներուն ճշմարտութեան:

Կանուխ մեռաւ Վահէ Օշական, շատ կանուխ... Տարիներ առաջ, իր նամակներէն մէկուն մէջ կը գրէր. «Ամէն առտու թերթերու մահագոյներուն մէջ անունս կը փնտռեմ ու երբ չեմ գտներ, կ'ուրախանամ...»: Երանի թէ քանի մը տարի եւս նոյնը կարենար ընել ու ըսել, ուրախանար ու ուրախացնէր մեզ... Երանի՛...



Ձախտն աչ՝ Տեր եւ տիկին Անայիս եւ Վահէ Օշական ու Անահիտ Օշական - Ոսկերիչեան

ԱՆ/ԻՆՔՆ՝ ՎԱՀԻ ՕՇԱԿԱՆ



Ինքնածին, ինքնաստեղծ:

Այսպէս կը թուի Վահէ Օշականի բանաստեղծութիւնը, հիմա որ անիկա, կէս դարու երկայնքին, իրագործած է ինքզինք յիտմին:


Գիտեմ՝ ոչ մէկ գրական արտադրութիւն, արուեստի ոչ մէկ գործ կը ծնի ժամանակէն ու շրջարկէն բոլորովին գերծ, պարապ ոլորտի մը մէջ, ի չգոյ՛է, ինչպէս կ'ըսեն: Աւանդութիւն, ժառանգութիւն, անցեալ, այն բոլորը, որոնք կամայակամայ կը կանխեն մեզ, կը հետեւին մեզի՝ ինչպէս կարգը անկարգութեան: Որքան ալ անհերքելի ըլլայ այս մտածումը, լափալիսեան ճշմարտութիւն մը, նոյնքան ալ իրողութիւն է որ արուեստի ամէն գործ կը ձգտի իր ժամանակը սկսելու եւ գայն պարտադրելու տեսակ մը բացարձակ արարքով: Արդիականութեան խորունկ ձգտումներէն մին է ասիկա, որ արուեստի գործը կը տեղաւորէ ոչ թէ շարունակականութեան մը մէջ, այլ հատումի մը: Բանաստեղծական երկ մը պարտի սկսիլ ինքզինք, հաստատէ իր տարածութիւնը՝ իրրեւ աննախադէպ եւ անվերածելի դէպք:

Ի հարկէ բանասէր ու գրականութեան պատմիչ մ'իշտ ալ կը ջանան եւ որոշ չափով կը յաջողին նախընթացները գտնել, ինչ որ կը կոչեն ազդեցութիւն, երբեմն ալ միջգրութեանական կապ, եւ կը գետեղեն երկը աւելի բնականոն ու մարդկային միջոցին մէջ, որ պատմութիւն կոչուածն է:

Վահէ Օշականի բանաստեղծութիւնը «Պատուհան»էն սկսեալ (1956), գրեթէ անընդմէջ թափով մը, մինչեւ «Ինքնութիւն» (1966), իր այլազան ուղղութիւններով ճիւղաւորումներու՝ մէջ, կը պարզէ ինքզինք իրրեւ ստեղծում մը, որ հեռուէն ու մօտէն ոչ մէկ կապ ունի մեր գրական աւանդութեան հետ: Պէտք չկայ պարագծելու այս արտադրութեան շրջարկը՝ յիսունական-վաթսունական թուականներու հայ բանաստեղծութիւնը, Սփիւռքի եւ Հայաստանի մէջ, հաստատելու համար այս անմասնութիւնը ժամանակէն: Այն օրերուն՝ երբ մեր բանաստեղծութեան փարիզեան թեւը մտած է աւելի խաղաղ ջուրերու մէջ եւ իմացապաշտ, բոստիս քիչ մը օթեկ, հետաքրքրութիւններու կը յանձնէ ինքզինք «Անդաստան»ի մէջ, այն օրերուն՝ երբ միջին սերունդ կոչուածը կը յամենայ թէքէեանի ստուերին ու ազգային երազներու հովանիին, Վահէ Օշական, հեշտագին «հսկայ րարկութեամբ» մը եւ «կրակ ու բոց երեւակայութեամբ» մը, ինչպէս կը խոստովանի տեղ մը, կը ձեռնարկէ բանաստեղծական աշխարհի մը, այսինքն՝ լեզուի մը ստեղծումին: Տեղը չէ այստեղ ողբկոչելու հեզանքը, ծիծաղը, երբեմն սուր ու վարնոց քննադատութիւնը, ներառեալ վեհապանծ լուսթիւնը, որով ընդունուեցան «Քաղաք»ը, «Քառուղի»ն, «Խուճապ»ը եւ Օշականի միւս երկերը, մէկը միւսէն գայթակղիչ եւ անպատկառ՝ մեր պաշտօնական ու անպաշտօն քննադատներուն կողմէ: Երեւոյթը դադրած է այլեւս որեւէ շահեկանութիւն ներկայացնելէ, նոյնիսկ գրականութեան պատմութեան համար, քանի որ շատոնց աղբանոց տարուած է արդէն առտնին քննադատութիւնը, իր չմտածուածքով:

Բայց կը մնայ Վ. Օշականի բանաստեղծութիւնը:

Սրբապղծութիւն չէ խօսիլ այսօր «բանաստեղծութեան» մասին, գիրքերու, էջերու առթիւ, որոնք սկիզբէն եւ այնքան տարամբերօրէն կը հակադրուին բանաստեղծականի ըմբռնումներուն, կաղապարներուն, շահարկումներուն: Ո՛չ տաղաչափեալ, ո՛չ արձակունակ, տարուած ռիթմի գորաւոր պարկէ մը, ինչ որ բանաստեղծութիւն կը կոչեմ այստեղ՝ ռիսքը կ'առնէ անբանաստեղծականին: Բանաստեղծութիւն անբանաստեղծականի, երբ մեր գրեթէ ամբողջ աւանդութիւնը, Սարաֆեան ու Չարենց ներառեալ, կը ճգնի բանաստեղծութեան հարցին բերել տաղաչափական լուծումներ, հերքելով արձակը, թէեւ սնանելով անկէ, գաղտնօրէն պիտի ըսէի, դաշնաւորելով բրտութիւնը, անդաշնութիւնն ու ահր, արուեստին վերագրելով «հովուերգական» պաշտօն մը: Վահէ Օշական շատ լաւ գիտէր ասիկա, երբ իր առաջին գրքին առթիւ կը գրէր, որ անիկա կունակ կը դարձնէր «1920էն



մինչեւ 1950ական թուականները երկարող գրական ճաշակին» եւ «ազգականական կապ» չունէր գրական աւանդութեան հետ: «Ոչ հայ, ոչ ալ օտար — գուտ ինքնեկ, անինքնութիւն, առանձին եւ արկածախնդիր՝ Սփիւռքն է»(1): Պիտի չմեկնարանեմ այս խիտ տարագր, կ'ուզեմ միայն մատնանշել ձեռնարկին գիտակից հանգամանքը: Օշականի բանաստեղծութիւնը կը ձգտի անինքնութեան մը, այսինքն՝ Սփիւռքին, եւ կը տարագուի գրական աւանդութեանէն իրրեւ հեռու ստեղծում: Այս ամբողջը կրնայ ընդարձակուիլ, ծաւալուիլ, ենթարկուիլ մտածման արարքի մը, գոր Վ. Օշականի աշխարհը հնարաւոր կը դարձնէ արդէն:

Թերեւս յարակարծիք նկատուի ասիկա բանաստեղծի մը մօտ, որ նոյն ատեն քննադատի աշխատանք մըն ալ տարած է: «Մեր բանաստեղծները», «Տեսանկիւն»ները, «Լուսարձակ»ները, «Գիրքեր եւ դէմքեր»ը, «Ազգակ»ի մէջ սկսուած, շարունակուած «Յառաջ»ի եւ «Ասպարէզ»ի մէջ, տարիներու երկայնքին կազմած են ընդարձակ շարքեր, աւելի ծաւալուն ուսումնասիրութիւններու կողքին: Ատոնք փաստը կը բերեն ընթերցող, դատող Օշականի մը, որ շատ լաւ գիտէ աւանդութիւն կոչուածը, ինչպէս որ ծանօթ է հայ բանաստեղծութեան ընթացիկ արտադրութեան: Չեմ կրնար խօսիլ այստեղ այդ քննադատութեան տեսակարար կշիռին մասին, քանի որ ատիկա աւելի կեցուածք է գրականութեան կենդանի հոյովոյթին առջեւ, քան թէ գրական ատաղձի մտածում (քննադատութիւնը ինձի համար ուրիշ բան չէ): Գաղտնիք ալ չեն վերապահութիւններս այդ քննադատութեան տպաւորապաշտ հիմունքներուն հանդէպ, որոնք շահեկան են միայն այն չափով, որ կու գան ասպարէզին ծանօթ գրողէն եւ ոչ դասատու պաշտօնեայէն: Ուրեմն՝ Վ. Օշականի բանաստեղծութիւնը չի գար անգիտութեանէ, ինչպէս կը սիրէին փսփոսալ շատեր, ատենին, այնքան վստահ իրենց սովորովի գիտելիքներուն, այլ կը ըլլի պատկերամարտ կեցուածքէն բանաստեղծի մը, որ կը դիմէ դէպի «անինքնութիւն»: Ըսեր եմ ատենին, անինքնութիւնը, ի միջի այլոց, մերժումն է գրական երկի կամ որեւէ դիրքի որ ինքնութիւնը կը դարձնէ հեռանրկար: այստեղ՝ բանաստեղծութեան ինքնութիւնը: Բանաստեղծ Օշական բոլորէս լաւ գիտէր, որ բանաստեղծութիւնը ինքնութիւն չունի: վա՛յ անոր, որ կը հաւատայ անոր ինքնութեան, անոր պատկերին ու դիմակին, որովհետեւ դիմակը,

դիցարանական կորկոնին պէս, կը քարացնէ բանաստեղծը: Կը բաւէ կարդալ իր վերջին հատորին՝ «Ինքնուրուի» գրքի համանուն քերթուածը:

Ինքնածին ըսի, ես ալ գուցէ յարակարծարար, անտեսելով շատ տարածուած այն կարծիքը, թէ Վ. Օշական, բանաստեղծութեան առասպելագերծումի իր պատկերամարտին մէջ որդեգրած է խօսակցական արեւմտահայերէն մը, որ կը հակադրէ գրականին: Այս կարծիքը կը բխի խորունկ, հիմնական անհասկացողութենէ մը, աւելի ճիշդ՝ թիւրմարունումէ մը, ինչ կը վերաբերի արուեստի գործի լեզուին: Անշուշտ, Օշականի քերթուածները մեզի կը բերեն լեզու մը, գորարեւմտահայոց գրական ականդուրութիւնը շքեղօրէն արտաքսած է բանաստեղծութենէն (ոչ միայն հոնկէ, բայց այդ մասին աւելի ուշ): Առօրեայ բարբառէն որոշ խաւի մը ներկայութիւնը, արձակի որոշ շերտ մը, մանաւանդ իրական կոչուած աշխարհի խիտ ներկայութիւն մը յօրինած են առասպելի խօսակցական լեզուի մը: Կարծէք թէ արուեստագէտին աշխատանքը ուրիշ բան չէ եղած, եթէ ոչ արդէն տուեալը մարդոց բերնէն հանել ու տանիլ թուղթին: Խարկանք անշուշտ, որուն գոհը եղան ո՛չ միայն չարամիտ քննադատներու փաղանգը, այլեւ՝ Օշականի երկերուն «սիրահարներէն» ոմանք:

Օշականի լեզուն ստեղծում մըն է: Այսինքն՝ որքան ալ կրէ իր մէջ խօսակցական բարբառին ծանրութիւնը, չի դադարիր արդիւնքը ըլլալէ բանաստեղծական այլափոխութեան մը, այսինքն՝ փոխարեքականացման մեծ աշխատանքին: Ան որ կարդացած է «Քաղաք»ի, «Ահագանգ»ի, «Խուճապ»ի ընդարձակ քերթուածները (ասոնցմէ ամէն մէկը ընդարձակ քերթուածի ինդրի լուծման շահեկան լուծումներ ունին), կը գտնուի ոչ թէ խօսակցական, բանաւոր ու բերանացի բարբառի մը առջեւ, այլ ձայնական դրութեան մը, որուն մէջ այնքան մեծ դեր ունին ձայնը, ռիթմը, շեշտը, հեւքը, կսկորդը, թութքը, այսինքն՝ մարմինը: Վ. Օշականի երկարաչունչ նախադասութիւնները, իրենց միջանկեալներով, իրենց յաճախ կորսուող շարահիւսութեամբ ու գլխապտոյտ տուող ճիւղաւորումներով, քերթուածը կը վերածեն քաղող, ապրող, հեւացող, խոստովանող, պուլացող, ահագանգող մերթ ողորդակ, մերթ ըմբոստ ձայնի մը, չէզոք, անանուն, անենթակայ: Հոն Եսը դիմակ մըն է, ինչպէս վարատական դիրքեր են բոլոր յատկանշումները: Ձայնի մը դիւցազներգութիւնն է կարծէք, ուր գուհիկն ու վերամբարձը, սովորականն ու վսեմը, փողոցային բառն ու բառարանային հոնչը կը հրմշտկեն իրար, մերթ տարբերային, մերթ մեքենական, բայց նոյն ատեն ռիթմաւոր շարժումի մը մէջ, որ Վ. Օշականի հետ խուճապ պիտի կոչեմ: Խուճապը թեմա չէ միայն, այլեւ ձեւ: Վարուժանի կիրթ ու հոգեւորական, Սարաֆեանի անկայուն ու հակադրական, Չարենցի կրկնողական ու տենդոտ տողերուն դիմաց Օշական կը դնէ ամբողջի մը նուաճումին ձգտող խայտարղէտ, խառն, անմիաւոր, իր կեդրոնի կորուստէն տեւականապէս վտանգուած խօսք մը («Քառուղի»ի Կոմիտասը օշականեան հանդիսաւորումին կերպերէն մին է. ուրիշներ ալ կան՝ Մաշտոց/Կորիւն, Նարեկացի, Յ. Օշական):

Խօսք ու գիր՝ երկուքն ալ կան ձայնին մէջ, ինչպէս բանաստեղծի մը մօտ, որուն առասպելին Օշական յատկացուցած է իր «Համբոյրը». նկատի ունիմ Գր. Նարեկացին եւ ասոր «Մատեան Ողորդութեան»ը: Որքան ալ տարօրինակ թուի բաղդատութիւնը, թերեւս նաեւ սրբապիղծ, չի դադարիր, ըստ իս, յուսարանիչ ըլլալէ Վ. Օշականի գրութեան հիմնական ձգտումներէն մէկուն, անոր որ պիտի մասնաւորուէր «Պատարագ»ով եւ որմէ հատուածներ միայն տպուեցան մամուլին մէջ: Սուրբին ու սրբազանին հետ աւերչութիւն մը, բայց շրջուած, կատարուող նորէն ձայնականի միջոցներով եւ գիրին հանդէպ տեսակ մը խորունկ վերապահութեամբ ու առքով:

Փորձիչ է արտագրելը եւ արտագրուածին կից լսելը, իր ամբողջ սարքուածքով, նարեկեան հակամոտէլը.

«Խեղճին մէկն եմ
տաշեղ ցեխոտ՝ սեւ սրինգէն
ժամանակի՝ գետին ինկած
խուլ սուրբերու խօլ շուրջպարէն
կոխտուած
ունայնամիտ եպերելի մեղծ բերածին
բառատունէն վնտուած լկտի սիդելի»

օճագալար մեղք ու յանցանք զիս կը հեղձեն
եղծ շուշփան եմ ժանգոտ սունակ խորտակ յեսան
նեխ դոժիկի քակոր ժահս աշխարհ բոներ
ուրիշ կեղերջ ուրիշ կորուստ
չունիմ ես:

Ես Աստուածն եմ ...»
(«Ինքնուրուի»)

Հասկնալի է, որ Օշական եղաւ մեր մէջ ան, որ Սարաֆեանէն ետք, բանաստեղծութեան ինդիւրը, որ սոսկապէս արտայայտութեան հարց մը չէ, դրաւ եւ լուծեց որոշ ձեւով մը, ի՛ր ձեւով: Գտաւ իր լեզուն, իր ձայնը, իր ձայնական շարահիւսութիւնը, պիտի ըսէի: Պայմանը եւ հեռանկարը ամէն բանաստեղծի: Ասիկա որոնում, այսինքն՝ պեղում ու ստեղծում ենթադրող գործողութիւն մըն է, բայց երբեք «ինքնանրնպատակ», ինչպէս կ'ըսեն, կարծէք թէ լեզուն անկախ ըլլար աշխարհէն, նշանակութենէն, պարապէն, անհեթեթէն կամ Աստուծմէ: Եւ ինչպէս վերը կը թելադրուէր, բանաստեղծութեան ինդիւրը կը մնայ կապուած հիմնական եզրի մը, տեղի մը, երեւակայական եւ իրական, որ Սփիւռքն է: Ինչ ալ ըլլան Օշականի այլազան տարագումները, նոյնիսկ «հակասութիւնները», յանկարծակի շրջադարձները, տարիներու երկայնքին, իր բանաստեղծութիւնը կ'ուզէ սեւեռել այն անջրպետը, որ կը բաժնէ եւ կը միացնէ հայն ու օտարը, կամ կ'ուզէ «ձեւի բերել» քաղաքակրթական քառսր եւ «անհեթեթին մէջ օրէնք մը, գոնէ կեդրոններ հաստատել»:

Չեմ գիտեր, կարելի՞ պիտի ըլլայ նոյնը ըսել իր արձակին մասին, որմէ նմոյշ պատմուածքներ յույս տեսան հատորով («Փախստականը», «Թակարդին շուրջ», «Սերունդներ») եւ վէպեր ալ թերթօնով («Պատուաստը», «Վիթումը»): Ատոնք մտահոգութիւններ կը մատնեն եւ կը ձեւաւորեն հարցեր, որոնք կան արդէն, աւելի անձնականացուած ձեւով, բանաստեղծութեան մէջ: Արդ՝ արձակին հետ Օշականի յարաբերութիւնը բանաստեղծութեան մէջ (բանաստեղծութիւնը միշտ կայ արձակով) բանաստեղծական կադապարները անկայունացնող, վտանգող ու զանոնք խորտակող ազդակ մըն է եւ ուրեմն՝ կենարար կը մնայ քերթուածի մը համար: Իսկ գեղարուեստական արձակի մէջ, ուր պատում, դրուագ, հերոս, շրջապատ, գաղափարային համակարգ կը տիրեն, Վ. Օշական կը թուի նուազ տէր կայուածին: Այդ արձակը բանաստեղծական արձակ մը չէ անշուշտ, բարբառատարար, չէ ալ սակայն բոլորովին ազատ բանաստեղծի մը արձակի պատկերացումէն, այն՝ որ արձակը կը նկատէ սանձարձակ ազատութեան գետինը կամ կ'անտեսէ գայն կարելի դարձնող այլապէս բարդ հարցերը: Վերջին տարիներուն սկսուած, բայց տակաւին անտիպ մնացող վիպաշարքը արդեօք պիտի յաջողի՞ պարտադրել գեղարուեստական արձակի ոճ մը: Անկարելի չէ:

Այդ արձակը միշտ կը մնայ լծորդուած բանաստեղծութեան ինդրին, ինչ ալ ըլլան Վ. Օշականի տուած բացատրութիւնները: Բանաստեղծութիւնը լեզուին համար կամ լեզուն բանաստեղծութեան համար ռազմավարական տեղ մըն է, այն չափով որ բանաստեղծութիւնը լեզու պիտի ստեղծէ արձակէն, թէ՛ իր խուսափելին, թէ՛ ալ իր տարփելին: Այս խաղին, այս երթուղարձին, այս փախուստ-հանդիպումին մէջ, կը խորհիմ, Վ. Օշական կը հիմնէ իր խօսքը: Բայց թէ ո՞ր չափով հասու ենք, պատրաստ ենք գայն ընդունելու, մեր մէջ տանելու, ատով հարստանալու, ապրելու, պիտի ըսէր ինք, ատիկա, ինչպէս շատ մը ուրիշ բաներ, կախում ունի մեր կարողութենէն՝ Վ. Օշականի վաստակը գետեղելու մեր գրականութեան ու մտքի հորիզոնին:

Գ. ՊՐԵՍԵԱՆ

(1) «Յոբելեանի մը առիթով», յօդուածաշարք՝ տպուած «Ասպարէզ»ի մէջ, ապա գրքոյկով, հրատ. «Մաշտոց» Մատենաշարի, Պէյրուէր, 1995, էջ 5:



«ԱԵՒ ՑԵԼԵՐԻ ԱԵՐԱՆԱՅԱԿԸ»Ի ՄԱՍԻՆ

ՔԱՆԻ ՄԸ ՆՈԹ

Այս 2400 բառանոց կարճ գրությունը երկու մակարդակի վրայ դրուած է, հակառակ անոր, որ մէկ պարզ պատմութիւն կը պատմէ եւ որուն կը յարին մարդիկ ընական հակումով մը: Կարելի է սակայն գայն նկատել միաձոյց երկ, ճիշդ այնպէս՝ ինչպէս գրողը կը յղանայ իր գործը ու մեր գրողներէն ամէնէն շատ Բակունցի կը պատշաճի այս կերպը: Այսուհանդերձ, պատմութեան վերլուծումը կը յայտնարերէ ճշմարտութիւններ, որոնք նոր գոյն կը նետեն մեր մտածելակերպին վրայ: Յետոյ, ամէն գրող իրեն յատուկ աշխարհահայեացք կ'ունենայ, մարդիկ ու երեւոյթները դասաւորելու իր սկզբունքը ու սխալ չէ ըսել, թէ իր երկը իմացական այդ լուսարձակին մէջ միայն իր բուն նկարագիրը ցոյց կու տայ: Մէկ գլխաւոր ըսելիք կ'ունենայ գրող մը, մէկ գաղտնիք, որ հազար ձեւերու տակ իր անձն է, իր էութեան միութիւնը՝ կտոր-կտոր ամէն գրութեան մէջ տարտղնուած: Ու յատկապէս՝ իր գրականութեան պորտաքարը կազմող երկերուն մէջ:

Այդպիսի գրութիւն մըն է «Սեւ ցելերի սերմնացանը», յղացուած Բակունցի լուրջ ու հասուն շրջանին, 35 տարեկանին: Խորհրդահայ գրականագէտներ (Ռ. Չարեան, «Երկեր», Ակսել Բակունց, Երեւան, 1955, Ս. Աղարարեան «Սովետահայ գրականութեան պատմութիւն», Ա. հատոր, Երեւան, 1961), որոնք պաշտօնական տեսակէտը կը պաշտպանեն՝ կ'ըսեն, թէ այս վիպակը ցոյց կու տայ հերոսներու մարդկայնութիւնը, խորհրդային կարգերու հաստատման համար մղուած կռիւներուն մէկ միջադէպը ու հայ գիւղացիի հերոսական ընոյթը: Այս բացատրութիւնը մասամբ ճիշդ է միայն: Բակունցը գիւղագիր, Հայաստանի ընտանիքի «նկարագրիչը», մարդկայնութեան ջատագովը — ինչու չէ: Բակունցը յեղափոխութիւնը նկարագրող, գաղափարական պայքարները ու դասակարգային տեսլականը արտայայտող գրիչ — համոզիչ ոչինչ ունի: Իր երեք պատմուածքներէն, ուր Յեղափոխութեան թեմային կը դպնայ ան («Վանդունց Բաղին», «Բրուտի տղան» եւ «Սեւ ցելերի սերմնացանը»), եւ ո՛չ մէկը կառուցուած է դասական դարձած կարմիր Բանակ — Դաշնակ կռուի առանցքին շուրջ: Այդ թեման պարզապէս պարագայական ներկայութիւն մըն է, հանդիսատեսը ուրիշ, աւելի կարեւոր եղելութեան մը: Շատեր հաւանաբար ուզէին, որ Բակունց նկարագրած ըլլար երկար-բարակ, ամէն տեսակ ածականներով ահաւոր տեսարաններ, ուր համայնավար դարձած միամիտ գիւղացին կը խոչտանգուի հակա-յեղափոխական ուժերու կողմէ: Ի՛նչ ափսոս, որ «Խմբապետ Շաւարշ»ի նման գրութիւն մը չունի Բակունցը... Ատոր գուտ գեղարուեստական պատճառը կայ, որուն պիտի անդրադառնանք աւելի ուշ:

«Սեւ ցելերի սերմնացանը» հերոս չունի, բառին աւանդական իմաստով, ոչ ալ դէպքերու առանցք: Կան մարդիկ, որոնք ճառ կը խօսին, ուրիշներ կեանքի ու մահուան մասին

բաներ մը կ'ըսեն, սակայն անոնք ալ երկրորդական են: Պատմութիւնը տեղի կ'ունենայ լուրջեան մէջ ու, որոշ անկիւնէ մը դիտուած՝ նոյնիսկ հայկական ընաշխարհի մը ներկայութիւնը այնքան կենսական չէ Բակունցին, որուն համար ազգեր ու մարդիկ պատմութեան ըմբը եկած են շատ աւելի հիմնական ճշմարտութիւններ, ծիսակատարութիւններ ներկայացնելու նպատակով:

Վիպակը չորս տեսակ գոյութիւններէ կը բաղկանայ — ընտելներ, միջատ ու թռչուն, մարդիկ եւ, վերջապէս, դիւցազունները: Ու գրագէտին ամբողջ արուեստը կը կայանայ ցոյց տալու մէջ, թէ այս չորսը նոյն բացարձակ արժէքը ունին, անկախ իրողութիւններ են, բայց այնպէս մը առնչուած են իրարու, որ մէկ միութիւն կը կազմեն, որ գրագէտի միութիւնն է, որովհետեւ ոչ մէկ երկվայրկեան ու ոչ մէկ փշրանք հողի վրայ՝ գրողը դուրս է, իրրեւ մարմին ըլլայ թէ իրրեւ գիտակցութիւն՝ այդ չորսի միութեանէն:

Առանցքը կը կազմէ սերմնացանը, որ վիպակի մէկ երրորդը անցնելէն ետք մէջտեղ կ'ելլէ: Մինչ այդ՝ ըմբը գրաւած են միջատներ, հող, Աւագ ու եղէգներ, արեւով ողողուած եղէգներ, որոնք քիչ ետք երազի մը մէջէն տեսնուած բազմաթիւ նիզակներու իրարու գարնուելու ձայնը կը հանեն լեռնէն լիջնող ջուրի ազդեցութեան տակ, մինչ Արարատի գագաթին ձիւնը կը ցոյց շիկացած օդին մէջ: Այս առաջին 200 բառերուն մէջ սակայն Բակունց դրած է իր գրութեան իմաստին բոլոր սեմպոլները — եղէգ, կրակ, երկինք, երկիր, ջուր, կարմիր, արեւ, հնութիւն: Կը պակսի միայն ճակատագրական արարքը, դիւցազնին ծնունդը: Մնացեալ էջերուն մէջ գրագէտը պիտի գծէ ու նկարագրէ անոր ծնունդը, նոր առասպելի մը հերոսին կեանքի գալը տող առ տող՝ մինչեւ որ վերջին տողերը գոցեն անիւն շարժումը, դադրին ժամանակն ու պատմութիւնը ու մենք մտնենք դիւցազներգական նոր աշխարհի մը մէջ, ուր սակայն կ'իշխէ հին աշխարհի օրէնքը: Այս հինը թելադրելու համար՝ Բակունց գործածած է բազմաթիւ տարրեր — հին եգիպտական սքարապէ բզէզը, գորշ ու մաշած պարիսպներ, աստուածաշնչական կաւը, Միջագետքի խանձուած դաշտերը, ուղտեր, եւայն:

Վիպակի կառուցին կարեւոր տարրերէն մէկը ժամանակն է: Առաջին բաժինին ժամանակը՝ ներկան է: Խօսակցական կարճ մաս մը կը ներկայացնէ Աւագի տիպարը, այդ անունին մէջ ղենելով իր հասարակ իմաստին ամբողջ ծանրութիւնը: «Յետոյ բարձրաճում է մի այլ վարագոյր եւ երեւում եմ արեւի շողերով ողողուած Արաքսի տափարակը, առափընեայ դեղնած եղէգները, որոնք հազիւ օրօրում եմ գետի գովից» (*): Երկու տողով Բակունց տուած է արդէն Վահագնի ծնունդին հիմնական կէտերը — երկիր, երկինք, արեւ, եղէգ, ջուր: Այս ներկայացնելու արդէն, որ կը տարածուի դէպի ետ՝ մէջն առնելու կենդանիները, միջատները, ընտելութիւնը՝ իր մահուան եւ վերածնունդի քանի մը պատկերներ:

րով, որոնք գրութեան համամարդկային նկարագիր մը կու տան: Կան գաղափարի գիծեր — հողը, որուն մէջ կը կորսուին միջատը, մարդն ու իր ձեռակերտները եւ սակայն կը ծառայեն ուռճացնելու գայն նոր սերմերով: Հոս արուեստը ոճին մէջն է — իր նիւթին չափ տարրական, մերկ, սկզբնատիպարային լեզու մը՝ որպէսզի նուազագոյնի իջնէ մարդկային մտքի միջամտութիւնը իրականութեան նուաճումին մէջ, ընդհանրապէս ու մարդ իրարմէ անջատ իրրեւ նկարագրութիւն՝ որպէսզի հաւասարօրէն մաս կազմեն մէկ ու նոյն իրականութեան, որ կաւն է: Կաւը, ըստ հերոսի:

Երկրորդ բաժինը, որ կարճ էջ մըն է, անցեալի մէջ, կը տեղափոխուի ու կը ներկայացնէ սերմնացանին անձը, Սէթը: Սէթի մասին (որ Ադամի որդիներէն մէկն էր, ըստ Աւետարանի) ոչ մէկ ճշգրիտ տեղեկութիւն ունինք: Միայն գիտենք, որ իր մօր անունով կը ճանչցուի, գիտենք նաեւ սերմ ցանելու իր եղանակը. «Գնում է եւ աջ ձեռքով լիաբուռն վերցնում ծանր հատիկները, որ մի վայրկեան շողում էն արեւի տակ, ինչպէս ճնշուկների երամբ, եւ ծանրութեամբ ընկնում հողի մէջ»: Մարդոց, ընդհանրապէս եւ կենդանիներու սերտ յարակցութիւնը կրկին կը շեշտուի, մինչ սերմնացանի տիպարէն կը բխի համայնականութիւն մը, որ կ'ամբողջացնէ կաւին յաւերժականութեան յղացքը: Սէթ չունի իրեն յատուկ ինքնութիւն, այլ խորհրդանշանն է սերմնացանին, որ ո'չ միայն ծանր պարտականութիւնը ունի շարունակելու կեանքի ծաղկումը, այլեւ տիեզերական սկզբունքի մը մէկ գործիքն է, մարդ ու մարդէ աւելի բան մը, որ պէտք է գոհուի, որպէսզի կեանքը չգաղղի: Ու այս յաւերժացումը տեղի պիտի ունենայ երկու փլանի վրայ — ընդհանրապէս մէջ ու մարդկային երեւակայութեան մէջ:

Եղբրական բայց կենսատու այս դերը իր առաջին յստակացումը կը ստանայ երրորդ բաժինին մէջ: Ժամանակը դեռ անցեալն է, 1920ի շուրջ, Անկախ Հանրապետութեան շրջանին: Քաղաքացիական պատերազմ կայ Դաշնակցականներուն եւ Կարմիրներուն միջեւ, սակայն պատմական այս պատահաւոր ընդհանրութիւնը Սէթին գոհարբումն է: Տեսարանը յատկանշական է. «Արեւ էր, էլի արագիլներ կային եւ իւզոտ փայլով արեւի տակ շողում էր արգաւանդ տիղմը: Յանկարծ զընդակների տարափ տեղաց եղեգնուտների կողմը, որտեղ սոյխտակ ձիւղերների դէմ ամբացել էին մի խումբ ասլուտամբ գիւղացիներ: Սէթը չոքեց այն չինարու յետեւը եւ որոտաց նրա հրացանը...: Միայն միւս առաւօտ, երբ եկան ծանր թնդանութիւն դաշտի բարակ արահետով, եղեգնեայ պատգարակի վրայ, ընկերները տուն բերին սպանուած սերմնացանին մարմինը: Նրա սրունքները մերկ էին, մի կողքի վրայ չորացած տիղմ էր եւ իսնձուած արիւն: Երեւում էր միայն սառած աչքը, որ նայում էր անշարժ, ինչպէս գորշ ամպը անհունի խորքից...: Նա արևաքամ սողացել էր թաց հողերի վրայով դեպի եղեգները, դեպի ջուրը...: Յետոյ երեսն ի վայր թաղուել էր սառը հողում՝ որպէս ոսկեհատ սերմ»:

Մեռնիլ իրրեւ ոսկեհատ սերմը ապագային, թաղուելու կաւին մէջ ու ցեխին տակ՝ ինչպէս իր ցանած բոլոր սերմերը, մեռնիլ վերստին ծնելու համար՝ ուրիշ բան չէ, եթէ ոչ վերադարձը հեթանոսական միթերունն ու վահագնի առասպելին ու պատահական չի կրնար ըլլալ հրացաններու որոտն ու վառօղի ծուխը ու փայլող արեւը եղէգնուտներու կողմը...:

Չորրորդ բաժինը կրկին անցեալին մէջ ու տեղի կ'ունենայ, հաւանաբար 1920էն 25ի շրջանին: Կը կազմէ վիպակին կեդրոնը ու կը ներկայացնէ առասպելին ծնունդը: Վայրը՝ ակումբ մը, որ առաջ եկեղեցի եղած էր, որ մարագի կը նմանէր...: Սակայն ոչինչ փոխուած է. մկրտութեան քարը կը ծառայէ խոփերը թրծելու, բայց խորհրդանշական իմաստը նոյնն է: Գետնափոր ակումբին գանազան մանրամասնութիւնները կը յիշեցնեն հեթանոսական միթոլոգիան — պղնձեայ աշտանակները, ջահերու նման կախուած եղէգները, եղէգէ շինուած կտուրը, որուն տակ կ'ապրին հին աղաւնիները, նիշերուն արծաթեայ անօթները, գոլսանները, որոնք հերոսները կը մեծարեն երգերով, պարմանուհիներն ու նախնիները, որոնք ծաղիկներով կը գարգարեն բեմը, դրօշակները, պղնձէ փողերը, եւայլն: Գիւղացիք խռնուեր են, որովհետեւ ակումբին բացումը տեղի պիտի ունենայ, նոր սկիզբ մը ու նոր վարագոյր մը պիտի դրուի: Մինչեւ այդ՝ ճարտասան մը

կը խօսի՝ «մարդուն» նոր սկսող պատմութեան մասին, անոր հոյակապ թուիչքը դէպի ազատութիւն... ստեղծագործ հերոսին դժուար աշխատանքը, մինչ ծուխը կը բարձրանայ հեռուն, քաղաքի գործարաններու ծխնելոյցներէն, եւայլն: Վարագոյրին բացումը առասպելին ստեղծումին առաջին արարն է:


«Վարագոյրի վրայ ամբողջ հասակով նկարուած էր մի վիթխարի սերմնացան, փայտէ կտուր պարանոցից կախ, մինչեւ սրունքները բաց ոտքերով: Լոյսի տակ շողում էին այն ոսկեգոյն հատիկները, որ աջ ձեռքով նա շաղ էր տալիս արգաւանդ ցելերի վրայ»:

Ուշագրաւ երեք կէտ կայ նկարին վրայ — սերմնացանին վիթխարի աչքերը, եղէգները, լեւը: Ժողովուրդը վարագոյրին վրայ կը ճանչնայ իր սերմնացանը, բայց Բակունց անմիջապէս կ'աւելցնէ. «Գիտէ՞ր այդ անյայտ նկարիչը Երանի Սէթին եւ այս գիւղը, նրանց հողերը, — դժուար է ասել»: Քանի մը կ'ինքն արդէն կը հաւատան, թէ Սէթին նկարն է, ու այդ գիւղերն իսկ անոնց «արցունքը սրբագործեց մի ոսկի առասպել»: Ահա այս կերպ Բակունց մեզ կը յայտնէ, թէ առասպելային մտածողութիւնը ո'չ միայն չէ մեռած, այլեւ գործօն է մեր դարուն՝ յար եւ նման հին ժամանակներուն:

Վերջին բաժինը մեզ ետ ներկային մէջ կը բերէ, յայթական ներկայի մը, ուր կ'իշխէ առասպելը: «Ու դեռ մնում է այս հողաշէն ակումբը, եղեգնեայ կտուրով, եւ ծփում է վարագոյրը, եւ բոց աչքերով մի սերմնացան սեւ հողերի վրայ առատութեամբ շաղ է տալիս ոսկի հատիկներ»: Ու վիշապաքաղ Վահագնի առասպելը, որուն շնորհիւ մեր նախնիքը իմացական ու գգացական ուժ կը գտնէին մարդու վայել կեանք մը ապրելու՝ կը վերածնի մեր օրերուն՝ կերպարանափոխուած իրրեւ սերմնացան Սէթի առասպելը: Կայծակի աստուածէն՝ աշխատանքի եւ ստեղծագործումի աստուածը, պահելով սակայն երկիր ու երկինք իրարու միացնող եղէգր ու արեգակնային աչքերը եւ կուռելով ո'չ այնքան ընդդէմ վիշապներուն, որոնք կը լլկէին հիններուն երեւակայութիւնն ու երագները, այլ՝ մեր օրերու մարդկային շարժումն, ատելութեան ու պատերազմի ոգիին դէմ: Նոր դարերու վիշապաքաղը սերմնացանն է, որ մահուան դէմ կը պայքարի ու կը յայթէ: Այս է պատճառը, որ Բակունցի մօտ ոճիւրն ու ողբերգութիւնը, մահուան եղբրական նկարագիրը բացակայ են, պարզապէս որովհետեւ իրեն համար մահը նոր սկիզբ մըն է, մարդիկ չեն մեռնիր, այլ ետ կաւին մէջ կը մտնեն ու կեանքը կը շարունակուի: Ողբերգականութեան այս պակասին համար է, որ Բակունցի հերոսներուն մէջ յաւը կամ վատը չկայ, ո'չ դրականը, ոչ ալ ժխտականը, ո'չ յեղափոխականը, ոչ ալ հակայեղափոխականը, ու հեղինակը երբեք չի դատեր կեանքն ու իր հերոսները: Չկայ նաեւ մարդու, եւ արեւելահայերու սրտին այնքան մօտիկ «ժողովուրդ» իրողութեան ո'չ պատմականքը, ոչ իսկ սէր: Գրողը անշուշտ կը սիրէ գիւղացին, անոր բնագրական կապերը լեռներուն հետ ու արմատները հողին մէջ, սակայն այդ պարագան երբեք յայտնի չէ իր գրածներուն մէջ: Ոչ ալ դասակարգային կամ նոյնիսկ, այս վիպակի պարագային գոնէ՝ ազգային, հայկական մտահոգութիւն: Ոչ իսկ ճակատագիր կամ Աստուած կոչուած խրոնիկական էութիւնները: Ի վերջոյ, կաւի մակարդակէն դիտուած՝ Աստուած, մարդիկ, անասուններն ու ծառերը իրարմէ շատ ալ տարբերութիւն չունին: Ու կաւը՝ յաւիտենական ներկան է, միակ մունջ, բայց ամենատես վկան, նոյն մնայուն արժէքով, անշարժ:

Այս կացութեան մէջ միայն ժամանակն է, որ կը փոխուի, կը շարժի, մինչ կեանքը կը մնայ անփոփոխ: Յեղափոխութիւն ու Պատերազմ, Համայնավարութիւն ու Դաշնակցութիւն՝ գուրկ են իրենց ընթացիկ գգացականութենէն, որովհետեւ դիւցազնը բարձր է միշտ այդ պարագայական իրողութիւններէն: Միայն մէկ հարցի մէջ Բակունց կը թուի մտածումի խտացում, ճշգրտութիւն փնտռել — այդ ալ առասպելի ստեղծիչին ու առասպելին կեանք տուողին յարարերութիւններուն հարցն է: Ըստ վիպակին, եթէ առասպելին արտաքին կերպարանքը, այսինքն՝ ակումբի վարագոյրին վրայի նկարը արուեստագէտին գործն է եւ ուրեմն քաղաքէն միայն կրնայ գալ ան՝ գիւղացիներն են, որ առասպելին կեանք կրնան տալ, հասարակ ժողովուրդը, այդ տարբերային կիները, որոնք ջերմ հաւատքով ընդունեցին ամբողջի կարծիքը եւ որոնց մեղմ հաւատքով ընդունեցին ամբողջի կարծիքը եւ որոնց մեղմ հաւաչանքն ու լացն է, որ իրականութեան փո-

խնցիկն լաթի կտորի մը վրայ գծուած նկարը: Հետաքրքրական պիտի ըլլար ուսումնասիրել Բակունցի սէրը գիւղի ժողովուրդին հանդէպ: Ի՞նչն էր, որ կը մղէ իրեն նման գրող մը իր սուղ ժամանակէն տրամադրելով Վարդան Այգեկցիի գործով գրադելու: Շատ հաւանարար ճիգ մը կար «ժողովուրդ» կոչուածին էութեան թափանցելու՝ առականերու ճամբով: Արդեօք ունէ՞ր կասկածը, թէ այդ ժողովուրդին միսթիքը կրնար շինծու խորհրդաւորութիւն մը ըլլալ լոկ, գունաւոր պղպջակ մը, անրոժանդակ յղացք մը, որ սակայն պիտի ծառայէր մեղմելու գիւղէն քաղաք գաղթած, փախած, կծիկը դրած գրագէտներու խղճի խայթը: Եւ կամ՝ այդ յղացքը միայն թոյլ, միամիտ մտածում չէր՝ այլ ունէր որոշ իրաւութիւն — հերոսական, անմեղ, մանկութեան նման կորուսեալ դրախտի մը կարօտը, որ կը կապէ գինք գիւղին (նոյնը չէ՞ թումանեանի պարագան) եւ ուրեմն՝ այդ միսթիքը վաւերական զգացումն է իրեն նման գրողներու: Վստահօրէն այս տեսակ զգացումի մը կը պարտինք իր կողմէ կոկոլի «Թարաս Պուլպա»ի թարգմանութիւնը: Կոկոլի նուիրուած իր մէկ ուսումնասիրութեան մէջ, Բակունց կը գրէ. «Ի դէպ, հարցի այս առումով (Քրիստոնէական հաւատքի ու Թարաս Պուլպայի առնչութեան կ'ակնարկուի - Վ. Օ.), որքան եւ իրար նման «Թարաս Պուլպա»ն եւ... Եղիշէի «Վասն պատերազմի վարդանակց» պատմութիւնը, եւ սիւս լ կը լինէր արդեօք եւթադրել, որ վերջինս եւս սուկ գրական գործ է, որի հեղինակն առաւել կամ պակաս չափով օգտուել է իւր ժամանակի գուսաններու երգերից»: ... «Գոգուլը զուրկ չէր ուրիշ, աւելի շքեղ աշխարհի տեղիներէ: Որքան գորշ եւ տաղտկալի էր շրջապատը, այնքան աւելի զօրեղ էր նրա ներքին միջամբ՝ այլ ոլորտներում գտնելու այնպիսի մարդկանց, որոնք հերոս էին» (Ա. Բակունց, «Գրականութեան մասին», Երեւան, 1959, էջ 92):



Այս հարցումներուն պատասխանը դեռ չունինք: Ինչ որ սակայն յստակ է՝ այդ դիւցազներգական երեւակայութիւնն է, որ կը պրկէ իր մտքին հորիզոնները, իր մէջ համատարած սէրը, առնուազն բացութիւնը, ընկալչութիւնը՝ արարչագործութեան մէջ մի հիւլէին հանդէպ, բրդոտ սարդէն մինչեւ Արարատի կապոյտ մշուշը: Որոշ իմաստով, այս երեւակայութիւնը փախուստի միջոց մըն է առօրեայի ճապարհութեանն զէպի հերոսական ժամանակ ու վայր, եւ որուն արդիւնքը թէ՛ իրրեւ արուեստ եւ թէ՛ իրրեւ գաղափար՝ անհամեմատօրէն բարձր է, քան թումանեանինը: Արդեօք ի՞նչ գլուխգործոց պիտի ունենար մեր գրականութիւնը այսօր, եթէ Բակունցի կարողութիւնները Սասունցի Դաւիթի առասպելին վրայ կեդրոնանային: Իրականութենէն փախուստը հասարակ տեղիք է անշուշտ, նոյնիսկ երբ Բակունց, հոգեկան յարակցութիւն մը տեսնելով իր ու կոկոլի միջեւ՝ կը գրէ, վերը յիշուած ուսումնասիրութեան մէջ. «Եւ ահա տեղի է ունենում հոգու իւրատեսակ մի փախուստ՝ մոայլ ժամանակից եւ անհրապոյր շրջապատից դէպի հիւր, դէպի կողակների ազատ եղբայրութեան ժամանակները: «Օ՛, որքան գարշելի է իրականութիւնը, գարշելի նրանով, որ նա հակառակ է ցնորքին», - բացագանչում է Գոգուլը իւր հերոսներից մէկի բերանով»: Ինչ որ սակայն կը փրկէ գրագէտ մը հասարակ տեսիլքի դատապարտութենէն՝ փախուստին վերջին կայանն է, որ Բակունցի պարագային, ո՛չ եսի հեշտանքներու էլտորատոն է, ոչ ալ ամայի իտէպի մը ծոցը, այլ՝ մարդկային մեծ տագնապներուն ոլորտը: Բակունցի այլ մէկ ուսումնասիրութեան մէջ, նուիրուած ճոնաթան Սուիֆթին, դժուար չէ զգալ իրլանտացի գրողին հանդէպ իր բացառիկ համակրանքը, որ կը բխի հոգեբանական ու իմացական սկզբունքներու նմանութենէ մը, որովհետեւ երկուքն ալ կը պայքարին մարդկային ստորնութեան ու կեղծիքին դէմ ու Սուիֆթի նման Բակունցն ալ կը հակադրուի իր միջավայրի մտածողութեան դէմ: Երկուքն ալ մասամբ այդ ընդդիմութեան անհամընթացութեան հետեւանքով ողբերգական ելք մը պիտի ունենային աշխարհէն — Իրլանտացին դէպի խն-

թութիւն, Հայր՝ դէպի գնդակահարում: Գրագէտին եղբրական մահը մեր գրականութեան անգիր օրէնքն է անշուշտ ու մատի վրայ կը հաշուրուին անոնք, որոնք խաղաղ քունով գոցած են աչքերնին: Ու մեր ժողովուրդը, որուն յիշողութիւնը կարճ է ասանկ պարագաներու՝ ոչ իսկ անմահութիւն կը խոստանայ:

Հողի, բնութեան, հողագործի, աշխատանքի ու կեանքի հանդէպ Բակունցի վստահութիւնը այնքան անսահման կը թուի ըլլալ, որքան իր հաւատքը առասպելին ու գայն ստեղծող արուեստագէտին երեւակայութեան գորութեան հանդէպ: Բայց ինչ որ այս վիպակին կու տայ գուտ հայկական ինքնութիւն՝ այդ Վահագնի ծնունդին ոգեկոչումին ձգտող ու գայն վերստեղծող թէ՛ բաւերն են եւ թէ՛ այ ոճը: Յստակ է եղէգի խորհրդանշական արժէքը (բառը 18 անգամ կը կրկնուի), արեւի եւ լոյսի նշանակութիւնը (26 անգամ կրկնուած ու այդ յաճախակիութիւնն իսկ՝ թելադրելու համար դիւցազներգական ասմունքի ոճը) ու այն գուսպ, պիւրկ անանձնականութիւնը, առարկայականութիւնը, որով գրագէտը կը ներկայացնէ մարդիկ ու աշխարհ եւ ուրկէ դուրս է իր անձը, իր նախասիրութիւնները, նման գուսաններու ոճին, որ արուեստագէտին անձը հեռու կը պահէ իր գործէն: Բակունցի թեքնիքին բուն նպատակն է գրել այնպէս, որ մարդն ու հողը գիրար ամրողջացնեն, մարդը ըլլայ գերադաս, գործօն դերակատար՝ ոչ այլ բնութիւնը կրաւորական ներկայութիւն մը, այլ երկուքն ալ գործիք ըլլան, միջոցներ՝ գերազոյն նպատակի մը համար, որ կեանքի յաւերժութիւնն է: Այս միացումին, կապակցումին համար միջատները, թռչունները իտէպ գործիքներ են, նոյնիսկ ուղտերը...: Միջատ մը իրրեւ կաւի երկարաձգումը, իրրեւ կաւին կեանքի գալը, ու մարդը՝ միջատէն ու թռչունէն անդին՝ նոյն կեանքի ուժին երկարաձգումը, որ կը յանգի առասպելին, որ կրկին կեանքի նոյն ուժին, միջումին կը հնագանդի: Բակունցի մօտ չկայ մարդակեղրոն գունաւորումը աշխարհի էակներուն եւ իրրեւն, որուն կը հանդիպինք ռոմանթիկ գրականութեան մէկ ծայրէն միւսը: Այսպէս է, որ բնութեան ընկալչները ոչ թէ իրար կը վարակեն, այլ իրարու կը նմանին, նոյն շարժումները կ'ընեն, գրեթէ նոյն բանն են՝ տարբեր ձեւերու տակ — տուները եւ ուղտերը, արշաւող ձիււորները, թռչուններու երամները եւ ակումբի ծափերուն աղմուկը, միջատներու գործունէութիւնը, ճրնճող կեններու խօսակցութիւնը, եւ այլն:


Միութեան նոյն օրէնքը կ'իշխէ գաղափարներու աշխարհին մէջ — հեթանոսութենէն Քրիստոնէութիւն ու անկրօնութիւն, Դաշնակցութենէն Համայնավարութիւն՝ միակ ու նոյն իրականութիւնն է, որ կը շարունակուի անդրողուելի ու անդիմադրելի՝ ոչինչ կը փոխուի, ոչ մէկ նորութիւն՝ խորագոյն ճշմարտութիւններուն մէջ քաղաքի արուեստագէտին համար, որ առանց երբեք ճանչցած ըլլալու ո՛չ Սէթը, ոչ ալ գիւղը՝ «գիտէ» ինչ է առասպելին էութիւնը:

Բայց դեռ կը մնայ ապսիւրտ կեանքը, գայն ապրելու ողբերգութիւնը, մարդ ըլլալու անկարելիութիւնը: Կը մնայ սէրը, մանկութեան ալպոմը, հերոսներու կարօտը, թշուառութիւնն ու անօթութիւնը մարդոց, հայ ըլլալու տառապանքը: Ի՞նչ պիտի ըսէր Բակունց այդ հարցումներուն: Հաւանարար պատասխանէր. «Մարդ կ'ամ կ'ապրի՝ կամ կը ստեղծէ», իր սերմնացանին օրինակով, որ պէտք է մեռնէր՝ որպէսզի ստեղծէր Առասպելը: «Արուեստագէտին օրինակով», պիտի աւելցնէր:

ՎԱՏԷ ՕՇԱԿԱՆ

Ռեւուիւր, 12 Փետրուար .1980

(*) Ակսել Բակունց, «Պատմութիւններ», Ա. շարք, հրատ. Հրանտ-Սամուէլ, Փարիզ, 1938:



ՀԱՍԱՐԱԿ ՅԱՅՏԱՐԱՐ

Վահէ Օշական բանաստեղծ է, պատմուածագիր, թատերական գործերու հեղինակ, գրական քննադատ, հրապարակագիր, դասախօս: Իրարմէ տարրեր այս մարգերը ունին սակայն տեսակ մը ներքին միութիւն, որ ապահովուած է հեղինակի աշխարհայեացքով եւ արուեստագէտ - մտաւորականի դերի յանձնառութեամբ:

Ան կը հաւատայ որ աշխարհը անհեթեթ է, կեանքը՝ անիմաստ, մարդկային գոյութիւնը աշխարհի վրայ՝ արկածի չափ աւելորդ ու ձրի: Մարդ արարածը աքսորական է երկրի վրայ, անգոր ու առանձին: Կեանքը ծուղակ մըն է, որուն մէջ կ'իյնայ ան, երբ կը ծնի:

Թակարդին շուրջ հատորը կը բացուի հետեւեալ յատկանշական տողերով.

«Կար ու չկար այսիւրտ, անպէտք տիեզերք մը կար, որուն մէկ յետին փշրանքին վրայ նետուած, թափուած էին նոյնքան աննշան, անիմաստ մարդկային էակներ»:

Հեքիաթներու յատուկ այս «կար ու չկար»ը հեզնականօրէն կը շեշտէ կացութեան ողբերգականութիւնը, մինչ արժէքագրկող ածականները եւ արհամարհական երանգ ունեցող դերբայները աւելի եւս կ'ընդգծեն տիեզերքի եւ մարդկային կեանքի անիմաստ խեղճութիւնը: Տիեզերքը միայն անհեթեթ չէ, «անպէտք» է նաեւ, աշխարհը տիեզերքի պարզ մէկ փրշորանք չէ, «յետին» փշրանքն է, իսկ մարդիկը «նետուած» են, «թափուած»՝ աւելորդ առարկաներու պէս:

Այս պայմաններուն մէջ մարդ միայն մէկ բան կրնայ ընել, ըստ Վահէ Օշականի. գիտակցիլ այս իրականութեան եւ քաջարար ընդունիլ գայն:

Պարզ գիտնալը, զգալը, գիտակցիլը թէ կեանք կոչուածը ողբերգական է՝ արդէն հերոսութիւն է:

Այս հերոսութեան բնական հանգրուանները նշուած են նախադասութեան մէջ՝ գիտակցուած կամ պատահական յաջորդականութեամբ: Նախ պէտք է անդրադառնալ կացութեան, անձնապէս զգալ գայն, ապա միտքով ընդունիլ: Այս աշխարհայեացքը բնագանգական չէ միայն ուրեմն, բարոյական եզր մըն ալ ունի. չի բաւեր կրաւորապէս անդրադառնալ կեանքի անիմաստութեան, ներգործօն դերով պէտք է ընդունիլ գայն, տէր կանգնիլ սեփական ու ընդհանրական ճակատագիրին, իմաստ մը տալ անիմաստին: Վահէ Օշական, որ իբրեւ ուսանող Փարիզ գտնուած է գոյապաշտութեան ծաղկումի տարիներուն, վերջնականօրէն որդեգրած է, իւ-

րացուցած՝ գոյապաշտական փոխոտփայութիւնը եւ անկէ իրող բարոյականը:

Երկուքն ալ կը կենսագործէ ան իր կեանքին մէջ եւ ստեղծագործութեան՝ իրրեւ մարդ անհատ եւ արուեստագէտ - մտաւորական:

Վահէ Օշական իսկական տիպարն է մտաւորականին: Ո՛չ անոր համար միայն որ միտքի աշխատաւոր մըն է, ինչպէս ուրիշներ արհեստաւոր են, այսինքն՝ ձեռքի աշխատաւոր, այլ որովհետեւ միտքով, գաղափարներով կ'առաջնորդէ իր կեանքը եւ կը ստեղծէ իր գրականութիւնը: Վահէ Օշականը վերացականութիւն մըն է գրեթէ. ան չի սահմանուիր կենցաղային առօրեային մանրամասնութիւններով, այլ՝ մտածումի իր աշխարհով, միտքով: Իր բուն կեանքը ձեւակերպած մտածումներուն մէջն է, ստեղծած երկերուն:

Ստեղծագործական իր տենդը, մոլուցքը գրեթէ, առասպելական է ուղղակի: Տասնեակ մը հատոր տպուած է իրմէ, մամուլի մէջ ցրուած գրութիւններ ունի, որոնք տասնեակ մը հատոր եւս կրնան լեցնել, կան նաեւ անտիպներ, որոնք օր օրին կ'աճին եւ կը բազմանան անկախարար տպուելու հեռանկարէն: Հրատարակուիլը կարեւոր է անշուշտ Վահէ Օշականի համար, բայց երկրորդական է: Հիմնականը ստեղծելն է, մտաւորական աշխատանքով կեանքը արդարացնելը: Անշուշտ կարեւոր է նաեւ ընթերցողներուն հասնիլը, որովհետեւ այդ ձեւով է որ կը լրանայ արուեստագէտ - մտաւորականի իր կոչումը: Բայց երկրորդ այս հանգրուանը միայն իրմէ կախում չունի, հետեւաբար անով չի պայմանաւորուել իր աշխատանքը:

Ես բախտը ունեցած եմ աշխարհագրականօրէն ու հոգեբանօրէն մօտ ըլլալու Վահէ Օշականին: Տարիներ ամբողջ ընկած ենք նոյն քաղաքին մէջ, ամառներն ալ անցուցած՝ օդափոխութեան միեւնոյն վայրին մէջ: Ընկերական եւ ընկերային հանդիպումներ ունեցած ենք, գործակցած ենք մշակութային լրագիրներու: Չէ պատահած որ անգամ մը գոնէ իր տունը երթամ եւ ժամանակ սպաննելով գրադած տեսնեմ գինք. միշտ տարուած կ'ըլլար մտաւորական աշխատանքով: Հիմա, աւստրալիական իր ընդուն մենութեան մէջ, մտաւորական աշխատանքն է դարձեալ որ կը լեցնէ եւ կ'արդարացրնէ իր կեանքը: Գիտեմ որ ամէն կէսօրէ ետք իր գրասեղանի ետին է, ինչպէս քահանան՝ խորանին առջեւ եւ ուսուցիչը՝ դասարանին մէջ: Սրբազան կոչումի միեւնոյն գիտակցութեամբ: Եւ չեմ գարմանար որ 70էն ետք վիպական ստուար գործի մը ձեռնարկած ըլլայ եւ առաջին հատորը վերջացուցած արդէն, Արուեստագէտ - մտաւորականը իր միտքին արգասիքը կու տայ հանրութեան, ինչպէս շերամը մետաքս կու տայ եւ մեղուն՝ մեղր:

Յաւելեալ բան մըն ալ կ'ըսէ, կը փնտռէ անհատներու եւ հաւաքականութիւններու խորունկ ճշմարտութիւնը եւ կը պատգամէ գայն իր գործով: Բեռնակիրն է մարդկային ճակատագիրին, ճշմարտութեան քարտուղարը: Ան արթնցնողն է նաեւ, ահագանգողը: Բազմութիւնները իրենց թմրութենէն դուրս բերելու համար ան երբեմն, յաճախ նոյնիսկ, կը դիմէ գայթակղութեան: Խնդրոյ առարկայ կը դարձնէ աւանդական հաւատալիքներ, կը քանդէ դարաւոր սրբութիւններ: Միշտ շինիչ նպատակով սակայն:

Արուեստագէտ - մտաւորականը մոզ մըն է նաեւ, իւրաքանչեւ ծէսի մը սպասարկուն: Ան գոյնի, ձայնի, իմաստներու ցանցերով կը ստեղծէ արուեստի աշխարհ մը, որ կը հակադրուի անհեթեթ իրականութեան: Գրողին ամբողջ գոյութեան իմաստը, արդարացումը, ամբողջ կեանքի համը, հոտը խտացած է իր ստեղծագործութեան մէջ:

Եւ երկրորդական է այդ ստեղծագործութեան սեւը: Քերթուած ըլլայ ան թէ պատմուածք, թատերական երկ թէ պայէի գրքոյկ՝ կարեւորը ճշմարտութեան մը հետամտիլն է, գոյներ, ձայներ եւ իմաստներ որսալը: Այս պատճառով ալ սեւերը կրնան չենթարկուիլ աւանդական իրենց կանոններուն, խառնուիլ նոյնիսկ իրարու, նորատեսակ ենթասեւերու ծնունդ տալ:

Բայց անոնք միշտ հաւատարմօրէն կ'արտայայտեն Վահէ Օշականի ներաշխարհը եւ կը հիմնուին հասարակ այն յայտարարին վրայ, որ իր աշխարհայեացքն է եւ արուեստագէտ - մտաւորականի ըմբռնումը:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԱՍՈՒԼԸ ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Վահե Օշականի մահուան առիթով մահագրություններ լոյս տեսան արեւմտեան մամուլին մէջ: «Տը Կարտիքը», «Նիւ Եորք Թայմզ» թերթերը վերլուծական գրութիւններով, իսկ «Ուաշինգթոն Փոսթ» եւ «Լոս Անճելըս Թայմզ» թերթերը կենսագրական տուեալներու վրայ հիմնուած լրատուական արտատպումներով անդրադարձան Սփիւռքի արեւմտահայ գրականութեան այս ակամաւոր դէմքին կորուստին: Ստորեւ՝ յատկանշական հատուածներու թարգմանութիւնը:

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ՝ ՀԱՅ ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՌԱՏՎԻՐԱՆ

Վահէ Օշական յեղաշրջած է հայ բանաստեղծութիւնը եւ մերժած է անոր պարտադրուած ձեւականութիւնը, որ կը խուսափէր աւօրեայ կեանքի մտահոգութիւններ թովանդակող նիւթերէն եւ օտարուծի ու կորուստի բնարաններէն: Ան յաճախ գրած է ռամիկ լեզուով եւ շատերուն համար ինքնին կը մարմնաւորէր հայկական Սփիւռքի ձայնը:

Մեծապէս սպողուած էր Ֆրանսացի գոյութենապաշտներէն եւ կարեւորութիւն չէր տար անոնց, որոնք արդիականութիւնը կ'արհամարհէին՝ իրրեւ աւանդական արժէքներու խաթարում:

Քոլումպիայի համալսարանին մէջ հայկական գիտութիւններու դասախօս Մարկ Նշանեան Վ. Օշականը կը կոչէ «իր սերունդին գլխաւոր բանաստեղծը»: «Երկար ատեն անոր գործերը նոյնիսկ ընդունուած չէին իրրեւ բանաստեղծութիւն: Ան դժուար ճանապարհ կտրեց՝ ինքզինք պարտադրուած համար իրրեւ բանաստեղծ», կ'ըսէ ան:

Նշանեան Օշականի 1963ին հրատարակուած «Քաղաք»ը գործը կը նկարագրէ իրրեւ «20րդ դարու հայ բանաստեղծութեան ամէնէն արմատական գիրքը»:

Բազմաթիւ հայերու նման, որոնց գիւղերն ու տունները քանդուած էին թուրքերու կողմէ՝ 1915ին, Օշական շրջած էր Միջին Արեւելքի, Եւրոպայի եւ Միացեալ Նահանգներու տարածքին, երբեք չգտնելով մշտական իր տունը:

ՔՐԻՍ ՀԵՏՃԸՉ
(«ՆԻԻ ԵՈՐԻ ԹԱՅՄԶ», 9 ՅՈՒԼԻՍ 2000)


ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԳԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԿՈՒՌՔԸ

Վահէ Օշական քննադատ էր, քաղաքական գործիչ, գարտուղի բանաստեղծ, բեղուն վիպագիր, գրականութեան դասախօս եւ արմատական մտաւորական: Հայկական Սփիւռքին ձայնը, որ կը զայրացնէր կղերականները, քաղաքագէտներն ու մտաւորականները, մարտահրաւէր ուղղելով իր հնադարեան եւ աշխարհացրիւ ժողովուրդին հիմերը բնորոշող միջերուն, նոյնիսկ հարցականի տակ առնելով հայկական մէկ մշակույթի գոյութիւնը:

Սակայն Օշական իր կեանքին վերջաւորութեան կը փայփայուէր իրրեւ մշակութային կուռք մը իր ընդունած բնակավայրին՝ Ամերիկայի, ինչպէս նաեւ կովկասեան նորանկախ Հայաստանի Հանրապետութեան մէջ: Ամէն բանէ աւելի ան ներշնչումի աղբիւր էր Սփիւռքի ապագայ սերունդներուն համար: Երիտասարդ հայ գրողներուն կը պատգամէր. «Շարժեցէ՛ք, մէկ վայրի մէջ անդամալուծուած մի մնաք, փոխեցէ՛ք ձեր միջավայրը»: Անոր յաճախակի տեղափոխութիւնները կը փաստեն, թէ ան կը գործադրէր ա՛յն՝ ինչ որ կը քարոզէր:

Իրրեւ բանաստեղծ մտահոգութիւն կը պատճառէր գրական շրջանակներուն, արհամարհելով հայկական տաղասացութեան աւանդական յանգաւորումը, նաեւ՝ գրական լեզուն փոխարէն օգտագործելով խօսակցականը:

Իր էութեան հաւատարիմ, Օշական սուր կերպով քննադատած է Հայաստանի Հանրապետութեան նոր իշխանաւորները: Հայութեան երկու թեւերը վերամիացնելու նուիրուած առաջին գլխաւոր համաժողովին, որ տեղի ունեցաւ անցեալ Սեպտեմբերին, Երեւանի մէջ, ան քննադատեց արեւելահայերը՝ սփիւռքահայերու նկատմամբ անոնց անիրաւ անտեսումին եւ անգիտութեան համար: «Սփիւռքը եւս ռազմաճակատ մըն է», ըսաւ ան: «Քոլորս հայ ժողովուրդին գինուորներն ենք»:



Since the publication in 1956 of his first work, *Badoohan*, Vahé Oshagan has remained at the vanguard of Western-Armenian literature. Poet, short story writer, critic, teacher—his has been a lifelong obsession with the genesis and transfiguration of diasporas, in both the individual and collective modes. His five volumes of poetry, notably *Ahaznik* and *Khogjeb*, are a terse, howling rush through the psychic labyrinth of the post-Genocide metropolis. His collected short stories, *Pakhedagane* and *Tagartin Shoorch*, as well as his copious criticism, are a consistent attempt at a fusion of the mythic and existential spheres—of national consciousness, individual self-realization and global responsibility—in an exuberantly modernist context. A doctoral graduate from the Sorbonne, Oshagan has taught at a number of universities, among them the American University of Beirut and the University of California, Berkeley. He currently edits *Red*, a journal of Armenian poetry and criticism published by Cleveland State University. He lives in San Francisco with his wife.

Օշական, վերլուծելով շրջանին արիւնայի պատմութեան ազդեցութիւնը հայ բանաստեղծութեան եւ արձակին վրայ, կը վիճէր, թէ իր ժողովուրդը պէտք չէր ինքզինք փակէր արտաքին աշխարհին դիմաց, ոչ ալ իր ինքնութենէն հրաժարէր՝ ամբողջութեամբ ձուլուելով արեւմտեան ընկերութեան մէջ:

Անոր մեծագոյն իրագործումներէն մէկը հայ մշակույթին հարստութիւնը անգլիախօս աշխարհին ծանօթացնելն էր իր խմբագրած «Ռաֆթ» պարբերաթերթին միջոցով, որ առաջին անգամ հրատարակուած է 1987ին:

Օշական իր ամէնէն կատաղի յարձակողականը վերապահած էր եկեղեցիին: 1988ին, «Օծում» ծաւալուն պատմուածքին մէջ կը նկարագրէ, թէ ինչպէս երբեք դիմակաւոր յեղափոխականներ Ֆիլատեյֆիոյ մէկ հին եկեղեցին կը մտնեն, կը պուռան, կը համրուրուին, կը ծխեն եւ ի վերջոյ կը մերկացնեն թեմական առաջնորդը: Չարմանալի չէ, որ բազմաթիւ հայ կրօնաւորներ Օշականը կը համարէին սրբապիղծ պուռնկագիր մը, նոյնիսկ «հայ Ռուչտին»: Սակայն Օշականի «Օծում»ը ունի իր պատգամը. կրօնաւորը կը շարունակէ կիրարկել իր եկեղեցական պարտականութիւնները, հակառակ փիլոնագուրկ ըլլալուն: Օշականի համար անոր պատուախնդրութիւնը գուտ հայկական հերոսութեան ցուցանիշ մըն է: Ան չի միտիր կատարել հաւատքի եւ սովորութեան փառարանութիւն մը, ոչ ալ ներկայացնել տաք-գլուխ մարդոց խղճալի պուռտախօսութիւնը:

Յայտնապէս ուրիշներ կը գիտակցէին անոր գրութիւններուն արժէքին: 1994ին սփիւռքահայերը տօնեցին անոր 50ամեայ գործունէութեան յորելեանը: 2 տարի ետք, Կիլիկիոյ կաթողիկոսին կողմէ Վ. Օշական պարգեւատրուեցաւ «Մ. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշանով: 1998ին գինք պարգեւատրեց Հայաստանի նախագահը՝ հայ գրականութեան բերած իր նպաստին համար:

Օշական ապրող առեղծուած մըն էր. ըմբոստ մը, անձնական ազատութեան ջատագով հերոս մը եւ անհատ մը, որ իր ազգային հարուստ ժառանգութեան շտեմարանն էր: Ան իր ժողովուրդին վերապրումին եւ ստեղծագործականութեան մէջ կը տեսնէր մտավախութիւններ եւ շփոթներ վանող համոզիչ պատճառներ, ինչպէս նաեւ ճշմարիտ յոյս մը՝ ապագայի համար:

ԼՈՐԱՆՍ ՃՈՏՖ
(«ՏԸ ԿԱՐՏԻԸՆ», 21 ՅՈՒԼԻՍ 2000)

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆԻ ՀԵՏ

ԿԸ ԶՐՈՒՅԷ՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲԻՐԵՃԵԱՆ

Այս գրոյցը Վահէ Օշականին հետ՝ տեղի ունեցած է եւ չէ ունեցած միանգամայն: Անսկիզբ ու անաւարտ՝ անհկա սկսած էր արդէն քառասուն տարի առաջ՝ պատանի ընթերցողի մը գիտակցութեան մէջ արձագանգող իբր հնչեղ ձայն, ու շարունակաւ՝ երեւութապէս կցկտուր ձեւով, բայց ըստ խորքի՝ «լռելեայն հասկնալի»ներու շարանի մը մէջ: Անհկա դեռ երկարածուած է՝ ցանցառ վերատեսութիւններու, լակոնական հեռախօսականներու եւ անկանոն նամակագրութեան մը կշռոյթով: Անհկա, պարզ է, չէ ունեցած բառացիօրէն՝ հոս իրեն տրուած բովանդակութիւնը. բայց այս բովանդակութիւնն է, որ իրեն կու տայ իր միակ արժանիքը - ինքզինք ջնջել իբր երկխօսութիւն՝ խօսքը լրիւ ձգելու համար մեկնած բայց յաւետ կենդանի ու մեզմէ անբաժան այս Ձայնին եւ շունչին՝ Վահէ Օշականին*:

— Գիտե՞ս. «Քաղաքը» արդէն, օրին, հարուածած էր մեր պատանեկան ընկալչութիւնը (նախախայրիք «Պատուհան»-իոյ յետոյ ծանօթացանք՝ յետադարձ ակնարկով — տրամադրելի օրինակներ չկային...): Բայց «Քառուղի»ն էր որ, 70ականներու սկիզբին, մէկէ աւելի նոր ոլորտներ թափանցեց, բանալով գանոնք մեզի, սարսելով մեզ... «Մայրամուտ»էն՝ «Պրիսմակ», անցնելով կոթողական «Խանգարուած Վերելակը»էն, «Պէյրութ-Փարիզ»էն, «Նոր Մանչուկ»էն — եւ մնացեալէն: Կարելի չէ հոս չհնչեցնել նախ՝ քանի մը խազ «Մայրամուտ»էն, անձկութենէ խզուած քու ձայնդ ու շունչդ փոխ առած:

— «Այս իրիկուն ալ արեւն իր լոյսը կը հաւաքէ մեր աչքերէն ու մորթէն, ... կը ժպտի, կը հրաւիրէ ու կը փախի... Արեւ, արեւ, կեցիր, կեցիր քիչ մըն ալ, օր մըն ալ, տարի մըն ալ, կեանք մըն ալ արդեօք կո՞յր ես, չե՞ս տեսներ դեռ ամէն ինչ կիսաւարտ է, այբուբենը նոր սորվեցանք, քունէն հագիւ արթնցած ենք եւ բիժերը դեռ չմաքրած երերալէն ու գրգռուած՝ կեանքի դրան պոչ բռնած ենք սպասելով, որ գան բանան իրկուն չեղած, գիշեր չեղած, առտու չեղած, Բացող չկայ, վռնտող ալ չկայ, գիծն երթալով կ'երկարի, մարդ բան չի գիտեր, բայց կը յուսանք ու կը սպասենք, սովորութեամբ, որովհետեւ ընելիք ուրիշ բան չունէինք, արդէն, թրամվայի տոմսակին պէս գոր գուր կ'ընենք ու կը նետենք... Մահուան վախ մը կը սաւառնի սրտերու բարձրութեան ու սերը կ'ուռի կուրծքերու տակ աղմուկ չկայ ու լուսութիւնը աւելորդ է, պահն է հիմա երբ հողաբուսները նոր քուն մտած մեռելին կը սարսռայ, ու կը շնչէ, այնքան մեղմ ափերուն տակ, որ կ'երկարին վերմակը վեր քաշելու, շտկելու... Պահը կ'անցնի տխուր հօր մը քայլերով...»

— Մարդու առանձնութեան, անհեթեթի եւ գոյութեան կան յուսահատութեան մասին խօսուած է քու առիթով, առաւելարար: Եւ ոչ անտեղիօրէն... Բայց մասնակի, հաշմուած ճշմարտութիւն մը, գիտենք, ոչ-ճշմարտութիւն է: Եւ այս թեմաները առաջ քշող մեկնարանութիւն մը միայն «պիտի գեղջէր», պարզունակ ու աղքատ ընծայէր գործ մը եւ գգայնութիւն մը, որոնք ինքնին ճոխ են, բազմատարր ու երանգաւոր... Կը բաւեն ասոր համար վերի քանի մը տողը...: Իսկ ի՞նչ ըսել «Խանգարուած Վերելակը» ռատիօ-սփէչի Մեսրոպին, որ նախ կը ներկայանայ իբր կեանքի ասպարէզը դիտող

երիտասարդ, եւ... Բայց - ձայնը քու՛կդ է...

— Երիտասարդ Մեսրոպը... «Սիրելի... երեւակայական, անշօշափելի բաներ սիրելի լաւ չէ... Իրական բան սիրելի արդէն այնքան դժուար է, ալ ուր մնաց՝ գաղափար մը, Աստուած մը... Չեմ գիտեր, շատ չեմ հաւնիր կոր այս նոր կրօնքը... Եթէ պատահի, որ մեր ժողովուրդը սիւսալ ապրի քրիստոնէութիւնը, եթէ միայն լալ, ազօթել ու երեւակայել սորվինք...

«Երբեմն այնքան շատ է, ուժով է կեանքի վոլթաժը, ինքնաբան գետի մը պէս՝ որ գլուխս կը դառնայ, կու լամ... Ատանկ ատեններ մարդ անձնասպան ալ կրնայ ըլլալ ու չմեռնիլ տակաւին...

«Ես եզրաւորի իստուածք ունիմ, եիշդ է: Հաւանաբար լաւ եկեղեցական մը չըլլամ, ով գիտէ... Բայց ատկէ առաջ ուրիշ բան մը կայ, աւելի կարեւոր: Պետք է բազմութեան մէջ իջնեմ, անոր հետ ըլլամ, որ մեռցնէ իմ մէջի այս հսկայ սերը, այլապէս ան է որ գիս պիտի սպաննէ... Վերջը, աւելի ուշ, կարելի է դուրս ելլել մարդոցմէ: Բայց ոչ առաջ, ոչ...

«Ինքզինքիս հետ պիտի վարուիմ՝ այնպէս, ինչպէս կը վարուիմ մարդոց հետ, նոյնքան անգութ, նոյնքան... օտար: Մարդ չեմ, եթէ մարդու պատկերը հայրս է, եղբայրդ է... Ես հայ ալ չեմ, եթէ հայ ըլլալ կը նշանակէ չկրնալ ընտրել հողին եւ երկինքին միջեւ... Ժողովուրդ մը՝ որ օր մը կրնայ իր թաղականները պաշտել, անոնց գուրպակին հոտով լեցրել իր եկեղեցին... Հարկաւ մեծ ենք, եւ շատ մեծ. բայց հայերը իրենք չեն գիտեր ատիկա. եւ լաւ է, որ չգիտնան. կ'երեւակայե՞ս եթէ իմբազիրները, կուսակցական հոետարները գիտնային ատիկա... Ես ասոր համար է որ անգութ եմ հայութեան հետ. եթէ սովորական ժողովուրդ մը ըլլար...»

— Գոյութեան կան իրականի այս պաշտամունքը, կեանքի ու մարդոց հանդէպ այս սէրը... խորապէս ուրոյնացած են՝ ստեղծուած կերպարի ինքնուրոյնութեան մէջ. սէր՝ որ հակառակն է վերացական մարդապաշտութեան՝ հիւմանիզմի... Միւս կողմէ, այդ ուրոյնութիւնն իսկ խղճալի սոփեստութիւն կը դարձնէ որեւէ փորձ՝ անոր ետին տեսնել-վկայակոչելու արեւմտեան փրփրափայլութեան այս կամ այն մեծ ըստերը: Գալով կեանքին հրաժեշտ տուող դառն ու հիանալի իմաստուն Մեսրոպին՝ նուազ սրտառու չէ չէ ան...

— «Մարդիկ երջանիկ չեն, Կորիւն, ու չեն գիտեր պատճառը: Կը կարծեն նոյնիսկ, թէ կայ տրամարանական պատճառ մը, նպարավաճառի խելքին պառկող պատճառ մը... Ու այս ամբողջ իրարանցումը, որպէսզի մոռնան իրենց դժբախտութիւնը...

«Ի՞նչ կ'ըսես... Ամէն մարդու դժբախտութիւնը իր գիտ-

նախք բանն է... Ոչ, ոչ, ՈՉ (Կը պոռայ, առանց կորսնցնելու ինքզինքը): Ի՞նչ ըսել է ամեն մարդու ցաւը իր գիտնալիք բանն է, Կորիւն, ի՞նչ ըսել է: Ուրեմն դուն բան մը չես հասկցեր, այսքան տարի է... Ինչպէս ու բացատրել, երբ արդէն չես գիտեր... Մարդոց երջանկութիւնն ու տառապանքը իմ գործն է, մարդոց նախահաշը, մարդոց ակռայի ցաւը, մարդոց համբոյրը, լացն ու ինկողնքը իմ գործն են, ամէն բան իմ կեանքս է... Չէ՛ր գիտեր, որ այս ամբողջը պահելու համար պայքարեցայ ամբողջ կեանքիս ընթացքին: Մարդիկն են իմ բովանդակութիւնը... Բոլորը՝ մէկէն, մէկ անգամէն... Այսքան տարի կը նետուիմ աչ ու ձախ, Հայաստան, Վրաց երկիր, Միջագետք, Ատրպայտական, Աղուաններու երկիր... տեսա՞ր որեւէ տեղ մէկ հոգի, որուն հետ մտերմանայի. տեսա՞ր մէկը, որ մօտենայ ինծի... տեսա՞ր մէկը, որ սիրէի կամ ատէի... «Բայց տեսա՞ր ես մէկը, որուն հանդէպ անտարբեր ըլլայի, որուն հիւսիս գիշերանոցին դեղին հոտը, անձէն ծլած գաղտնի, սրտիկ բուսականութիւնը, աւրուած իամանիկի շարժումները իմ մասին չըլլային, գաղտնի ուստիականական ռաբորի մը նման:

«Արդէն ուրիշ բան չէի կրնար ընել: Ինծի համար արգիլւած էր: Միևնակ պէտք էր որ մնայի, որպէսզի հետեւէին ինծի... Բայց ոչ ոք կրցաւ հետեւիլ... Մարդիկ ասանկ են եղեր, Կորիւն... Վստահ եմ, 2000 տարի ետք աւելի գէշ պիտի ըլլայ, շատ աւելի... այդ վիճը՝ մտածուածին եւ գրելու ձեռքին, հաւատքին ու եկեղեցիին միջեւ, այդ վիճին մէջ պիտի իյնան բոլորն ալ...»:

— Մաշտոցի անձնական տուամբ ըրածներս է. կը յուշե՞ս անոնցմէ մէկ ուրիշը...

— «Գիրքերը, գիրքերը պիտի ազատէին զիս ինձմէ: Կը կարծէի, թէ գրելիքս աւելի կարեւոր պիտի ըլլար քան թէ գիրք. թէ պիտի բաւէր բանտարկել ապրումը՝ զայն նուաճած ըլլալու համար, անկէ՞ ազատելու համար... Նոյնը ըրի մարդոց հետ: Դպրոց գացի — բայց ի՞նչ գործ ունէի այդ վաճառատան մէջ. ես ինքիս պէտք չունէի... Յետոյ՝ արքունիք, բանակ, պատերազմ — մարդ մը ի՞նչ կրնայ ընել իրեն յատկացուած լուրսիւնով... Ապրիլ — ապրեցայ մեծ, լայն, բարձր ու ճակատագրական չափերով: Յետոյ՝ եկեղեցի, վանք, ճգնաբան — հոն ալ ապրեցայ: Արեւուն ճիշդ կեդրոնը մութ ըլլալու է. Յայտնութեան ճիշդ կեդրոնը մարդկային սրտի մը չափ սրտիկ տեղ մը ըլլալու է. նստարան մը, ուր երկու հոգի հանգչին քով-քովի ու մեղմ ձայնով խօսին...»

— Մաշտոց տակաւին կանխիկ պատգամ մը ունէր «ղամբանախօսական» ոճով իր մասին խօսելու պատրաստուող ձայներուն: Եւ եթէ իր կենսագիրը, մտքի ու խղճի «Հանգրստաւէտ» ընտրանքներու երթալով, չ'ուզեր գինք լսել — ան ալ կրնայ բաւարարուիլ այդ «պարապ խօսքերով»: Քանի մը բառ է յիշելիք...

— «Կորիւն, քեզի ըսելիք մը ունիմ, հո՞ւ եկուր: Գիտեմ, որ մեռնելէս վերջ պիտի գրես իմ մասին: Չգիտեցածդ ըսեմ քեզի: Կենսագիրս ես, ի վերջոյ...: Չես ուզեր լսել... Ուրեմն մի՛ գրեր իմ մասին: Ռատիոյի, բանախօսներու, ուսուցիչներու ըսած բոլոր պարապ խօսքերը, վրան քանի մը անձնական յուշ՝ ու լմնցաւ... »

— Մաշտոցի գոյութեան անհայտ տագնապը իր վեհութիւնը ունի. բայց չի դադրիր ցնցիչ ողորդութիւն ըլլալէ միանգամայն:

— Այո... Երբ ան հարց կու տայ՝ «Այս բոլորին մէջէն ի՞նչ կը հաշածէի, կը փնտռէի, գոր անշուշտ ունէի արդէն, բաց գոր կ ուզէի գտնել, որպէսզի կարենայի մերժել, ուրանալ, կորսնցնել... Չախողեցայ, բոլորին մէջ ալ ձախողեցայ... (կը խնդայ հեզնական) Իմ լարած թակարդիս մէջ ես ինկայ... Բառերը, բառերը... խեղդեցին զիս: Գիրքերը, մէկ-մէկ, սքանչելի են, գուտ երաժշտութիւն: Բայց երբ քով քովի գան՝ բառ շինեն ու վրադ կոխկոտնելով պարի ելլեն... ու այդ բառերու գիրկը կծկուած գաղափարները... Ինչպէս իսպուռեցայ, դաւաճանուեցայ...»

«Հայութեան ապագան կը մտահոգէ զիս, Կորիւն... Ասկէ հարիւր, երկու հարիւր տարի վերջ, երբ բոլոր առասպելները, աղօթքները, ինչ որ կը թռի աչքէ աչք եւ շուքէ շուք, ինչ որ հեքիաթ է ու խորհուրդ... այս բոլորը սուր քիթով, մուկի աչքերով դպիրներ գրի առնեն, բանտարկեն ու ամլացնեն... երբ մարդիկ սկսին մտածել, չափել ու վերլուծել իրենց գոյութիւնը, հասկնան թէ կեանքը զուրկ է իմաստէ՝ առանց երբեք գիտնալու, թէ ինչու կարեւոր չէ ատիկա...»

— Ողորդութեան գագաթնացումը, անշուշտ — երբ Մաշտոց կ'այրէ իր ձեռագիրները ամբողջութեամբ, եւ կը մեկնի՝ ուս-ուսի ա՛յլ ողորդական հերոսի մը — տակաւին ապագայ ողորդական հերոսի մը — իրեն այցի եկող Վարդան Մամիկոնեանին հետ:

Այնպէս որ, պարզունակ մեկնարանութիւն պիտի ըլլար տասր տարի ետք՝ 80ականներու սեմին, «Ահագանգ» հատորի դրած վահէ-օշականեան գգայնութեան նոր, աւելի մտայն ու տագնապալի «արմոնիք»ները վերագրել բացառապէս կենսագրական տուեալներու՝ պատերազմ, արմատախլում Լիւրանանէն, սուանձնութիւն... Նոյնիսկ եթէ կը դրսեւորուին այս տուեալներու պատկերային համակարգին մէջէն: Յամենայնդէպս, նոր այդ հատորին տիրող բներգը՝ մոթիւր, կը դառնայ Ահագանգը (ասիկա ըսուած՝ ոչ միայն նոյնանուն սկզբնական հատուածին համար): Ներածող բացատրութեամբ մը կ'ըսես՝ «մեզի՛ ի՛նչ ահագանգ... ինչպէ՛ս... ինչո՛ւ...»

— Ահագանգը՝ նախ՝ «Լեղապատառ կը վազեմ՝ ... ամէն առտու մարդ էակի թարմ պաշար բեռնակառքով կը բերուի, պէտք է հասնիմ՝ չսպառած, պէտք է փախիմ, փողոցներէն խեղճ արտառոց ինչ մարդ կայ կը հաւաքեն երգչախումբ պիտի կազմեն, անցագիրս գողցեր են, նոր ինչպէ՞ս պիտի հանեմ գրասենեակը չգոցուած ժամացոյցս կորսուեք է, մէկը չկայ, որ օրն ու ժամը հարցնեմ, փողոցներուն անունները ամէն գիշեր կը փոխեն, ... ես ամէն առտու գլխու պտոյտ կ ունենամ բայց ոչ բժիշկ կայ ոչ դեղագործ միայն աչքերս առողջ են, այնքան յստակ, ուժով կը տեսնեմ որ ցաւ կը զգամ... ... Ու կը վազեմ Չեսքնաթ փողոց ըլլալու է, վերջ չունի հիւանդ նիհար քառասուննոց դատարկապորտ մը կը տեսնեմ, ինձ նման մարդ մը, ձեռքով տարտամ բարեւ մը կու տայ հեռուէն նստած միևնակ հսկայ եկեղեցիին գոց դրան առջին, աստուած ըլլալու է, շունչս կարճ է, շուտ կը յոգնիմ, ներսէն դուրսէն կը հեւամ պաղ է հովը ու կը մսիմ միս միևնակ...»

— Բայց, Վահէ Օշական, Ահագանգը նաեւ «ուրիշ բան» չէ՞... Ո՞չ մանաւանդ պատգամ՝ մարդոց տրուելիք, այն՝ որուն յանձնառու կը դարձնեն իսկական գրագէտ-մտաւորականին «առողջ աչքերը», ցաւառիթ յստակատեսութիւնը: Պաշտօն՝ որուն գիտէիր մղել դեռատի ուսանողներդ, «Բագին» իսառն հանդիպումներու բեմանցքներէն մինչեւ «Անքրի-Մամգ» ի սրճահոտով եւ մուխով յագեցած ոլորտները: Որուն մասին նոյնիսկ գիտէիր անվերջ ռմբակոծել՝ ստեղծագործական գրականութենէ հեռանալ վճռած (քու բառով՝ անոր «դաւաճանած») կրտսեր բարեկամներդ:

— Այո, Ահագանգը նաեւ՝ «Կու գայ առտուն Երբ բուն ահագանգը կը հնչէ պայուսակա առած, դուռս կղպեմ, վար իջնեմ ու ալ երբեք ետ չգամ: Պիտի վազեմ թաղէ թաղ, ինչպէս միշտ... Ես պիտի գամ այս անգամ լարախաղացի զգուշ վստահ քայլերով

պիտի թակեմ ձեր պատերուն, որ զգաք թէ պարապ եմ, ու սթափիք

ձեր ոտքերէն պիտի կախեմ ու յետոյքէն պիտի զարնեմ, որ շունչ առնէք ու ապրիք,

պիտի պատռեմ ձեր մորթերու աստառները, որ աշխարհը շօշափէք ու սիրէք:

ձեր կոպերը պիտի հանեմ որ չկրնաք քնանալ ու անիծէք լոյսին փայլը

ձեր մատներու մորթին գիծերը պիտի արեմ՝ ասխտով որ ետ վազէք Ուրարտուի կիրճերուն ու փնտռէք...:

«Անանկ որ փողոցի դրան քով հաւաքուեցէք

ինչպէս 52րդ փողոցի սեւերը կ'ընեն ամէն իրիկուն, սպասեցէք իմ գալուս,

չեմ ուշանար:

«Ես չեմ գիտեր երբ կու գամ,

միայն գիտեմ, թէ ինչ պիտի ընենք միասին:

... Որ կարենանք, ի վերջոյ, զիրար տեսնել, իրար դպնալ ու հոտուրտալ,

զիրար սիրել ու չարչարել...

«Ես եկեր եմ ու կ'երթամ, հաւանաբար այս գիշեր,

դեռ քանի՛ դար պիտի անցնի մինչեւ նոր մը տեղս գայ, կենաց-մահու խնդիր է աս, հէյ մարդիկ...»

— *Կը հասնին 90ականները: Աշխարհացունց դէպքերու հետքին մէջ, կը ցնցուի նաեւ մեր ազգային իրականութիւնը — երկու բառով ըսուած՝ ազգային անկախութիւն, նոր պետականութիւն: Քանի մը ընտրուածներ փոխ կու տան՝ քեզ շատ ամփոփ դրսեւորող...*


— «Ծօ Հայաստանը... Հայաստանը անկախ եղաւ, կրնա՞նք երեւակայել... անկախ Հայաստան... ինչպիսի պայ... չեմ կրնար կոր հաւատալ, տղայ... տարիներու երազը... խեղճ Մուշեղ հօբարը, կը յիշե՞ս... Պապօն, Պապօն. «Ես Հայաստան երթամ տի աչերս բացուին», ան ողջ ըլլալու էր հիմա... կը հասկնա՞ս ինչ կը նշանակէ... Մէկ անգամէն ամէն ինչ փոխուեցաւ մեր կեանքին մէջ... կարծես թէ ուրիշ մէկն եմ, աւելի ուժով... կարծես հայր մը գտած եմ, մինչեւ հիմա որք էի, բայց հիմա... »

— *Իսկ տիպեկտիկ, բարդ իրականութեան հակադիր ե՞զրը...*

- «Մարի, Հայաստան երթալու մասին լո՞ւրջ ես... Ի՞նչ գործ ունիս դուն հոն. քեզ կը խաչեն, եթէ շատ առաջ երթաս: Զգուշ եղիր. ատ պայմաններուն դուն չես դիմանար. դուն Սփիւռքի պտուղ ես, հոս միայն կրնաս ծաղկիլ... սակայն գիտեմ ինչ թիփ ես, չեմ պնդեր Սփիւռքի մասին, ատիկա իստուածաբանութի հարց է. արթնութիւնը, միսթիքներու, յեղափոխականներու պէս: Թէ՛ մնալը, թէ երթալը... Ամէն պարագայի, մաքս էր պիտի երթաս հոսկէ, պիտի չփախչիս... Քաջ եւ առողջ...»

— *Ճիշդ է, որ այդ «քաջ եւ առողջ» յարաբերութիւնը հայրենիքին հետ՝ ոչ մէկ պայմանով տկարութեան, կախումի, հոգեբանական փոխադրումներու՝ թրանսֆէրներու յարաբերութիւն պէտք է ըլլայ: Ան մանաւանդ չի կրնար (յաճախ դառն) իրականութիւններու անտեսումի վրայ հիմնուիլ: Ու թէեւ, ճիշդ ինչպէս կը շեշտէիր ամառնային շրջագայումներու անմոռանալի քանի մը շարաթներու, Վենետիկի ջրանցքներուն քովն ի վեր, «պատգամ մը պէտք է փոխանցել նորերուն»: Բայց այդ պատգամը, որքան ալ ազգային մտահոգութիւններու արձագանգող, կը մնայ խորապէս պարկեշտ, պայծառատես, «քաջ ու առողջ», մէկ բառով՝ վահէօչականեան... Կը լսենք քեզ...*

- «Հայրենիքը հայր է մեր բոլորին ու մենք Սփիւռքի մէջ անառակ որդիներու պէս գացեր-հեռացեր ենք դուրսերը, բայց կը սիրենք մեր հօրենական տունը, Հայաստանը: ... Մենք Հայաստանէն հեռու եւ անկախ կը մնանք, որպէսզի մենք մեր ուժերով հասունանանք, առանց հայրական հովանիին ու իրատներուն: Մենք Սփիւռքի մէջ պիտի ապրինք իբր հայ, որովհետեւ որոշեր ենք այդպէս, պարզապէս



մեր իօսքը ունինք, եւ սիրոյ մեծ ուժ մը կայ կեանքի մէջ ու մենք եւ հայ ըլլալը ատոր կապուած են:

«Շուրջդ հայութիւն մը կայ, մեծ մասը ոչխարի հօտ է, ինչպէս ամէն տեղ. չէրջի-մէրջի, տեղ մը հասնելու հիւանդութեան բռնուած, ինչ գիտնամ: Հոս հայկական կեանք մը կայ, մեծ բան մը չէ Ամերիկայի լաւագոյնին բաղդատմամբ, բայց տանելի է, մերն է, հիմէն կու գայ, յիշատակներով լեցուն, իր քաղցրութիւնը ունի մեզի համար... Մեր գաղութը եւ միւս գաղութները Հայաստանի պատիկ հողերն են Հայաստանէն դուրս: Անգլիացիք «աութ-փութ» կ'ընեն, բերդաքաղաքներն ենք, կայսրութիւնը կը պաշտպանենք... Մենք՝ Սփիւռքի հայերս այդ բերդերուն պահակներն ենք... Ես չեմ ուզեր, որ Սփիւռքը ընտրես, որովհետեւ ես հոն եմ. ոչ, ասանկ բաներու մէջ եղբայր-քոյր սեր չկայ... ընտանեկան սերը միշտ կ'ըլլայ՝ ուր որ ալ ըլլանք... Քոյրդ պիտի երթայ... թող երթայ, լաւ կ'ընէ: Մարդ իր սրտին ուզածին ետեւէն պէտք է երթայ, սրտին քաշածը պէտք է ընէ՝ եթէ ինչքը արտօնէ: Դուն ալ՝ նոյնը... «Իսկ ես... ես ալ կը սիրեմ, կը պաշտեմ հայրենիքս. Բայց այս է իմ աշխարհս... Հոս ծնած եմ, հոս մեծցած եմ, աս հայութիւնը հանչեցած, սիրած եմ. ասոր կը պատկանիմ: Հիմա՝ որ անկախ Հայաստան մը կայ, ամէն մարդ անով իսնդալառ է, ամէնն ալ մոռցած են Սփիւռքը, հազար տարուան կոխը, տառապանքը, գեղեցկութիւնները, յաղթանակները, անկարելի յոյսերու կառչող ինտիմները... Ահագին մեծ ժառանգութիւն է ատիկա... մեր (արեւմտահայերէն) գեղեցիկ լեզուն, մեր պատմութիւնը, փորձառութիւնը Հնդկաստանէն Պէրսիա եւ Ամերիկա...»

(Հոս՝ ընդհատուած):

* Ընթերցողէն կը խնդրեմ մէջբերումներուն վրայ կատարուած անխուսափելի հատումներուն վնասը դարձանել՝ գործերու ընագիրին յղուելով — Վահէ Օշական կարդալով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



«Յեղափոխական մտաւորականութիւն» արտայայտութիւնը շատ խոցելի յղացք մըն է ու սկիզբէն իսկ դատապարտուած՝ եթէ Պատմութիւնը որեւէ բան կը սորվեցնէ մեզի: Այս «Եթէ»ն շատ կարեւոր է, տրուած ըլլալով որ քսաներորդ դարու վերջին քառորդին մտաւորականութիւն, մշակոյթ ու գրականութիւն իրողութեանց յղացումն ու տարածումը կը թուին հնազանդիլ իրենց ականդական ըմբռնումներէն տարբեր օրէնքներու:

Աւանդական ըմբռնումով արուեստը ընտրանիի մը կողմէ կը ստեղծուի ու ընտրանիով կ'արտայայտէ մտածումները, գոր գնահատելու ատակ չէ եկող-գացողը: Միւս կողմէ, գանգուածը՝ որ թէ՛ յեղափոխութիւնը իրագործող գէնքն է եւ թէ՛ ալ յեղափոխութեան հում նիւթը եւ որ յեղափոխութիւնը գաղափարէն իրականութեան կը վերածէ, իրեն յատուկ արուեստը ունի: Ատոր անունն է «Յեղափոխական Արուեստ», որուն մղիչ ուժը նոյն ոգիով յեցած մտաւորականութիւնն է: Կարգախօսներու, կրքոտ խմբագրականներու, փոսթըրներու, երգերու, ոտանաւորներու, հոստորական ճառերու եւ հրավառ սուտերու մշակոյթ մը կայ, որ այդ գործով կը գրադի: Բայց գանգուածներու գիտակցութեան մէջ պայքարի կոչումը արթնցնելու ու գանոնք այդ ուղղութեամբ մղելու լաւագոյն գէնքը՝ կը մնայ մամուլը: Եւ որոշ չափով՝ թատրոնը:

Պատմութեան կողմէ այդ «գանգուածներու արուեստին» դատապարտութիւնը ու այդ վճիռի հարուածին տակ ինկած գոհերու դիակները չորս կողմերնիս են, քիչ մը աւելի յստակացած՝ հիմա որ աշխարհի մէջ ընկերային կարգերը, բացի Երրորդ Աշխարհի տասնեակ մը երկիրներէ՝ գտած են որոշ հաւասարակշռութիւն եւ ոճիրը կրկին պետականացած ու սրբացած է:

Ինչ որ ստեղծուած է մարդոց գգացումներուն հետ խաղալու, անոնց մտածումներուն վրայ ազդելու համար այս կամ այն ուղղութեամբ՝ հին պատուած թերթերու պէս ամէն տեղէն մեզի կը նայի: Այս քաթեկոսիին տակ կ'իյնայ Խորհրդային Հայաստանի յեղափոխական գրողներու առաջին սերունդը, որ ճանչցուած է որպէս «Պրոլետարական Գրողներ» ու սերունդ, սկսեալ Յակոբ Յակոբեանէն մինչեւ Չարենցի ժամանակակիցները: Ու դեռ աւելի մօտ՝ Պատերազմի Սերունդը, Մարմէնէն մինչեւ Երրորդ, որ հայրենասիրութեան պատրուակով հետադարձական ու գերզգացական դիւրին գրականութիւն մըն ալ մշակեց, որուն «բրորականտ» անունը կու տանք:

Ահա այս է որ պատմութիւնը կ'ուսուցանէ. — ով որ բաւերով կը խաղայ՝ բաւերուն գոհ պիտի երթայ:

«Արուեստ եւ քաղաքականութիւն» աւելի ընդարձակ հարցին մէկ երեսն է այս եւ որու շուրջ կարելի չէ վերջնական եզրակացութեան մը յանգիլ, որեւէ ատեն: Եւ ուրիշ մէկ երեսը այն է թէ՛ բուն, ճշմարիտ կեցուածքը «արուեստի յեղափոխականացումն» է: Այսինքն՝ արուեստը եւ մշակոյթը կը մնան իրենց բարձրութեան վրայ, ոչինչ կը գոհեն իրենց անկախութենէն ու գեղագիտական չափանիշներէն՝ բայց կը զարգացնեն յատկապէս յեղափոխական նկարագիր մը: Այս ըմբռնումին կը մօտենայ Թրոցքի կարծիքը իր «Գրականութիւն եւ Յեղափոխութիւն» անուն գիրքին մէջ, ուր ան կը գրէ. «Երկու տեսակ յեղափոխական արուեստ կայ. այն գործերը՝ որոնց թեմաները կը պատկերեն Յեղափոխութիւնը, եւ անոնք՝ որոնք ոչ մէկ կապ ունին Յեղափոխութեան թեմային հետ,

բայց ամբողջութեամբ տոգորուած են Յեղափոխութենէն ծագում առած նոր գիտակցութեամբ»:

Արուեստի յեղափոխականացումը կը սկսի արուեստագէտէն: Հսկայական ու բարդ նիւթ է այս, որուն մասին ամէն բան կարելի է գրել: Մէկ ծայրը այն է, թէ ամէն արուեստի գործ արդէն իր ընդմեջումը յեղափոխական է՝ անկախ իր նիւթէն կամ ոճէն: Միւս ծայրը այն է, թէ արուեստագէտին ստեղծած յեղաշրջումը ինքնանպատակ է, ինքն է իր իտէայր: Ինք կը ստեղծէ իր օրէնքները, որոնք ոչ ոքի կը հնազանդին: Այդ ալ ծագում կ'առնէ արուեստագէտէն, անոր կեանքի օրէնքէն, ըլլայ ան պատնէշներու ետին կռուող մը, աղքատ ու շահագործուած երկրի մը մէջ հասարակ ժողովուրդի կողքին պայքարող, ըլլայ աւելի բարձր մակարդակի վրայ կրթութեամբի կամ Պրէշթի թեքնիքով ապրող դերասան մը: Ալլան-կարտ ու փորձառական արուեստները, մշակոյթը իրենց ձեւով նոյն բանը կ'ընեն: Ասով հանդերձ դժուար չէ երեւակայել տրամատիկական կացութիւններ, ուր վաւերական յեղափոխութիւնն ու վաւերական մտաւորական-արուեստագէտը իրար կը միանան:

Այս տեսակ հանդիպումի մասին կը խօսէր Թրոցքի, երբ նոյն յողուածին մէջ կը գրէր, թէ արուեստագէտին ներշնչումը եւ ընկերային ըմբռնութիւնը նոյն ակունքէն կրիսին, այսինքն՝ անարդարութիւնը ատելը եւ գեղեցկութիւնը սիրելը հակասական գգացումներ չեն անհրաժեշտօրէն եւ յեղափոխական այն ոգին, որ քաղաքական կայունութիւն մէջ յայտնուած էր՝ պիտի յաջողէր յեղափոխական արուեստի մը ծագում տալ ճիշդ իր պատկերով եւ իր պահանջներուն համաձայն: Վերջապէս, Թրոցքիի համար արուեստը ոչ թէ պարզ ծառայութիւն մըն էր յեղափոխութեան, այլ՝ անոր օրկանական յանգումը, արտադրանքը:

Վաթսուն տարի առաջ արտայայտուած այս գաղափարները այսօր մեզի՝ հայերու համար կրնան օգտակար ըլլալ, որովհետեւ մենք միշտ հակամէտ եղած ենք մտածելու թէ արուեստը, մտաւորականը կամ արուեստագէտը պարտին ծառայել իրենցմէ գերադաս իտէային, որ ազգին շահն է, հայրենիքն է: Կր խորհինք, թէ կուսակցական մտաւորական մը իր գործով պէտք է օգնէ իր կազմակերպութեան դատին, առանց անդրադառնալու, թէ արուեստի աշխարհը մեր գիտցած ընկերութեան ու ընդմեջում օրէնքներուն չի հպատակիր, այլ ունի իր բոլորովին տարբեր, երբեմն նոյնիսկ հակադիր կանոնները, քերականութիւնը:

Բայց այդ խնդիրը իր տեսարանական կողմերով մեզ շատ կը հեռացնէ մարդկային տառապանքի աշխարհէն, որ մեզ կը խեղդէ ամէն կողմէ: Այդ հեռացումը ինքնին տազնապ մըն է ոչ այնքան յեղափոխականին եւ կուսակցականին՝ որքան մտաւորականին համար, որ յաճախ ստիպուած է դժուար ընտրութիւն մը ընելու կեսարին եւ Աստուծոյ միջեւ: Սակայն այդ մասին ուրիշ առթիւ:

... Մենք միշտ հակամէտ եղած ենք մտածելու թէ արուեստը, մտաւորականը կամ արուեստագէտը պարտին ծառայել իրենցմէ գերադաս իտէային, որ ազգին շահն է, հայրենիքն է: Կր խորհինք, թէ կուսակցական մտաւորական մը իր գործով պէտք է օգնէ իր կազմակերպութեան դատին, առանց անդրադառնալու, թէ արուեստի աշխարհը մեր գիտցած ընկերութեան ու ընդմեջում օրէնքներուն չի հպատակիր, այլ ունի իր բոլորովին տարբեր, երբեմն նոյնիսկ հակադիր կանոնները, քերականութիւնը:

ՎԱՏԷ ՕՇԱԿԱՆ

«ԵՍ ՎՍՏԱՀՈՒՄ ԵՄ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՄՏՔԻ ԶՕՐՈՒԹԵԱՆԸ»

Սփիւռքում ճանաչուած գրող, հրապարակախօս Վահէ Օշականը միայն այս վերջին տարիներին առիթ ունեցաւ գալու հայրենիք: Նրա վերջին այցելութիւնը 1999 թուականին Երեւանում կայացած Սփիւռք — Հայաստան խորհրդատուական առիթով էր, ուր էլ հանդիպեցի նրան: Դժբախտաբար, սա եղաւ նրա հետ մեր վերջին գրոյցը, այցելութիւնն էլ նրա վերջին այցելութիւնն էր:

ՀԱՐՑՈՒՄ.- Ի՞նչպէս էք գնահատում Հայաստանի ներքին քաղաքական վիճակը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Գիտէ՞ք, շատ դժուար է կուսակցի, որովհետեւ սովորութիւնն չունեմ թերթերին վստահելու, իսկ միւս կողմից էլ ժողովրդից անընդհատ դժգոհութիւն եմ լսում: Վերջինս այն կարծիքին է, որ իրենով գրադուստր չկայ: Վստահ եմ, որ սա չափազանցըւած է:

Դառնացած մարդիկ միշտ գնում են ծայրայեղութիւններ: Ես կարծում եմ, որ Հայաստանի քաղաքական ուղիւթիւնը շիտակ է: Սփիւռքում մենք կարծում ենք, որ Ռուսաստանի հովանու ներքոյ Հայաստանն ամենապահով վիճակում է: Եւ երեւի թէ այս ըմբռնումը սխալ չէ: Ի հարկէ, կան նաեւ մարդիկ, որոնք նախապատուութիւնը տալիս են Միացեալ Նահանգներին:

Ինչ վերաբերում է քաղաքական կուսակցութիւնների առատութեանը, ապա նոր-նոր ժողովրդավարութիւն ստեղծող եւ աշխարհով մէկ ցրուած ժողովրդի համար դա միանգամայն ընդհանր է: Ես կարծում եմ, որ հինգ տարուան ընթացքում այդ կուսակցութիւնների թիւը կը հասնի առաւելագոյնը 3-5-ի: Ես կոյր հաւատք չունեմ, բայց ունեմ գգազական համոզում, որ մեր ուղին շիտակ է:

Հ.- Դուք 3 շաբաթ Արցախում էիք եւ դասախօսում էիք Ստեփանակերտի, եթէ չեմ սխալուում, երեք համալսարաններում: Ի՞նչ մօտեցում ունի արցախցի ուսանողը արեւմուտահայ գրականութեանը:

Պ.- Շատ ուշիմ ուսանողներ կան, բայց տակաւին գոց մտքեր են: Չես կարող շատ բաներ բացել, որովհետեւ երկիրն ապրում է գինուորական վիճակի մէջ եւ այդ աղջիկներն ու տղաները կամաց-կամաց պէտք է բացուեն դէպի յոյսը: Յայտնի պատճառներով նրանք անգէտ են արեւմտահայ գրականութեանը: Ես վստահ եմ, որ ժամանակի ընթացքում դա էլ կը փոխուի, բայց աւելի մեծ անգիտութիւն կայ, թէ ի՞նչ բան է սփիւռքահայը:

Յաճախ ուսանողներն ինձ նայում էին շուարած ու չէին հասկանում, թէ ինչ եմ խօսում: Ու 3-4 լեզուների մէջ խճճուած ես փորձում էի նրանց արեւմտահայ գրականութիւն ներկայացնել: Բայց ես վստահ եմ, որ սա էլ ժամանակի խնդիր է: Անկեղծ ասած, ես նրանցից շատ բան սովորեցի:

Կեանքի հանդէպ վերաբերմունք ունեն, որ բոլորովին նոր է ինձ համար, վստահ եմ՝ նաեւ Հայաստանի համար: Ի դէպ, շատ մեծ տարրերութիւն կայ արցախցիների ու հայաստանցիների միջեւ: Ղարաբաղցին շատ բաց է, բայց դո՛ւ պէտք է մօտենաս նրան, եթէ չմօտենաս՝ չի բացուի: Նրա մէջ մարդու կարօտ կայ, մարդու վայելում ու յարգանք, դա չնաշխարհիկ

բան է: Մի խօսքով՝ Արցախն ուրիշ աշխարհ է, ես կ'ասէի նոյնիսկ՝ ուրիշ մոլորակ:

Հ.- Համաշխարհային գրականութեան պատմութեան մէջ հայ գրականութիւնն ի՞նչ արժեքներ է ստեղծել, որոնցով հիմա մտնում է նոր դարաշրջան:

Պ.- Սկսեմ արեւմտահայ գրականութիւնից: 1900-1910 թուականներին ընթացքում, այսպէս ասած, դարը բացում են արեւմտահայութեան կարկառուն դէմքերը, Սիամանթօ, Վարուժան, Թէքէեան, Չարեան, Եսայեան, Մեծարեանց, Յակոբ Օշական: 1895 թուականի ջարդերից յետոյ դա կարծես ստեղծագործական աւելի մի ներքին պոռթկում էր, որի նմանը մինչ այդ չէր եղել: Երկրորդ պոռթկումը եղաւ 1915-ի Եղեռնից յետոյ, որը կարծես հէնց Եղեռնի պատասխանն էր աշխարհին: Օշականի, Թէքէեանի ու Սարոյեանի գործերը հարաւաններ են, որ մենք տուեցինք թուրքին՝ ապացուցելով, որ մենք ո՛չ միայն չենք կոտորուել, այլեւ աւելի գորաւոր ենք դարձել: Դրան յաջորդեց Շահնուրի, Վազգէն Շուշանեանի, Նիկողոս Սարաֆեանի շրջանը: Այդ շրջանն էլ պատերազմով խաւարեց: 50-ական թուականներին Պէյրութում եւ Պոլսում գրական պարթօնք եղաւ, բայց դա էլ ընդմիջուեց արարական յեղափոխութեամբ:

Կեանքի հանդէպ վերաբերմունք ունեն, որ բոլորովին նոր է ինձ համար, վստահ եմ՝ նաեւ Հայաստանի համար: Ի դէպ, շատ մեծ տարրերութիւն կայ արցախցիների ու հայաստանցիների միջեւ: Ղարաբաղցին շատ բաց է, բայց դո՛ւ պէտք է մօտենաս նրան, եթէ չմօտենաս՝ չի բացուի: Նրա մէջ մարդու կարօտ կայ, մարդու վայելում ու յարգանք, դա չնաշխարհիկ բան է: Մի խօսքով՝ Արցախն ուրիշ աշխարհ է, ես կ'ասէի նոյնիսկ՝ ուրիշ մոլորակ:

Կեանքի ընթացքում 3-4 անգամ նման գրական վերելքներին վայրէջքների ականատեսն եմ եղել: Բայց 20րդ դարում մեր գրական էներգիան կարծես անսպառ էր: 70 թուականներից յետոյ Սփիւռքի գրական դիմագիծը նորացաւ եւ շուրջ 25 տարի է այդ դիմագիծը չի յստակեցուած, որովհետեւ «Սփիւռք» կրնչանակի բազմադիմագիծ լինել, բազմայեզու, բազմամշակոյթ, ինչ որ ենք հիմա:

Դառնալով արեւելահայ եղբայրներին, պէտք է ասեմ, որ առաջին գրական սերունդը, որ 20րդ դար մտաւ, վաւերական բանաստեղծական գագուկներին շտեմարան էր: Սակայն, դժբախտաբար, համայնավարութիւնը եկաւ եւ նրա մէջքը կոտրեց: 37 թուականի մաքրագործումները շատ ծանր նստեցին մեզ վրայ: Եւ, իմ կարծիքով, ամենամեծ արեւելահայ արձակագիրը՝ Բակունցը, դրա առաջին գոհր եղաւ: Ի հարկէ, նման մարդիկ անմահ են, որովհետեւ նրանց գործն է անմահ, բայց ապրումների, խոհերի մի մեծ պաշար կար, որ այդպէս էլ չփոխանցուեց մեզ: Այնուհետեւ ստալինեան անապատի շրջան է գալիս: Գործում է հասարակ բանաստեղծների մի խումբ, որը որեւէ բան չի աւելացրել մեր գրականութեան մէջ: Ամէն դէպքում, իր արեւելահայ եւ արեւմտահայ թեւերով, մեր ժողովրդի ստեղծագործական միտքն աւուղջ է, եւ ես վստահ եմ այդ մտքի գորութեանը:

Զրոյցը վարեց՝

ՌՈՒԶԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆԸ

ՎԱՀԷՆՆԵՐԻ ՕՇԱԿԱՆԸ

(ԽՈՒՐՄԱՆ ԻՐ ՄԱՍԻՆ)

Քսաներոյ դարու կիսուն հրապարակ իջաւ իր առաջին գիրքով, «Պատուհան»ով, որ կարծէք աշխարհի դիտելու նոր հայեացք մը շնորհած էր իրեն: 1956ին բացած էր պատուհան մը գրական աշխարհէն ներս, ներծծելէ ետք եւրոպական գրական անդամատանին բոլորէր, յագենալով մասնաւորաբար ֆրանսական մշակոյթով: Փարիզը եղած էր իր հետաքրքրութիւններուն առանցքը: Բարձրագոյն ուսում, եւրոպական թէ ամերիկեան հին ու նոր գրականութեան հետ սերտ ծանօթութիւն, իսկ աւելի ուշ՝ տոքթորայի տիտղոս: Այս եղած էր մեկնակէտ մը անկասկած, խորասուզուելու նաեւ հայկական հնադարեան եւ միջնադարեան ծաղկոցներու մէջ, ուրկէ քաղած իր աւելի կը ջրդեղէ հոգեմտաւոր հորիզոնը:

Անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներուն տիրապետած այս բանաստեղծը, արձակագիրը, մտաւորականը, դասախօսը ունեցաւ նաեւ թարգմանչական գրականութեան նուիրում աշխատասիրութիւններ: Չանք չիւնայեց հայ գրականութենէն էջեր թարգմանելու անգլերէնի, անգլիախօս ընթերցասէրին ծանօթացնելու հայ գրականութեան իրաւաստուկ պատկերը, գեղեցկութիւնը:

Իր մեծագոյն յատկանիշը պէտք է փնտռել նախ՝ իր աշխատունակ, ստեղծագործ տրամադրութեան, խառնուածքին մէջ: Գրելը սնունդ էր իրեն համար, հացի եւ ջուրի նման: Արձակ, վէպ, պատմուածք, քերթողութիւն, թատերախաղ, հրապարակագրութիւն եղան իր գրիչին սնունդ տուող սեռերը: Կիրք ունէր արտասայտուելու ամէն կարգի, նոյնիսկ անտեղի կամ ոչ պիտանի երեւոյթի մասին: Հոսկէ՛ իր յանդգնութիւնը այսպանելու, պախարակելու ա՛յն՝ ինչ որ չէր համընկներ մեր ազգային եւ մշակոյթին իրականութեան հետ: Ըմբոստ ոգիով կը մօտենար հարցերուն, բնէն թէ գրականութեամբ, խօսքով կամ գիրով: Կ'ուզէր պարմացնել շրջապատը, չըլլալիք, անկարելի հարցի մը շուրջ իր ինքնուրոյն, օրիժիւնալ կարծիքը հրապարակելով: Իբրեւ գաղափարական պատկանելիութիւն, իր պատկանած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերուն մէջ եւս եղաւ եւ գուցէ նկատուեցաւ «պարտուղի» տղան, բայց միշտ մնաց սիրելի, յարգելի, հմայքին տիրապետած դէմքը:

Սեռային վիճակներ բացայայտօրէն նկարագրող իր բացատրութիւնները չէի սիրած: Անգամ մը այդ մասին խօսեցայ իրեն հետ, հարցադրոյցի մը ընթացքին: Ինք պարմացաւ յանդրգնութեանս, եւ գուցէ զիս նկատեց անտարբեր մը կեանքի երեւոյթներու նկատմամբ:

Մահը չէ, որ կը տրտմեցնէ մեզ այս պարագային, այլ՝ բացակայութիւնը հովասուն շուրջին, որ արմատաւորում ծառ մը կրնայ պարզելէլ արեւուն տապէն տոչորած մարդուն: Շուրջ երբեմն աղբիւրի մը համն ալ ունի, պապակ կը յագեցնէ, յոյսը կը ներշնչէ մօտակայ դալարիքին մէջ հոսող աղբիւրին: Իսկ երբ ամայութիւն է անապատի նման, ովստիսները՝ ցամքած, շուրջերը՝ կորսուած, գլուխդ տար-քսան տարիները քշած-տարած էին անունները նուիրեալներուն, որոնք բաժակ մը սուրճով ոգեւորուած հայ գրականութեան անդամատանը կը ծաղկեցնէին: Ո՛րք են այդ անունները. ծամանակակից մէկ-երկու անուն կարելի է վկայաբերել ներկայիս, իսկ յաջորդականութեան մասին խօսիլ իսկ աւելորդ է. այդ հարցում մը ուղղելը կը թողունք համակարգիչին...

Գրողի մը գործերը կը սիրենք կամ չենք սիրեր: Ասիկա ընթերցողին իրաւունքն է, անոր ճաշակէն թելադրում տրամադրութիւն: Այսուհանդերձ՝ ոչ ոք կրնայ որանալ գրիչ շարժող հաւատաւորին ներգործութիւնը, մշակոյթ ծաղկեցնելու անոր քրտինքը: Կուտակուած գիրերը եթէ նոյնիսկ ընթերցողի կարօտը ունենան, փոշիանան առանձնութեան եւ լարուածութեան անտարբերութենէն, դարձեալ չեն յուսալքուիր, որովհետեւ գիրք ու գիր, մամուլ եւ հրատարակութիւն կ'արժեւորեն իրենց գոյութիւնը, եւ սեղանիդ վրայ հանգիստ ծուարած հատոր մը իր ներկայութեամբ ինքզինք կը պարտադրէ:

«Ո՛րք են ձիւները երէկուան», պիտի գոչէր ֆրանսացի բանաստեղծ Վիլյեմը, դարերու խորերէն իր ճայնը լսելի դարձընելով: Այո, ո՛րք են ձիւները եւ... արեւները երէկուան...

Յանդգնութիւնը եղած էր Վահէն Օշականի ընկերը, խորհրդաւորու: Եղեռնի 50ամեակին առիթով հրապարակուած իր մէկ յօդուածով համարձակած էր գրելու, թէ Գրիգոր Զօհրապ մեռած էր արդէն, երբ նահատակուեցաւ: Այս հաստատումը իրը ըլլալով, ահագին դառնացողներ ցցեց իր դէմ, ու ինք առանց չքմեղանքի բացատրողականով մը ըսաւ. այսինքն՝ ըսելու պէտք, որ ստեղծագործելէ դադարած շուրջ յիսունամեայ Գ. Զօհրապ գրագէտը արդէն տուած էր իր տալիքը՝ իբրեւ արձակագիր: Բայց ընդվզողները չէին համոզուած այսպիսի «մեղմացուցիչ» մեկնաբանութեան:

Կը բաւէր, որ հայ գրականութեամբ, հայ մշակոյթով կը տագնապէր: Ստեղծագործական իրաքանչիւր արտայայտութիւն ուրախութիւն եւ տրտմութիւն կը պատճառէին իրեն, որովհետեւ չէր հանդուրժեր անխիղճ ու անսիրտ վերաբերումներու,

իսկ նորափոխ ծիլերուն վրայ կը գորգորար, մա՛նաւանդ երբ անոնք նորարարութեան անունով հրապարակ կ'իջնէին. անոնց մեծ յոյսեր կը կապէր Վահէն Օշական: Եթէ պատահէր, որ այդ յոյսը զինք խաբէր, չէր դառնանար, դարձեալ կը յուսար նորագոյնին գալիքին, ու յուսախաբը ընդէն ալ դեռ կ'ակնկալէր: Թերեւս փոխուէր ու բան մը արտադրէր:

Գրականութեան մէջ յեղափոխական էր ինք, ծուռ տղան: Ո՛րք որ ապրէր՝ Պոլիսը իր մէջ կը մնար, թէնի հոն ապրելու բախտը չէր ունեցած: Բայց հայրը կու գար Պուրսաթէն, պոլսական շուրջ ու շունչ ունեցած բնաշխարհէն: Ու ըսել՝ թէ հօրը մտերմութեամբ անցուցած է յոկ մանկութիւնը եւ պատանութիւնը: Երուսաղէմի հայոց վանքին մթնոլորտով շնչաւորուած, ճանչցած էր եկեղեցին եւ եկեղեցականը, սքեմաւորներու փառասիրութիւնը եւ մարդկային տրամադրութիւնները: Մանաւանդ երեցկիւնները շփոթեցուցած էին զինք: Իր գրութիւններուն, բանաստեղծութիւններուն ու պատմուածքներուն մէջ կը հանդիպէինք այսպիսի տիպարներու: Հեռուէն թէ մօտէն ճանչցած ըլլար՝ նոյնն էր կարծէք: Ինք ունէր իր սուր հոտառութիւնը, նոյնիսկ չտեսածին ճանաչողութիւնը զգալու:

Վահէն Օշական Պուրճ Համուտ չէ ապրած. հոն եկած է միութեան մը հրաւերով՝ դասախօսելու, կամ՝ հայկական հանդիսարանէ մը ներս մտնելու համար: Ու ամէն անգամ որ խոցելի, խախուտ կամ հեզանքի առարկայ տիպար մը կամ երեւոյթ մը ճանկէր իր միտքը, Պուրճ Համուտը կը յիշէր՝ իբրեւ ֆոլքլորի մարմնացում կամ գունագեղ տեղայնութիւն:

Մարդիկ կը ճանչնամ, գրականութենէ շատ հեռու հայեր, որոնք բարեկամութիւն ունեցած են այս գրագէտին հետ, եւ որոնք համով-հոտով յուշեր կը պատմէին անոր բնկերային խառնուածքին մասին: Ինծի նման շատեր զինք ճանչցած են միայն իր գիրքերէն, ու անոնց հիման վրայ սիրած են կամ չեն սիրած զինք:

- Չարմանալի՛, Վահէն է այս ամէնը գրողը... Ընկերային կեանքին մէջ բոլորովին տարբեր է ան, իսկ այս գրութեան մէջ ուրիշ երես մը ունի ան...,- կ'ըսէին իր բարեկամները:

Վահէն Օշական իր լուռ հմայքով բանաստեղծութեան քարուպիչ մը ըլլալ կը թուէր: Իր ստեղծագործած տողերը չէին միայն զինք գրականութեան եւ մշակոյթի արժանաւոր ներկայացուցիչ մը դարձնողը: Կը բաւէր իր ներկայութիւնը՝ բազմաանդամ թէ խմբակ մը կապմած հաւաքականութեան մը մէջ, զգալու համար, թէ արտասովոր անձնաւորութեան մը հետ է գործը:

Երեք տարի առաջ երբ Պէյրութ եկաւ ու ապա, դէպի Արցախ իր ճանապարհին, հանդիպեցաւ «Այդակ» ի խմբագրատունը, մեր տեսակցութեան ընթացքին անպուսպ հրճուանքով կը խօսէր մա՛նաւանդ Արցախի համալսարանական երկսեռ երիտասարդութեան մասին: Այնքան ոգեւորուած էր մօտ երկու ամիս Արցախի-համալսարանին մէջ իրագործած իր դասախօսական պահերով, որ կարծէք վերադառնալ կ'ուզէր Արցախ՝ կէս ձգուած գործ մը շարունակելու:

Կրկնակի, բազմապատկուած հրապոյր մը կը խտացնէր ան իր էութեան մէջ, իբրեւ Կոյճ Օշականներ: Հայր Օշականէն ծառանգած էր սերն ու կիրքը հայ գրականութեան, ստեղծագործելով անդուլ, ըստ իր խառնուածքային տրամադրութեան եւ դարուն հրամայականներուն: Չէր շահագործած հօրը անունը, այլ ջանացած էր գէթ զայն ունենալ իբրեւ օրինակ, պաշտելու հայ մշակոյթը եւ խնկարկելու հայ գրականութեան տաճարին մէջ, բոլոր սուրբերուն Մաշտոցի: Հաւատաւոր արուեստագէտի իր անկեղծութիւնը որոշիչ դեր մը ունէր անկասկած իր հմայքին տարածման՝ Սփիւռքի մէջ, ու յետ համայնավարական իշխանութեան չքացման՝ նաեւ նորանկախ Հայաստանի գրական թէ քաղաքական շրջանակներուն մէջ: Սփիւռքի գրական դէմքն էր ան՝ Արեւելքէն Արեւմուտք, մինչեւ հեռաւոր Աւստրալիա: Իր ոտնահետքերը թողոց գաղութային թէ հայրենական մեր իրականութեան մէջ, իր անուան շուրջ հիւսելով արժանաւորութեան պսակ մը:

Այսօր կ'ափսոսանք գրական անդամատանէն այս քուրմին բացակայութիւնը: Անապատներ ծաղկեցուցած նուիրեալներու հոյիւն մէջ փայլուն աստղ մըն էր ան, որ շիջեցաւ՝ աւելի շեշտելով մեր շուրջը տիրող ամայութիւնը:

20րդ դարուն ծնած, ապրած, ստեղծագործած անուն մը՝ Վահէն Օշական, ոչ եւս է: 1970ական թուականներուն սկիզբը, «Համազգային» Նշան Փայանձեան Ճեմարանի «Վասպուրական» սրահին մէջ, իր մէկ գրքին հրատարակութեան առիթով կազմակերպուած գրական հանդիպումի մը ընթացքին, այլ բանախօսներու կարգին, երբ փակման խօսքը իրեն վիճակուեցաւ, ան արտասայտուեցաւ իր գրականութեան հանդէպ ցուցաբերուած «պաղ վերաբերումին», մասնաւորաբար իր քերթողական արուեստին մասին, ապա՝ խանդավառութեան ընդհանուր պակասի մը ակնարկելով՝ յայտարարեց տիրաբար.

- «Չիս պիտի հասկնաք 25 տարի ետք...: Վերջիշէլով իր այս արտաբոյս խօսքերը, մեր կարգին կը վերջիշէնք Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանյանի մէկ փիլիսոփայութիւնը.

թէ՛
«Անց են կենում սեր ու խնդում,
Գեղեցկութիւն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք՝ մահիւր,
Մարդու գործն է միշտ անմահ»:

Թ Է Լ Է Ֆ Ո Ն Ը

ԼԻԶՊՈՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Ք ոլորատույի հազարաւոր մոթեյներու սենեակներուն մէջ երեկոն կ'իջնայ դաժան ձանձրոյթով: Սիրոյ ծարաւ շրջուն վաճառորդներ, մէջտեղ մնացած, կորսուած, մենակեաց դրժ- գոհ մարդիկ՝ կնկայ ու խմիչքի հոտ կը փնտռեն ու աննպատակ կը հայհոյեն: Բայց ինքը տարրեր է — Աննային մեղրալուսնի պատկերը արդէն դրեր էր անկողնին քով սեղանին վրայ, նայեր էր անոր քիչ մը վախկոտ ժպիտին, յետոյ՝ կօշիկով երկնցեր էր — ինչպէս կ'ընէր տունը, ականջը սրած եւ յուսալով որ ան կը նշմարէր, բան մը կը հարցնէր, կարելի է նոյնիսկ քովը կը նստէր, ձեռքը իր այտին կը դնէր...:

Պատուհան գնաց, քաշեց բացաւ վարագոյրը: Անսահման դաշտերուն վրայ մայրամուտը կը մեռնէր ու վարը՝ խճուղին պառկեր էր: Պատահական կառք մը կը սուրար, անշահեկան եւ նոյն ատեն խորհրդաւոր: Երբեմն՝ բռնակառքեր որոնց գանգուածը եւ ուժը դեռ կը տպաւորէին զինք հակառակ այսքան տարուան մտերմութեան, խճուղիներու երկայնքին՝ Միացեալ Նահանգներու ամբողջ տարածքին: Մոթեյի փարքին կը միայն չորս կառք մնացեր էր քաղաք գացեր իր ողի քէֆ կ'ընեն մտածեց:

Ետ դարձաւ: Պարագութեան գագաթը մը կը ճնշէր ներսը ինչ պիտի ընեմ միևնչեւ կէս գիշեր աս սեփեակի մէջ խորհեցաւ մէկը ըլլար հետը կը նստէի, իսուէիք: Խոշոր հայելին առջեւ անցաւ: Ոչինչ կար իր պատկերին մէջ որ ուշագրաւ ըլլար ոչինչ կրկնեց, նայելով իր կարծ, թխմուած կերպարանքին, կ'որ ողորկ զխուռն, կոշտ քիթը, ամէն ինչ հասարակ: Գոցեց բռունցքները, արագ ետ քայլ մը առաւ, քննեց շուրջի ամայութիւնը աս է աշխարհս, հոս է տարիներու պահեստը, հոս է սէրը, սէրը ո՞ւր է, ո՞ւր է աստուած իմ: Աչքը նորէն հայելին գնաց աս ե՞ս եմ խորհեցաւ, անշարժացաւ: Ի՞նչ կրնամ ընել մտածումը եկաւ-գնաց: Ժամացոյցին նայեցաւ դեռ ուշ չէ բայց արագ որոշումներուն մարդը եղած էր միշտ, երկու օրէն կ'իներ ընտրած լմնցած էր, յաճախորդներուն հետ խօսակցութիւնը քառորդ ժամը երբեք չէր անցներ, ճաշարաններուն մէջ մէկ վայրկեանէն ընթրիքը կ'ընտրէր:

- Օքէյ, մուտաց, մարեց լոյսը ու դուրս նետուեցաւ:

*
* * *

Առաջին անգամն էր, որ Տէնվոր կու գար: Բաւական դարձաւ քաղաքին կեդրոնը, բայց սրտին մօտիկ ճաշարան չգտաւ: Քշեց ետ դէպի արուարձանները: Սկիզբի տրամադրութիւնը կ'աւրուէր, ջղայնութիւնը կը շատնար, սկսեր էր մինակը խօսիլ: Ի վերջոյ խճուղիին քովերը մ'թին ծառաստաններով շրջապատուած «մոլ» մը երեւցաւ: Նոր եռանդ եկաւ վրան: Ժողովուրդ կար շուրջը եւ եռուզեռ, քիչ մը անդին՝ Հաուորտ ձոնսըն ճաշարան մը ուր, գիտէր, իրեն նման տարիքը առած, գաւակներէն լքուած, թափառական գոյութեան մը դատապարտուած միջին դասակարգի գոյգեր իրիկունները կը հաւաքուին մէկ երկու ժամ, իրար նայելով նոյն բաները ուտելու, թոռներու, դրամի ու յօդացաւի մասին խօսելով: Չմտած՝ տեղէ մը թերթ մը գնեց, յետոյ գնաց ճաշարանին քիչ խճուղուն անկիւնը նստաւ, դրաւ ձեռքերը՝ կարծ մատները բաց՝ սեղանին վրայ, շուրջը նայեցաւ:


Ատեն մը ետք բացաւ թերթը: Ծիւղ այս վայրկեանին սպասեակ աղջիկ մը, կարմիր հագած՝ եկաւ քովը կայնեցաւ, բայց պատուէրը տալու ատեն իսկ Հէրին անքիւն գարկեր էր, թերթի առաջին էջին վրայ խոշոր գիրերով՝ Արմինին բառը պատկերները:

Աղջիկը կը մեկնէր: Եունչը բռնած՝ կարդաց Լիգայնի դէպքին նկարագրութիւնը: Առաջին օրերէն իսկ հետեւեր էր հայկական ազատագրական պայքարին ու հեռուէն յան-

դուզն, յաճախ անգութ տղոց որածներով գաղտնի ապրեր էր ու տաքցուցեր իր ամալի գոյութիւնը, քիչ անգամ՝ բաժնելով գագաթը Աննային կամ բարեկամներու հետ: Բայց ասիկա, հինգ երիտասարդ, խօսքը մէկ բրած, միասին, առանց ցուցադրութեան, պոռչտուքի, հաւանարար վերջին վայրկեանին «Հայաստան» կանչելով միատեղ - ցնցուած էր Հէրին: Յափշտակուած՝ չկրցաւ կարդալ՝ սառեցան աչքերը գիրերուն վրայ, պահ մը աշխարհը չքացաւ ու մնաց ինքը, հին կսկիծի մը, կորսուած սիրոյ մը յիշատակին նման ցաւ մը լեցնելով գիտակցութիւնը: Այո... երանի երանի քսան տարեկան ըլլայի անցաւ մտքէն, գոցեց աչքերը բայց այնքան սուր էր իր ներկայութեան գագաթնութիւնը, վախով, ցաւով հաճոյքով լեցուն՝ որ անմիջապէս բացաւ աչքերը ու նայուածքը գնաց սպաննուած մարտիկին պատկերին: Ես ալ հայ եմ՝ մտածեց ու որքան որ ետ երթար անցեալին մէջ՝ այնքան կ'ուժովնար գագաթը, մինչեւ երիտասարդութեան տարիները, Յեղակրօն խանդավառութիւնը՝ ուրկէ միայն համագ- գեստը մնացեր էր եւ՝ մոլեռանդ հաւատք մը կրակոտ օրերու իտէալին օր մը Հայաստանը պիտի ազատեիք, հարկաւ խորհեցաւ: Բայց այս տղոց որածը ուրիշ բան էր, մեռնիլ աչքերը բաց, կեանքին անուշ համը դեռ բերնին, բան մը դեռ չհասկըցած ապրելու թնճուկներէն, աղտոտութիւններէն ու մէկ անգամէն ցատկած հասած էն ծայրը ձեռք ձեռքի, հոն ուր իր ամբողջ կեանքին ինք ուզած էր ըլլալ, մէկ ու վերջնական արարքը, որպէսզի հօր անբուժելի վրէժը լուծէր, հօրը եւ նաեւ մեծ հօրը որ ոչխարի պէս մորթեր էին գիւղի այգիներուն մէջ: Բայց ոչ իրը, ինքը վրէժ չունէր, կիրք ու բարկութիւն չէր մնացեր մէջը ասիկա բուրքէն վրէժ լուծել չէ, ասիկա աշխարհէն, Աստուծմէ վրէժ լուծել է... իմ՝ վրէժս այս տղաքը կը լուծեն իմ տեղս մտածեց:

Մատները մեղմօրէն կը դողային: Յօդուածը քանի մը անգամ կարդացեր էր արդէն: Եթէ միայն գաւակ մը ունեցած ըլլար այս տղոց տարիքը, եթէ միայն իրական շօշափելի կապ մը ըլլար իր ու անոնց միջեւ, գոնէ անոնց լեզուն գիտնար, գոնէ օր մը արեւելքէն եկած խորտ ու բորտ, աղմկոտ այդ տղոց ձեռքը սեղմած ըլլար փոխանակ փախելու այս կոշտ, քրտինք հոտող ու կասկածելի մարդոցմէ... Այ ուշ էր սակայն: Դիմացէն աղջնակ մը իրեն կը նայէր, երկու պառաւ խօսելով անցան սեղանին քովէն, ամէն կողմ նոյն մարդիկն էին, բացակայ, անձիգ, գրեթէ անգիտակցարար նոյն կեանքը ապրող, բայց չէին ճանչնար գիրար, բոլորն ալ ամերիկացի էին ու ոչ մէկը պատրաստ էր, կարող էր, սիրտ ունէր ուրիշ ամերիկացիի մը համար կամ երկրին, հողին համար մեծ գոհողութիւն ընելու: Հայերուն պէս չէին, ոչ կրկնեց ես այդ մարդիկը լաւ կը ճանչնամ, ես ալ ամերիկացի եմ աւելցուց այս իմ՝ երկիրս է հոս ծնայ հոս մեծցայ... գիտեմ՝ ամերիկացի ինչ է, բայց հա՞յր, աս տղա՞քը, հայաստանցի՞ն, անո՞նք ով են, ի՞նչ են: Ու յանկարծ յիշեց խարրերդցի ծեր վարժապետին խօսքը Հայը մարմին է եւ առաջ, տղաս, մարմինով հայ կ'ըլլաս... Ետի կը դուրսան հայուս, կը շօշափեն... լեզուն, կրօնը, մշակոյթը վերջը կու գան, հողը անգամ վերջը կու գայ ու ինք պատասխաներ էր հոս անանկ չէ:

Եունջը նայեցաւ, շուրջը, անձկալի, գաղտնի ցաւ մը սրտին... իր բազմութիւնն էր, հեռու, անհպելի, կէս-օտար մարմիններ գարդարուն հասարակաց սրահին մէջ եւ ինքը, Հէրին որ աստուած գիտէ որքան պայքարած էր հոս հասնելու, մինչեւ անոնց ցուրտ ձեռքերը բռնելը, անոնց անգուր- գուրանք աշխարհին մասնակցիլը որպէսզի նշմարէին զինքը, խօսէին հետը, մարդու տեղ դնէին, ինքը, ապահովագրութեան ընկերութեան մը կարծուկ, խեղճ ու կրակ պաշտօնեան որ համարձակութիւնը ունի հայ ալ ըլլալու: Մինչեւ որ դադրեր էր առանձնութեան տառապանքը ու կրցեր էր եր-



րեմն մոռնալ անցեալ կոչուած փորձանքը ու ինկեր էր ամբողջ ծանրութեամբ ուրախ ներկայի մը գիրկը ու որքան մխրճուեր էր ներկային մէջ՝ այնքան իր հայու անցեալը մոլորութեան պէս, յանցանքի պէս ծածուկ բան մը եղեր էր: Եղբոր թաղումին քսան հինգ հատ էին, ոսկի մագերով, կապոյտ ու գմբուխտ աչքերով իրական ամերիկացիները — առաջին յաղթանակն էր: Այդ օր հայհոյներ էր...:

Վար դրաւ դանակն ու պատառաքաղը: «Մթէյք»ը համեղ էր. ձեռքը փորին դրաւ, կռթնեցաւ նստարանի կռնակին, երկարեց կարճ սրունքները: Փոխուեր էր տրամադրութիւնը, ուրախ էր յանկարծ առանց պատճառի, այս է աշխարհին ներկայ վայրկեանը, աս է երկրին օրէնքը, առանց գուժի կամ զղջալու, եթէ տէրտ ունիս՝ քեզի պահէ, հեռուէն հեռու պիտի սիրես, արագ գործնական հաճոյք, բոգերը չեն համբուրեր, եթէ կը գուարճանաս՝ այդ ալ քեզի պահէ, նեղ է աշխարհը, մի խճողեր, հիմա գնա գուարճացիր:

Աչքը սակայն թերթէն չկրցաւ վերցնել: Մայթին ինկած տղուն մարմինը, վրան կայնած ուստիկանը, արիւնը որ կը հոսի անշշուկ, կեանքը որ կը փախի, կը հատնի ու քու ամբողջ ներկադ մինչեւ տիեզերքի ծայրերը չի կրնար մոռցնել որ ազգը կը հատնի, հայ տղան կը մեռնի ու չես կրնար քաւել յանցանքը ի՞նչ յանցանք լսեց հարցումը, խնդալ ուզեց, հուժկու գեղադէմ երիտասարդ մը կը մօտենար նրբանցքէն միջտ պակաս բան մը կայ կեանքին մէջ:

Վերցուց ջուրին բաժակը, պարպեց: Յետոյ ծալեց թերթը, պատկերը կորսուեցաւ: Պահ մը մնաց անշարժ, նայուածքը ամայի անծանօթ բանի մը սպասումով լեցուն՝ բայց միայն գետին պառկած տղուն պատկերը եկաւ: Յետոյ հայրը յիշեց Յարուբ տղաս, պատերազմ է ասիկա, գնա կուռէ, աս հողը պիտի սիրես որ ան ալ քեզի ուժ տայ, պահէ քեզի, արիւն պիտի խառնես հողին որ ապրի բայց այս տղոց սէրը ուրիշ տեսակ էր, ի՞նչ հող ինչ բան գիտէին ասոնք... միայն երթալ գոհուիլ գաղափարի համար, սկզբունքի համար քանի որ հող ըսուածը էն առաջ սկզբունք է... ես ի՞նչ գիտեամ... դուն ալ հոս քիթդ ցետին՝ քաշկռտուէ վաթսուն տարի մոթելները գրասենեակները, իտէալներդ մէկ մէկ մեռնին...: Այդ է սիրելը անցաւ մտքէն, սիրել ոչ ինչէն, օդին մէջէն ազատ

Հայրենիքը սիրել... բայց որ կողմէն նայիս անկարելի կ'երեւի, հողմադացքներու դէմ կռուելու պէս բան մըն է, բայց ուրիշ կերպ չ'ըլլար, մինչեւ ծայրը պիտի երթաս որ անկէ ետք շարունակես ուրիշներուն մէջ, մինչեւ մահ... ոչ բէ ասանկ: Եւրոյն յանկարծ խարխլած, իրարու օտար ու դժկամ գոյգեր տեսաւ, գաղտնի անխոստովանելի հաշիւներով իրար մօտեցած, երդում տուած, նստեր են դէմ դիմաց ըսելիք չունին, մէկը միւսին ուտելը կը դիտէ, ներսէն փտած, սուտ, անսէր մարդիկ ինծի պէս բաներ խորհեցաւ, նայելով անոնց կզակներուն մեքենականօրէն շարժող, սառած նայուածքները, իրար կապկելով կ'ապրին, ի՞նքն էր միակ օտարը այս սրահին մէջ...: Ո՛ւր գնաց Ամերիկան հարցուց ինքնիրեն, ու այդ վայրկեան այն տպաւորութիւնը ունէր որ միայն հայ մը, հայու սիրտ մը կրնար իրապէս սիրել Ամերիկան, գոհուիլ անոր համար, արդեօք ես կրնամ... Ամերիկայի՞ համար... Հայաստանի՞ համար... ուշ չէ, բնաւ ուշ չէ...:

Ձգաց որ ոտքի ելեր էր բայց տարօրինակօրէն թեթեւցած, ներսէն լուսաւորուած: Տոյար մը նետեց սեղանին վրայ, արագ քայլերով, խուճփէ տարուած՝ առաջ շարժեցաւ, գլուխը վար՝ գնաց վճարեց առանց դրամընկալ, սմբած կինը նշմարելու, թէնք-եռու-ն ըսաւ ցած ձայնով, բայց փոխանակ դուրս ելլելու՝ ետ դարձաւ, քայլեց դէպի ներս, խոհանոց: Ոչ ոք նշմարեց իր ներկայութիւնը, սպասեակ մը նոյնիսկ ժպտեցաւ իրեն ու անցաւ: Թէյէֆոնի պատիկ սենեակ մտաւ, սրբեց քրտինքը, գոցեց դռնակը, լոյսը վառեց, ակնոցները գտաւ ու թէյէֆոնի հսկայ գիրքը բացաւ: Նախ Սարգիսեան նայեցաւ բայց չգտաւ: Յետոյ անցաւ Յակոբեանին: Չորս հատ Յակոբեան կար - Արթըր Յակոբեան, Ճոն Յակոբեան, Լէօ Յակոբեան, Սուրէն Յակոբեան:

Բնագողով գիտէր անունը ինչ կը ծածկէր: Նայեցաւ հասցէին - Արթըր Յակոբեան, 6 Չէրի Ռոտ, թիւ 451-8191: Գրեց թերթի լուսանկարին վրայ, գոցեց թէյէֆոնի գիրքը, ժամացույցին նայեցաւ, կազմեց թիւը, սպասեց, շունչը բռնած...:

*
* *

Առաջին քանի մը վայրկեանները չգիտցաւ ինչպէս անցան: Հակառակ որ վարժ էր թէյէֆոնին՝ կմկմաց, լփուտեց բառերը, գործիքը աջ ականջէն ձախին տարաւ, թերթը վար ձգեց, քրտնեցաւ: Ի վերջոյ ինքզինքը գտաւ:

Ի՞նչ է ձեր ուզածը, պրն. Մուրատեան, գիտէ՞ք ժամը քանին է:

- Գիտեմ պրն. Յակոբեան... բայց ըսելիքս շատ կարեւոր է, խնդրեմ մտիկ ըրէք, կ'աղաչեմ:

Լուռութիւն: Ջղային, գուսպ ձայնով մէկն էր Արթըր, «կըռլազան» մէկը խորհեցաւ ու ընագողարար ինքնիր մէջ կծկուեցաւ: Ծռեցաւ, վերցուց թերթը, բացաւ առաջին էջը: Հոն էր տղուն նկարը:

- Տեսա՞ք այսօրուան թերթը:
- Այո, տեսայ:
- Հայ երիտասարդները, հինգ հոգի, Լիպպոնի մէջ:
- Այո, այո:
- Նորէն լուռութիւն:
- Ես ալ տեսայ այդ պատկերը, կարդացի յօդուածը եւ տակնուվրայ եղայ, իրաւ կ'ըսեմ... իսկ դուք, ի՞նչ զգացիք երբ լուրը առիք, կարդացիք գրութիւնը, պատկերը տեսաք:
- Ես ի՞նչ գիտեամ... ցաւեցայ որ երիտասարդներ մեռեր են, պարապ տեղը մեռեր են:
- Բայց որպէս հա՞յ ինչ զգացիք:
- Նայէ, պարո՛ն, չեմ գիտեր ով ես դուն եւ ինչ կ'ուզես բայց ես դէմ եմ անմեղ թուրքերը սպաննելուն, ես...
- Ես ալ դէմ եմ պրն. Յակոբեան, բայց ասիկա տարրեր բան է, հաւատացէք... ի՞նչպէս ըսեմ...
- Ես...
- Պրն. Յակոբեան, մէկ վայրկեան, խնդրեմ մտիկ ըրէք:
- Լաւ, բայց շուտ ըրէք:
- Լուռութիւն նորէն: Բայց ուրկէ՞ կը սկսի ասանկ խօսակցութիւն մը: Որոշեց ամէնէն ընական ճամբով քայլել:
- Հայերէն գիտէ՞ք պրն. Յակոբեան:
- Մէկ երկու բառ միայն... ինչո՞ւ, ի՞նչ կայ...:

- Զաւակ ունի՞ք:

Լուսթիւն այո, այո ունիս կրկնեց Հէրի մտքէն, ընկալուչը սեղմելով երկու տղայ...:

- Պոն. Յակոբեան:

- Այո ունիմ, երեք մանչ մէկ աղջիկ... ինձի նայէ, պոն. Մուրատեան, ես...:

- Արթըր, Արթըր, քեզի մէկ հարցում մըն ալ ունիմ տալիք, եթէ դժուարիդ գայ՝ մի պատասխաներ... պիտի ուզէի՞ր որ տղաներէդ մէկը այդ հինգ հայերուն մէջը ըլլար:

- Ի՞նչ...:

- Ըսի պիտի...:

- Այդ ի՞նչ տեսակ հարցում է:

- Ըսէ, պիտի ուզէի՞ր:

- Հարկաւ ոչ:

Վճռական, ցասկոտ շեշտ մը մտեր էր ձայնին մէջ, ժամանակը կը հատնէր եւ եթէ չկարենար այս հայուն սիրտը գտնել հիմա ու չփոխանցէր անոր իր բացառիկ յուզումը՝ ինքը իրապէս կորսուածին մէկն էր, ձախողած ոչնչութիւն մը... Պիտի բացուիմ մտածումը սեղմեց ակունները ոլիտի բաց-ւիմ նոյնիսկ եթէ մերժէ մտիկ ընել:

- Նայէ, Արթըր, երկուքս ալ ամերիկացի ենք, ես ալ դուն ալ կը հասկնանք ինչ ըսել է երկիր ունենալը, հողի տէր ըլլալը, ես խեղճ շրջուն պաշտօնեայ մըն եմ, ապահովագրութիւն կը ծախեմ, դուն Աստուած գիտէ ինչ ես բայց երկուքս ալ կը սիրենք այս երկիրը, չէ՞:

Լուսն Հէրի, չէր գիտեր ինչ պիտի ըսէր ատկէ ետք, բառերը այնքան տկար կը հնչէին զգացածին քով, կը թուլնա՞ր ներքին պրկումը ասանկ բաներ թէլէֆոնով չ'ըսուիր ամբողջ ուժը կ'երթայ... անկեղծ եղիր Հէրի, սուտ բաներ կ'ըսես կոր բայց շարունակեց:

- Այս երկրին համար երկուքս ալ կուուած ենք, արիւն թափած ենք... վեթերան ես, չէ՞

- Այո, Երկրորդ Պատերազմին, Նորմանտի, Գերմանիա, ետքը ճափոն:

- Ե՛ս ալ... ամբողջ ճակատամարտերը, երկու անգամ վիրաւորուած եմ... տղա՞քդ:

- Գոնրատը Վիեթնամ ըրաւ, ձիմը օդուժի գնդապետ է, գալ շարաթ Գերմանիայէն կու գայ արձակուրդ է, առաջին թռունիկս պիտի ծնի...:

- Բախտաւոր մարդ ես... տեսա՞ր ինչ կ'ըսեմ քեզի, երկուքս ալ գինուոր էինք, ես ու դուն երկու հայեր, կրնայինք մեռնիլ դուն Նորմանտի ես Անձիօ բայց ընաւ հոգս չէր, աչքս առած էի ատիկա, կարեւորը ան էր որ մարդիկ ապագային նային... հայրենիք մը գոհողութեամբ ու երազով կ'ապրի, անանկ չէ՞, ըսէ, ի՞նչ կը խորհիս...:

- Այո բայց...:

- Վաղը եթէ ձիմը որոշէր Ամերիկայի համար գոհուիլ, մեռնիլ, մեծ հերոսական բանի մը համար նահատակուէր, ի՞նչ կ'ընէիր դուն, ըսէ՛:

Հէրի դեռ յստակ չէր գիտեր ինչու սա մարդուն թէլէֆոն բացեր էր - աւելի ուշ պիտի ըսէր թէ կորսուած հայու մը սիրտը արթնցնելու համար էր, բայց հիմա վկայ մը, արձագանգ մը կը փնտռէր իր հայ ապրումին: Ետ քսան տարեկան եղած էր հիմա իր աչքին, նոյն համբերութիւնը, խանդավառութիւնը որով ժամանակին փորձեր էր լեցնել կեանքին պարապութիւնը...:

- ... ձիմը շատ քաջ է Հէրի, անցեալ տարի Թուրքիա կայանուած էր...:

Աչքը ետ թերթին գացեր էր. իրականութեան մէջ շատ քիչ բան, գրեթէ ոչինչ կը տեսնուէր գետին ինկած տղայէն

- ... Հայ տղաքը...:

Հիմա Արթըր կը խօսէր Հայաստանի մասին բայց իրեն համար շատ ալ կարեւոր չէր ըսածը, կէս ականջով մտիկ

ըրաւ, ինք գիտէր անոր սիրտը ուր էր եւ ինչու անոր պէս մարդիկ կը փախէին, կը վարանէին, կէս արթուն կ'ապրէին, հաւանաբար օտար կին մըն ալ ունէր որ գլուխը կ'ուտէր աս ժամուն միայն հայերը թէլէֆոն կ'ընեն, ան ալ անծանօթ մը, ի՞նչ կ'ուզէ կոր... կարճ կապէ Արթըր... մարէ սա յոյսը հաւանաբար կինը սկիզբը հայերէն ալ սորվեցաւ:

- ... Հէրի Հէրի... հո՞ն ես:

- Այո Արթըր, հոս եմ, հասկցայ, գիտեմ գիտեմ:

- Հէրի, քանի՞ գաւակ ունիս:

- Չունիմ Արթըր, գաւակ չունիմ:

Չարմացաւ ինչքան դիւրութեամբ, ընկանութեամբ ըսեր էր այդ նախադասութիւնը՝ որուն բառերը տարիներով ճմլեր էին զգացումները: Ու յանկարծ անդրադարձաւ որ այս կացութեան մէջ՝ իր մարմնին ապրիլը, գաւակին հոն ըլլալը, սերունդներու դրօշաբար չէր որ կարեւոր էր, ոչ ալ հայ ազգին թիւը եւ քանի հոգի ողջ ըլլալը, կարեւորը ոգին է ոգին... այո, այդ տղոց ոգին մտածեց: Լոյս մը յանկարծ վառած էր մէջը ու գիտէր որ այլեւս մարելիք չունէր ատիկա: Ու մինչ Արթըր կը շարունակէր հատ ու կտոր խօսիլ, մութին նստած Հէրիին՝ աչքերը կը խոնաւանային ու տարուած աննախընթաց յուզումի մը ալիքէն՝ ան շշնջաց

- Արթըր... թէնք եու ալ լաւ եու...:

Խնդաց Արթըր մ'ուս ծայրէն, ժամանակ շահելու՝ որ հասկնար իմաստը յսածին:

- Հէյ Հէրի...:

- Իրաւ կ'ըսեմ Արթըր, սքանչելի մէկն ես... շատ երախտապարտ եմ քեզի, ճշմարիտ հայ մըն ես, անկեղծ քաջ մարդ մը... եթէ ամէն ամերիկացի քեզի պէս ըլլար...:

Չկրցաւ աւարտել նախադասութիւնը: Արթըր կը խօսէր ու ձայնը ստիպողական շեշտ մը ունէր որ նոր էր

- Նայէ Հէրի, պէտք է գոցեմ հիմա, Մէրիթըն...:

- Գիտեմ, գիտեմ:

- Ինչո՞ւ վաղը թէլէֆոն չես ըներ գրասենեակս, հոն եմ ամբողջ օրը, առ թիւս:

Հէրի աճապարանքով գրեց թիւը թերթին մէկ անկիւնը

- Հէ՛րի, Հէ՛րի:

Չայնը յանկարծ շշուկի վերածուեր էր, անձկութիւնը գսպուած, խտացած:

- Ի՞նչ է Արթըր:

- Չմոռնաս վաղը, անպայման... կէսօրին միասին կը ճաշենք...:

Երազի պէս էր այլեւս ամէն ինչ իրեն համար: Հրաժեշտ առաւ, յուզումէն խեղդուած ձայնով մը ու այնքան մեծ, խորունկ սիրտ մը ունէր այդ պահուն, այնքան մտերիմ կը զգար իրեն այդ անծանօթ մարդը, նուէրի պէս տրուած հայր՝ որ նեղիկ խուցին մէջ սկսաւ խնդալ, քիթը քաշելով, արցունքները հոսելով մոռցած ետ տեղը դնելու ընկալուչը որուն մէջէն Արթըր դեռ կը խօսէր, կը փսփսար Հէրի ո՞վ էս, ուրկէ՞ եկար, ուրկէ՞ կը խօսիս կոր... Հէրի...:

Ի վերջոյ ձգեց խցիկը, թերթը հոն մոռցած եւ շուքի մը պէս դուրս ելաւ ճաշարանէն: Եւ երբ, մայթին կայնած կը նայէր հանդարտ գիշերուան՝ իրեն այնպէս թուեցաւ, թէ փոխուեր էր աշխարհը եւ թէ իր կեանքը ատկէ ետք չէր կրնար նոյնը ըլլալ: Քիչ մը անդին հին, չարչարուած օթոն իրեն կը սպասէր:

Քալեց:

ՎԱՀԷ

ՕՇԱԿԱՆԻ

«ԱՀԱԶԱՆԳ»Ը

Գիրքը սեղանի վրայ է: Է:

Այն գոյուլթիւն ունի անկախ հեղինակից, մեզնից, հասարակութիւնից, մշակոյթից: Որովհետեւ այն այլեւս ուրոյն ինքնութիւն է: Գոյական է: Նա ինքն իր համար է՝ գերծրնկերային - հասարակական որեւէ պատասխանատուութիւնից կամ մտասեւեռումից, թէկուզ որչափ էլ մարդիկ աղաղակեն, թէ հասել ենք խաւար մի փապուղի, ուր կործանիչ ուժերը քանդում են ավանդութեան հիմքերը: Այն եկել է ապրելու իր անկախ իրականութիւնը, որը որեւէ առնչութիւն չունի այլ իրականութիւնների հետ: Մեր մինչ այժմ ընկալած իրականութիւնների հետ: Կարող էք գիրքը մէկ կողմ նետել, պատուել, այրել ու սակայն չէք կարող սպաննել նրան, որովհետեւ այն էսթէթիք փորձառութիւնից գատ, յետին այլ նպատակ չի հետապնդում - լինի կրօնական, դաստիարակչական, բարոյական կամ քաղաքական: Հեղինակը ինձ ու քեզ ի նկատի չի ունեցել: Բացառուած է նաեւ ինքը: Բացառուած է հասարակութիւնը: Օշականը ստեղծել է մի բան, որը իր սեփական ոտքերի վրայ կանգնի եւ ներկայացնի իր պահանջները, այդ պահանջների հետ յայտնարերի նոր պահանջներ, որպէսզի հասնի իր ակնկալած ճշմարտութեան, հասնելուց յետոյ կրկին ջարդի կառոյցը թերեւս մի օր հասնելու ինքնագիտակցութեան, երբ ինքնագիտակցութիւնը վերջնական հանգրուանն է՝ համապարփակ, փոխանակ միջոց՝ իմանալու աշխարհը: Այդ անելու համար անհրաժեշտ է խորտակել ավանդապաշտութեան դարաւոր պատնէշները: Իջնել խորխորատը, մերկանալ ու աղքատանալ, հասնել ոսկորին, էականին, երբ բառերը բաւական չեն, երբ բառերը բանաստեղծի թշնամիներն են՝ խարուսիկ, իմաստագուրկ:

«Ահագանգ»ը այս երկսայրարանութեան առջեւ է կանգնած:

Եւ որովհետեւ գործը կայ, գոյուլթիւն ունի, ապա անկախ իր կամքից, պէտք է, որ ընկերային արժէք ունենայ: Պէտք է, որ համաձայն լինէք, սակայն իր էութեամբ «Ահագանգ»ը քաղաքական մի յայտարարութիւն է յանուն անհատի ազատութեան: Ոչ այն ազատութեան, որ գանազան սահմանադրութիւնների մէջ է նշուած, այլ այն ազատութեան, որը թակարդուած է դարաւոր հասկացողութիւնների, խորհրդանշանների ու կանոնների քարացած սահմանափակումների մէջ:

Եթէ արդի հասարակարգերը հիմնուած չլինէին ապօրինութիւնների, մեքենայականութիւնների ու խարդաւանանքների վրայ, ապա արուեստագէտը անհրաժեշտութիւնը պիտի չզգար ստեղծելու իր ուրոյն իրականութիւնը: Այլ խօսքով, իր «Ահագանգ» գործով Վահէ Օշականը ապստամբութեան դրօշ է բարձրացրել իշխող կարգերի, հաստատութիւնների ու ավանդական վարդապետութիւնների դէմ՝ քողագերծելով վիթխարի սուտը, հարուածելով մամուտած վէմերի հիմքերը, պետութիւն ու իշխանութիւն, գաղափարների առեւտուր, վաշխառու մարդը, մարդու անկումը, գոհի արեան անհեթեթութիւնը, դարերի երեսին շարտուած կեղծ յոյսը: Բանաստեղծը համախոհութիւն կամ կարեկցութիւն չի պահանջում, խօսքը հասկացուելու ու մարսուելու ակնկալիք չունի: Բառը նետուած է հրապարակ, մեզ մնում է ճանաչել խօսքը, ինչպէս փորձում ենք ճանաչել մարդը, երեւոյթը, առարկան: Մենք պէտք է հաւատանք բանին, բանի խորքը, իսկութիւնը, էութիւնը, երբ ընկերութիւնը իր գոյութեան իմաստը փորձում է գտնել իրերի արտաքին երեւոյթների մէջ՝ համոզուած լինելով որ այդ է իրականը, գերագոյն նպատակը, երբ փաստօրէն հասարակայնութիւնը կանգնած է ինքնախարէութեան անհուն եզրի առջեւ:

Արուեստը խարդախ չէ: Ընկերութիւնն է, որ ապօրինա-

կանացրել է արուեստը, ինչպէս ապօրինականացրել է կրօնական ապրումը: Հաւատք չի մնացել: Մարդը կորցրել է հաւատքը քաղաքական համակարգերի նկատմամբ: «Ահագանգ»ը մի անվերջանալի աղաղակ է ընդդէմ ավանդօրէն մեզ հասած շինծու ու նանիր չտփանիչներին, ազատագրելու արուեստն ու գեղագիտական գագացումը բարոյական ապառուղջ ու անջրդի կապանքներից, պայքարելու ընկերութեան ամուլ կառոյցի դէմ եւ վերստեղծելու տիեզերքը անհատի ենթակայական ինքնութեան միջոցով: Արդէն Ներդ դարից սկսեալ՝ այդ է եղել արեւմտեան քաղաքակրթութեան վերամրարձ երթի ցոյքը, ոչ թէ ընկերային միաւորը, խմբակցութիւնը, ցեղն ու աղանդը, այլ՝ մարդ անհատը: Անհատի ազատութիւնը: Հետեւարար եւ Օշականի գայրոյթը:

Կարող ենք, իրաւունք ունենք սահմանափակելու անհատի ազատութիւնը: Ազատութեան մասին ճառելով հանդերձ, սահմանափակումներով ենք ցանցել կեանքը: Սահմանափակումների դար ենք ապրում: Կրօնն ու կրօնական գագացումը նահանջի դալուկ ճամբան են բռնել, ստեղծագործական փորձնական ամէն ճիգ խեղդում է խանձարուրում: Սահմանափակում՝ օդի, ջրի, արեւի, ընական պաշարների, վառելանիւթի, կեանքի մակարդակի, սիրոյ, բարեկամութեան: Սահմանափակում՝ մտքի ու թուիչքի: Սահմանափակում՝ ճշմարիտ խօսքի: Ահա թէ ինչու մարդը խորթացել է Աստուծոց, հասարակայնութիւնից, ինքն իրենից: Ընկել է ծուղակը ու իր սեփական մսերն է կրծում: Մարդը դարձել է քարացած ճիւղ: Լսող չկայ:

Օշականի «Ահագանգ»ը անհատական ճիւղ լինելուց առաւել՝ մարդու աքսորի ողորդութիւնն է, ու փոխարեքական իմաստով, հայի, յատկապէս սփիւռքահայի աքսորի մշտական դաւը, աշխարհագրական անջրպետը, հոգիների լճացումը, անընդհատ վէրքն ու նպատակի գունաթափումը: Աքսորի մէջ, սեւը սեւի վրայ, մարդու ապականումը, նիւթապաշտ աշխարհի մեքենական սիրտը, համատարած կողոպուտը, եղբայրասպանութեան գաւեշտ - եղբերգութիւնը, ներքին ու արտաքին սնանկութիւնը, ամբհի անհեթեթութիւնը, վայրկեան առ վայրկեան, շիթ առ շիթ մինչեւ վերջնական ունայնութիւնը:

Յղացքը նորութիւն չէ, ոչ էլ կառոյցը: Ծո'ւնչն է, որ գահավէժ հեղեղատի պէս քանդում տանում է ամէն մի ամբարտակ:

1924 թուին, երբ Անտրէ Պրեթոնը հրապարակեց իր Գերիորապաշտական Մանիֆեսթը, հետեւեալ ընթացքում տուեց այդ շարժմանը. «Միակամայն եկեղեցիական ինքնակերպութունեութիւն, որի նպատակը լինի գրաւոր կամ այլ միջոցներով արտայայտել մտածումի իրական ընթացքը: Մտածումի բեխարանքն ու հոսքը պէտք է գերծ լինի տրամաբանութեան բոլոր հակակշիռներից, ինչպէս նաեւ գեղագիտական կամ բարոյական մտահոգութիւններից»: Հիմնուած երազը վերլուծելու եւ մեկնարանելու Ֆրէյդի կատարած ուսումնասիրութիւնների վրայ, Պրեթոնը նպատակադրեց այդ տեսութիւնները կիրառել արուեստի, ապա աւելի լայն առումով՝ կեանքի մէջ: Գերիորապաշտ շարժման նախակարապետները հանդիսացան արուեստի այլեւայլ ընդհանրանքների ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ քաղաքական տեսարաններ՝ Մայվատոր Տալի, Ռոնէ Մակրիթ, Մաքս էրնսթ, Ժոան Միրօ, Արչիլ Կորքի, Անտրէ Մասոն, ինքը՝ Անտրէ Պրեթոնն ու բանաստեղծ Փոլ էլիւարը, յուսանկարիչ Ման Ռէյնն ու շարժականարի բեմադիր Լուի Պիլնիւէյը: Եւ ամբողջ մի բանակ՝ մինչեւ այսօր:

Ի սկզբանէ միտքն է, ու միտքը թաւալում է ազատ, սանձարձակ ենթագիտակցութեան ոլորտներում՝ մտածումների հաղորդակցութեան հոսանքների մէջ, մէկ մտածում՝ յարակցելով միւսին, միւսը յաջորդելով երրորդին, եւ այսպէս շարունակաբար, մտածումից մտածում, յուշից յուշ, սպաւորութիւնից տպաւորութիւն՝ անսանձ, անհակակշիռ, մաքուր, հարագատ՝ ինչպէս գետ ու հեղեղ, հոսանուտ ու յարափոփոխ մինչեւ ամբողջութիւն ներքին ու արտաքին ճշմարտութիւն, ու տակաւին մնալով թերի, կիսաւարտ: Եւ ինչպէս մտածումի պահին կէտադրութիւն գոյութիւն չունի, այնպէս էլ թուղթի վրայ բառերը յաջորդում են իրար առանց կէտադրութեան, ցատկում այս ու այն կողմ՝ հեւհեւ, չրսպառուած, չասուած, անհանգրուան:

Միջագային գրականութեան մէջ ձէյմս ձոյսը եղաւ ենթագիտակցութեան հոսքի ամէնից ազդեցիկ ներկայացուցիչը: Ծատերը փորձել ու տակաւին փորձում են ընդօրինակել ձոյսին, սակայն մնում են յուսանցքների վրայ: Մեր գրակա-

նույն ժամանակ ուղղութեամբ փորձեր են արել Յակոբ Օշականն ու Ինտրան, իսկ ժամանակակից գրողներին՝ Գրիգոր Պրլտեանը, Բաֆֆի Սէթեանը, Յարուսթիւն Քիւրքճեանը, Վահէ Օշականը, Վեհանոյ թեքեանը, Կարօ Արմէնեանը, Յարուսթիւն Պէրպէրեանը, Սարգիս Կիրակոսեանը, Խոսրով Ասոյեանը, Ջահրատը, Յակոբ Կարապետը, եւ ուրիշներ: Քիչ թէ շատ: Շատը շատ չէ, էլ չիօսենք քչի մասին: Այդուհանդերձ սկիզբ է, փորձ ու փորձառութիւն:

«Ահագանգ»ը դիւրընտել գազան չէ, որ լուսնու գլուխը շոյես: Հոսում է գետնի վեր՝ ջանալով ներքին նստած տիղմերը հասցնել լերկ բարձունքները, փռել տիեզերական լուսարձակի տակ՝ բարկութեամբ ու խիզախութեամբ, մոլեգին, մերկ, անշարժ: Գիտակցականի ու բնագանցականի միջեւ մտածումի ու գզացումի անկարելի դաշն, նիւթական ու վերացական գոյականների շքեղ հարսանիք: Ու շարունակ բողոքը ատելութեան պէս, անանձնական սիրոյ պէս, դեղին պոչտոգէրը, որ իր երկաթէ ատամների տակ ճգում, տարրալուծում է նիւթը, մեր հասկացած հոգին, մեր չտեսած կեանքը: Ամբողջ գործը խիտ ու ցցուն պատկերների ու հակաձայնութիւնների կաթսայ է, ուր եռում, ներբաղադրում է իրականութիւնը այն աստիճան, որ ընդարձանում են գզալարանները, դանակը հասնում է ոսկորին եւ այլեւս ընտելանում ես ցաւին: Իր հզօրութիւնն ու տկարութիւնը: Ընկել ես Տանթէի դժոխքը ու դուրս գալ չես կարողանում: Միտքը կորցնում է ընկալման կարողութիւնը: Այլեւս գիտես, թէ ինչ է գալիս: Ակամայ լիթանում ես՝ ի տես միմեանց խաչածեւոյ սեւ շատրուանների, իտէներն ու մեթաֆորները հրմշտում են իրար, միմեանց բերանից խլելով ցնցումի վերջին պատառը: Վերջում մնում ես ձեռնունայն: Թերեւս այդ է հեղինակի նպատակը:

Ամէն առտու
առաստաղէն, պատուհանիս նեղքերէն, դրան տակէն
ահագանգը կը թափանցէ,
քունս չառած, կիսամերկ, բլծոտ աչքով ու անօթի՝
սենեակէն դուրս կը նետուիմ, սանդուխտներէն չորսը մէկ
փողոց կ'իջնեմ խուճապահար կը վազեմ
ամէն վայրկեան որ կ'անցնի առաջինն է ու վերջինը,
բթուաշ չէ որ բռնեմ պահեմ
եթէ քայլերս չնետեմ՝ վախում հատնին դեռ չսկսած,
պէտք է ապրիմ ու չմեռնիմ,
մայրերը դեռ չամայացած պէտք է կառչիմ վերջին շուքի
կերպարանքին
բառ մը, շեշտ մը, ձայն մը կորգեմ անոր բերնէն,
ուշ է, ուշ է ամէն բան ու վաշխառուն ալ չ'սպասեր զիս
կը ծախէ մեռած գիւնով,
պէտք է վազեմ
քիչ վերջ արդէն հագարաւոր մուրացկաններ
պիտի պոռան, քաշեն թեւէս ու ոտքերէս որ գամ նստիմ
քովերնին
ոչ դրամ կ'ուզեմ ոչ ուտելիք՝ այլ միայն ձեռքս բռնեմ,
առանձնութեանէն կը սառնի
ամէն բժիշկ ու վիրաբոյժ ետեւէս է՝ որ արիւնս միւնչեւ
վերջին կաթիլը՝ իր հիւանդներուն ներարկէ:
Լեղապատառ կը վազեմ
Փէն-Ֆրուէր ամէն առտու մարդ էակի թարմ պաշար
բռնակառքով կը բերուի, պէտք է հասնիմ չսպառած,
պէտք է փախիմ, փողոցներէն ինքի արտառոց ինչ մարդ
կայ
կը հաւաքեն երգչախումբ պիտի կազմեն,
անցագիրս գողցեր եմ, նորը ի նչպէս պիտի հանեմ
գրասենեակը չգոցուած
ժամացոյցս կորսուեր է, մէկը չկայ որ օրն ու ժամը
հարցնեմ,
փողոցներուն անունները ամէն գիշեր կը փոփոկեն,
ո՞վ կ'ըսէր է հանրային պարտեզին դռները, քիչ մը
պիտի հանգչէի,
ես ամէն առտու գլխու պտոյտ կ'ունենամ բայց ոչ բժիշկ
կայ ոչ դեղագործ
միայն աչքերս առողջ եմ, այնքան յստակ, ուժով կը
տեսնեմ որ ցաւ կը զգամ,
սրտի կաթուած անցուցած եմ, ակռաներս փտտեր եմ,
քրոնիք հազ մըն ալ ունիմ
կը ճաղատնամ երթալով, մատներս արդէն կը դողան,
արդէն ծերի՝ երեւոյթ մը առած եմ:

Գործը՝ բաղկացած է 17 կտորներից - Ահագանգ, Նախաբան, Հարցաքննութիւն, Նիւ Եորքի Մերթոն, Անդին, Առանձնութիւն, Hawk Mountain, Անպիւլանս, Մահեր, Սեր, Լեակ, Թակարդ, Յանկապատ, Անձկութիւն, Լուսանկար, Կայարան, Ոնիր եւ Պատիժ - Հիմնականում միւնչեւ թեմայի այլապես տարբերակներն է, նոյն կենտրոնական իտէն, որը տարբեր սքեմների տակ օրհասական պատարագի է նստել իր վերջին աղօթքն ասելու: Բոլոր մոմերը վառելուց յետոյ վաղը մատուռի ո՞ր աթուղին պիտի նստի Օշականը: Ճնշման մի սահման կայ, այդ կէտից այն կողմ՝ ամէն ինչ տանելի է, այդ շատ լաւ գիտեն լուսապետներն ու պոէտները: «Ահագանգ»ում յարումը այնքան ուժգին է, որ տէժա-վիւն ակամայից դառնում է սովորական, գիտես թէ պատի յետեւ ինչ է թաքնուած, նոյն յաճախականութիւնը առոյգ սիմպոլների, նոյն հարցապնդումները կորած - չեղածի մասին, նոյն գաղափարը հագար անգամ նահատակուած, նոյն ճիգը կարծես աւելի տպաւորելու, աւելի գարմացնելու, աւելի քանդելու այն՝ ինչ արդէն իսկ քանդուած է: Հասել ենք մի կէտի պատմութեան մէջ, երբ քիչը շատ է, մասնաւորապէս գրականութեան մէջ: Երբ առատ է բանը, ապա բանը կորցնում է իր իրաւունքը՝ միանգամից դառնալով հետիոտն ու անցաւոր: Թողնենք՝ որ լուսերը իրենց կեանքն ապրեն, եթէ կարողանանք գտնել ճիշդ բառը:

Այսամ դժոխքի ինքնաւոյցը կը ծնէր Շաբաթ գիշեր արձակուրդին
սամսունայթը շղթայակապ դաստակին՝ ու փնտոնելով բանալին
վրան հակող դռնապանի աչքի պղտոր ցոլքի մէջ
Բաբելոնի ցոփուհի մը հուլանի, անել փողոց միւնչեւ սեր

«Կեանքը ո՞ր ծայրէն կը սկսի՝ որ պարապ տեղը պոչ չբռնեմք այս ցուրտին»
«Ձեմ գիտեր» ըսաւ հայրս՝ բայց արդէն ուշ էր
բառի արմատ զիս կը ճգմէն Լաօքոնի օձերով արձանացեր՝
նախագաւիթ կը սպասեմ
Թե՛ս սլացիկ քարտուղար՝ արգանդ չունէր սկիզբէն, ալ
ո՞ւր ժամագրուէինք:

Միայն Վահէ Օշականը չէ: Արդիապաշտները հասել են փապուղու ծայրին ու տակաւին յոյսի նշոյլ չկայ, գաղափարը թանձրացել է, այնքան խտացել, որ այլ իտէները կամայ թէ կ'ակամայ խեղդուում են անվերջանալի խաւարում: Փաստօրէն, այլ գաղափարները միւնչ այդ միմեանց կուլ են տուել, չէ՞գոյքացրել, մնացել է վերջին փնտուտուքը: Այդ իսկ պատճառով է հիմնական գաղափարը հէնց առաջին բառերով ահագանգը հնչեցնելով շարունակում է իր անդադրում խոյանքը՝ ապաւինելով յարափոփոխ պատկերների կախարդանքին: Եթէ չհասկացուելու մտահոգութիւն կայ, ապա բանալին կառոյցի ներքին կշռոյթի մէջ է կայանում, ընթերցողից պահանջելով ճիգերի նոյնացում, եւ ինչո՞ւ չէ, նաեւ երկուսնքի բաժին՝ գաղտնագրծելու քոտը, համաստեղծելու, եւ լաւագոյն դէպքում, դէմ յանդիման կանգնելու փապուղու անթափանցելի պատին:

Կա՞ր թէ չկար...
լնակ մը կար -
ամէն առտու՝ մոռնուած ու աղտոտ՝ կարսոնները զայն կը փոեն սեղաններուն
ու կը սպասեն միւնչեւ գիշեր որ ետ ծալլեն ու պահեն մթութեան մէջ մոլեքիւլի գաղթակայան կ'երկարի տանիքներուն քունը պառկել է կռակիկ կը հագայ Մարայ Մելիք անմահութեան Լիլիթութի սկաուտներ քեզ շալկեր ենք ու կ'երթա՛նք
ձախ աչ ձախ աչ լուցկի՝ մը տուր ո՞ւր փախեր է ամէն մարդ,
համագգեստներ գետին թափեր կը վազենք
ժամացոյցը ամէն օր քսանչորս ժամ ետ կը տանիկք որ շուտ հասնիկք
ճամբան հիմա կը հատնի...
արեւ արդէն իր աւելցուք պիտի աւլէ չորս կողմէն ու մայթին վրայ երկնակայ
ու կահագործի աշկերտներ առտու գիշեր ինչպէս
հին հագուագիւտ կարասիներ կը փայլեցնենք,
ծովուն տակը շունչը բռնած՝ Թիթանիքը կը ներկենք,
մեղրալուսնի պիտի երթանք:

Առանց մեկնարանումի, այնպէս՝ ինչպէս որ է, եթէ մեկնարանենք, ապա մեր առջեւ պիտի ցցուի մեր ամբողջ դժբերակ իրականութիւնը, մեր ահուելի տեղաբայր, հոգեկան ամբողջութիւնն ու ներկան անցեալի մէջ սպաննելու մեր գինով ինքնախարէութիւնը, երբ այլեւս ժամանակ չկայ, երբ այլեւս «օգուտ չունի»: Ու նորից յատկանշականը Օշականի շունչն է, որը թէ՛ ճեղքուած մետաղեայ յորձանքի պէս այրում, քերում, առնում-տանում է երեւոյթներն ու արտաքին ամբողջ համայնապատկերը միշտ առոյգ, ժանիքաւոր, առանց սանտիմենտայ մարգանքների: Վարպետ է նիւթական գոյականներն, որոնք քով քովի գալով կերտում են արագ, անմիջական պատկերներն անընդհատ սթաքաթօ, շարժում ու արագընթաց գործողութիւն, խաչաձեւելով, լրացնելով, չէ-գոքացնելով միմեանց, տեսողական ռիթմի մէջ ներքին կըշտույթ, արի ու անողորմ: Սուր, արթուն գգայարաններն հետ երեւոյթներն խորանարդը թափանցելու ունենալու աչք, յատկապէս «Ոճիր եւ Պատիժ» գործում, ուր Լիրանանեան աղէտը մերկանում է իր ողջ թարախակալած էութեամբ: Մէկ տեղ միայն, այն էլ «Պատիժ 2»-ի դէպքում, երբ արձակին է անցնում եղբերգոր, դանդաղում է թափը, բռնագրօսիկ տարածք ստանում հատուածը, երբ Օշականը բազմաթիւ հնարաւորութիւններ ունէր աւելի համոզիչ կերպով ներկայացրելու արդարադատութեան ապսիւրտը:

«Ահագանգ»ում Լիրանանը մանրանկարն է աշխարհի, բեկ-լած արձագանգը Պիաֆրայի, Պանկլատէշի, Բուխէնվալդի, Կատին անտառի, Քամպոտիայի, Հայոց Եղեռնի ու ամէնօրեայ համատարած լլկումի, սահմանից սահման, սահմանադրութիւնից սահմանադրութիւն, պալատից պալատ, օրինաւոր ու ապօրէն, անկարելի մի ծուղակ, ուր գայարւում են ամբողջները, մարդը մարդու դէմ, հսկայ քար են դրել փապուղու առջեւ, խաւարի մէջ միմեանց աչք են հանում, մարդկութեան ողոր, լսող չկայ, յաջորդ օրը մարդասպանները սրճարանում քաֆէ-օ-լէ են պատուիրում:

Հրոսախումբը նախ շրջապատեց խոշոր խոժոռ անկելա-նոցը լքուած խաղաղ՝ Պէյրուէի կոնակը, լերան կողմին: Քառասունի մօտ կոյր համբ ու խուլ՝ աշնան արեւուն Պարտեզ իջեր՝ կը փորձէին տաքնալ, ծովուն դարձած, բիթ բիթի:

Տասնըերկու նըրսերէն չորսը միայն հոն էին: Հրոսակները պատերէն ցատկելով ներս խուժեցին ու բոլորը սպաննեցին, մէկ ու կէս վայրկեանէն, միայն երկու հոգի՝ անիմաստ պատճառով ու բախտով ընտրուած՝ ինկայեցին - նոր նշանուած, խենթի պէս սիրահար ծառի մը տակ առանձին, ձեռք ձեռքի, երիտասարդ գոյգ մը: Հետերնին քաղաք տարին, երգելով պոռալով աղուոր մը կերան, իմեցին, գինովցան, զէնք պարպեցին յանկարծ՝ սիրահար գոյգը յիշեցին բոլորը մէկ վրան ինկան անուրիները, կողերը խտրեցին, գուարնացան, յետոյ մերկացուցին արեւ չտեսած, դալուկ մարմիններուն վրայ անուրնին գրեցին ու լկտի պատկերներ գծեցին վերջը պառկեցուցին քով քովի ու կարգով, երկուքն ալ լաւ մը շուլլեցին վրանին շոեցին, բքնեցին ոտքի հանեցին ու չուանով կոնակ կոնակի ուժով մը իրար կապեցին ու իրիկուան մօտ, կռուի էն կատաղի պահուն արագ մը նօ մէկը լէնտ տարին ու ճիշդ մէջտեղը ճիփէն վար իջեցուցին ու հոն ձգելով՝ ետ քշեցին իրենց թաղը երգելով, պոռալով ինդալով արդէն բոլորովին մտքէ հանած նետած սարսափահար շշմած գոյգը մերկ ու ապսիւրտ: Ու դեռ հոն են անոնք, փամփուռներու քմայքին, արտոյտներու հեզնակքին հազար դարէ կը սարսուռն միս միկակ, մէկը չմօտեցաւ, ոչ ոք գթաց բարեւ տուաւ կոտրած շիշերու, այրած օթօներու, մեռած շուններու հետ

իրենք ալ մնացին տեսարանին մէջ առկա, այնպէս որ ալ ոչ ոք լուրջի առաւ, ու ի վերջոյ, մոռցան:

Մինչեւ այստեղ արդէն ոճի մասին էր խօսքը: «Ահագանգ»-ը ինչ է գրական մեծ ու փոքր գիւտերով, անսպասելի շողարկումներով, վերացականը գոյական ածականով եւ հակառակը՝ ստեղծելով նոր դիտանաններ, էլ աւելի պրկելով միտքը, սրելով միտքի ուրտը, պատասխանից առաւել՝ հարցումներ առաջադրելով: Գործը նորութիւն է նաեւ այն առումով, որ հեղինակը ապաւինել է մի շարք նոր խորհրդանշանների - վաթսուն, տոմսակ, թուրիսթ, խորոված, սթրիփ-թիզ, սամսոնայթ, թել, նէկաթիֆ, օթօ, մարգարէ, ասֆալթ - որոնք ընթերցողի հայեցողութեան բովից անցնելով ընդհանրու-թիւն կարող են ունենալ միւսի մօտ: Մաքրամաքուրները թերեւս խոժոռուեն, սակայն փաստն այն է, որ գրքում գործածուած օտար բառերն ու ասացուածքները ոչ միայն անմիջականութիւն ու էֆէքթ են ստեղծում, այլ միանգամայն համապատասխանում երկր ընդհանուր կառոյցին ու բովանդակութեան:

Վերջին նեկաթիֆն է: Թուրիսթը կը դնէ լուսանկարչական գործիքը աչքին կը չափէ հեռաւորութիւնը, յետոյ լոյսը, կ'անշարժա-նայ: Ծերուէիւնը կը դողդոջայ մարմնի մակերեսին: Կինը կը հարցնէ - Ի՞նչ է քաշածդ - Կեցիր, հիմա կ'ըսեմ: Կը կոխէ բլթակը: Օպէքթիֆը կը բացուի, բայց չի գոց-ւիր: Կրկին կը կոխէ: Անօգուտ: Կը հայհոյէ: - Ի՞նչ եղաւ - Չեմ գիտեր. կարծեմ աւրուեցաւ: - Ի՞նչ, չքաշեց: - Ոչ: Հաւանաբար միակ պատկերն էր որ քաշուեցաւ բայց դէպի ներս, աչքին ետին այս անգամ հոն ուր բնակիչներն աշխարհին, ողջ ու մեռեալ, խոնաւ ու կաղ համբաներէն, տանիքներէն եկեր թափեր ու դիզեր են տառապանքի ու հեշտանքի թունոտ կոչչուն մշուշին մէջ գիտակցութեան, ուր թուրիսթը մերթ անօթի ու շուարուն՝ կը թափառի ու կը փնտռէ:

Այս բոլորից յետոյ Վահէ Օշականի «Ահագանգ»-ը ազատագրման մի նախաքայլ է, համարձակ մի արար՝ թէ՛ որպէս գաղափար ու նիւթ եւ թէ՛ որպէս ձեւ: Հայ իրականութիւնից ներս ու հայ իրականութիւնից դուրս, խորութեան մէջ այն բողոքի ահագանգն է ընդդէմ դժխեմ իշխանութիւններին, անմարդկայնացած հաստատութիւններին եւ հասարակական խոպան հասկացողութիւններին: Այն եկել է հուշակելու իր ուրոյն գեղագիտական ինքնութիւնը՝ հեռու բարոյական ու դաստիարակչական մտասեւեռումներից, վերակառուցելու անհատի ու մարդկութեան տիեզերքը ըստ իր սեփական աշխարհահայեացքի, պատասխանատու ոչ ոքի, բացի ճշմարտու-թիւնը, որ իր յարատեւ փնտրտուքն է, իր գողգոթան ու իր յարութիւնը:

Ասացինք արդէն, գիրքը իր ուրոյն ծիրն է ապրում: Հեղինակը այլեւս բացակայ է: Գիրքը կարող էք կարդալ կամ չկարդալ: Կարող էք սիրել կամ չսիրել, սակայն չէք կարող անտեսել իր գոյութիւնը, քանի որ այն պարտադրում է իր իրաւունքը ինչպէս աստղն ու ծովը, ծառն ու մարդը, ինչպէս ամէն մի երեւոյթ մեր տեսանելի ու անտեսանելի տիեզերքում:

ՅԱԿՈՒ ԿԱՐԱՊԵՆՅ

Շ Մ Ն Բ Ա Մ Տ

Տարեդարձ է այսօր, հէ՛յ Պարոն՝ Վրէժ,
Տէր Զօր ծնար, անյիշատակ վայրերու մէջ հասակ առիր
քիչ մը դրամ, քանի մը բառ արաբերէն
երգ մը հայերէն, տարին մէկ հեղ պարահանդէս,
Հայաստանի պատիկ կարօտ որ կը մաշի
եւ օթոյի պատիկ երազ որ կը մեծնայ:
Նախ մարդիկը խաբեցիր, յետոյ դուն քեզ խաբեցիր
կին մը առիր զոր սիրեցիր լահմ աճինէն ալ ւաւի
տղաքդ ծնան քեզմէ գաղտնի հոս հոն մեծցան
շուկան մեռաւ ծնաւ նորէն մեռաւ
բայց Պոլոնիան անմահ մնաց Հայութեան հետ.
հիմա հասեր էս հոս, Ապրիլ քսանչորս:

Ի՞նչ պիտի ընես այսօր, տարեդարձիդ, Պարոն՝ Վրէժ...:
Տիկին Ալնի կը քնանայ տակաւին
Մարին լաւ որ օտար դպրոց դրկեր էս, գէթ մէկ օրուան դրամը փրկեցիր,
տղաքդ Աստուած գիտէ որ տեղերը կը թափառին
բարեկամներդ բոլորն ալ խանութները գոցեր են-
Պարոն Սեդրակ ճուղի շուկան Սուլթան Իպրահիմ կը սակարկէ,
Յակոբ մակոբ նստեր տեղ մը պլօթ կը դարձնեն,
հարիւրներով Անգարայի ռատիոն բացեր մտիկ կ'ընեն,
նորիշները երէկուան թերթին մահապղնները կը կարդան
բիճամայով սենեակներէն աննպատակ կը ալքտան
այսօրուան չշահուելիք դրամը կը հաշուեն ու կը հաշուեն
կը յօրանջեն, կը պրկուին, կը հայոյցեն...
տասնեակ մըն ալ եկեղեցին ժամէ ի վեր ոտք կը փոխեն
ու կ'օրօրուին ու կը թմրին գրաբարի ու քարոզի հաշիշին մէջ,
ծնողներու պալիաներէն կտոր կտոր երիտասարդներ կարկտեր են
ու լեցուցեր ժամուն բակը, ակումբները՝
որ մանկութեան հերոսները առանց պուպրիկի չմնան:

Տարեդարձդ, Պարոն՝ Վրէժ, ա՛լ չի գար...:
Կուզը տնկած, սրտաճմլիկ վարժապետի կարաւաններ
խման լալկան պէքեարները գրոց բրոց
անուշահոտ, գիրցող-ժպիտ, Ամերիկա երազող վարդապետ
քացիած խօսքի հում-հում աղիք վզին փաթած ճառախօս
խամաճիկի շուկայէն աժան գնուած իմբագիր
պատանութեան կեղեի մէջ ապաստանած բանաստեղծ-
այս մարդիկը պայն խեղդեցին կամաց կամաց,
ինչ որ մնաց ջարդերէն այս մարդիկը մաքրեցին
կաթիլ կաթիլ քու արիւնը ծծելով որ ապրին:
Կ'արժէ՞ պատժել այս մարդիկը, Պարոն՝ Վրէժ
որոնց ետին մինչեւ այսօր պահուրտեցար:
Բայց հիմա էս քեզ կ'ըսես
Փախուստ չկայ այլեւս,
Ի՞նչ նստեր էս միս մինակ խանութիդ մէջ
դուռը կղպեր մութին կու լաւ... -
քառսուն կաշի հոգեհանգիստ տօնավաճառ ու սգատօն
քառսուն կաշի կուսակցական ակոսան փտած զոքանչ պապա փրոփականտ
քառսուն կաշի գիրուկ ճաղատ բորբոս «հայ հոգի»
քառսուն կաշի ամբոխային ատելութիւն, գիջացող խանդավառում
քառսուն լէշը բոնաբարուած կոյս հաւատքին, հողի սէրին ու Հայ Դատին...
ու քեզ տակը դրեր են մոմիայի պէս
քառսուն կաշի վմոսուած առ յաւիտեան...:
Ամօթ է ծօ, ա՛լ կը բաւէ, դուրս նետուէ
դո՛ւրս,
սա՛նկ շարտէ վրադ դիպուած դիակները,
նա՛նկ շարտէ ծերանոցի սովալլուկ պահակները,
բաղնիք մը առ, փողոցն ինկիր քու դարուդ,
աճապարէ՛
մարդկութիւնը հարիր տարուան ավանս ունի քու վրադ,
երէխայ չես, ալ մի՛ սպասեր տարեդարձիդ:
Թորքը թորք չէ, Հայը հայ չէ
մարդը սուածը օտար է,
դո՛ւն կաս միայն
պատրանքներու անհպելի հայելիին մէջ բանտուած
մարդկութեան հետ:
Ահարկու է մարդ ըլլալը ու հոյակապ նոյն ատեն
որ ոռմբ մըն է որ կը պայթի անդադար
պիտի մեռնիս պիտի ծնիս նորէն մեռնիս նորէս ծնիս
ու շարունակես մինչեւ ծայրը
առանց յոյսի ու միտոնի
ու փորձելով փշրել հայելին, հասնիլ կեանքին...:

Փախուստ չկայ այլեւս, Պարոն՝ Վրէժ-
կամ՝
դուրս կ'ելլես քու անցեալի խանութիդ
ու կը փնտռես նոր անօթի չոր ու դաժան աչքերով
թաւալգոյր խուժաններու եղբայրութեան պատահական բուպէին մէջ
ի՞նչ ըսել է մարդ ըլլալը,
ի՞նչ ըսել է հայ ըլլալը,
կամ՝
եղած տեղդ կը մնա՛ս
ու կը նեխիս միս մինակդ անշունկ
դէպի անցեալ ու ապագայ տարածուելով,
քոլոնիայի, սիկարէթի ու քէպապի բոյրին մէջ:
Տարեդարձդ, Պարոն՝ Վրէժ, ա՛լ պիտի չգայ:



ՔԱՂԱՔ

Այսպէս կ'ապրի քաղաքը,
 մեր հարցական հոգիները պատանդ առած
 որ ասպատակները երբ պարտուին՝
 հերոսներու շփոխութիւն ու շծնի
 առասպելը
 ըմբոստին,
 մեր խիղճները պարբերաբար կը լուայ՝
 որ չփլին սանդուխները, աթոռները
 մեր ախտերու, մեր մեղքերու ծանրութեան տակ:
 Մինչ կրօնը,
 որ Աստուծոյ շուքին պէս
 Մարդուն վրայ ինկած է
 որ խնայութիւն, հաւանաբար, մեր աչքերը՝
 ճշմարտութեան ռատիօաքթի
 շառայլէն,
 մինչ կրօնը՝
 անցագրի վրայ շարտուած բառ մըն է
 որ քաղաքը
 սխալ վայր մը չփորէ
 գերեզմաններս:
 Ատկէ անդին...
 Թէրմինիսին
 հանրակառքը պարապ է, լոյսը մարած,
 լացողներու վերադարձող կեանքերուն պէս,
 տեղ մը գիծ մը կը քաշեն անկիւնը ոլորուած էջին
 վրայէն
 որեւէ անուն սրբելով,
 մէկը տեղդ գրաւեց
 բազմութեան մէջ որ պոչ բռնած ետեւէն
 քայլ մը առաջ շարժեցաւ...:
 Ու դարերով պիտի շարժի, պիտի շարժի
 բայց նոյն տեղը պիտի մնայ
 մինչեւ վերջին յանախորդն ալ, շուարած,
 անցնի երթայ:
 Ու այն ատեն
 պիտի գոցուին, քիթ քիթի, ճոնչելով
 փտած փեղկերը կիշէին
 սա խանութին՝
 որուն կեանքի անծայրածիր պաշարէն
 ոչ իսկ հոլ մը պակսեցաւ:

Քիչ մը հեռուն, ծառի մը տակ,
 վերջին սրտին վերջին երեք զարկերը
 այնքան ուժգին պիտի զարնեն զանգերը
 ապրողի մը ծով կարօտին սովահար, խելագարած,
 մատնուած,
 առանձնութեան սարսափելի քրքիջէն
 նուաստացած, խաբուած մարդու
 ճիշովը՝
 որ Աստուած լսէ ու վար իջնէ,
 քովը նստի...:

Այդ մարդն ըլլալ,
 ոտքի ելլել
 ու հեռանալ...:

(հատուած)

«ՔԱՂԱՔ»

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ 1

ԱՐՅԱՆԻ ԶՈՒՆՈՒՆ

Պէ՛տք է հողը տի ու գիշեր արիւն ծծէ
 ճնլէ պատռէ մարմինները երազները
 լափէ անյագ ախորժակով
 զաւակները՝
 որ մայրանայ յոյլ ու պարարտ ընկողմանի
 տէրը դառնայ գիտակցութեան հորիզոնի
 մաքսանեցող թաց լուցկիներ
 գետին թափէ
 բայց մենք նորէն ուրուականը պիտի տեսնենք
 երկվայրկեան մը պիտի ապրի մեր սրտին մէջ
 թակարդներ կան խորը ինկեր
 մենք ի՞նչ գիտնանք
 ինչ ըսել է մահուան վախը թուրք խուժանը
 չէ այցելած օտարութեան խոզակին մէջ
 կծկուեր ենք կ'ուզենք շնչել
 մինչեւ ծայրը
 ժամանակի կոյր աչքերէն թելեր եկեր
 հեռու լեռներ՝ հագի դպեր կեանքի բիբի
 սեւ սկրատը արդէն կտրեց
 պիտի մեռնի՝
 հոս ես հո՛ս ես ինձի՛ անցուր ե՛ս ալ հայ ես
 քեզի նման ոգիներու բաժակաճառ
 պիտի խօսիմք կոտրած փեղկեր
 շաշեն պատին
 ուրուականին փաթուրեր ես ես ալ քեզ պէս
 ծուղակին մէջ լոյսի կոճակ մը կը փնտռես
 ա՛յս է ծայրը քու յոյսերուդ
 տառապանքիդ
 գաղտնիքը տուր՝ յետո՛յ գնա հողին փեսայ
 կամ ողջակէզ՝ ես չեմ գիտեր խեղճ մարդ մըն ես
 երակներէս բառ կը հոսի ու շուք շուքիմ ոչ ալ հոգի
 քեզի տալիք միայն սիրոյ բուրվառ մը հոն օղէն կախուր
 պիտի ճօճուիմ բուրեմ երգեմ նոյնիսկ սուլեմ
 հայու ճարած հասրերութեան թաղարին մէջ
 յիշատակդ դալար մնայ
 պայծառանայ գեղեցկանայ
 մահէն անդին:

28 Նոյեմբեր 1988,
 Սան Ֆրանցիսքո

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ 5

ՎԱԿԼԻՆ

Պատասխան 5

Աչք - Անշուշտ լսեց ամպիւլանսին վայնասունը որ զինք
 միշտ սուկումով կը լեցնէր: Հիմա սակայն կ'ուզէր որ
 վերջ շունենար, ուժ կու տար իրեն, ժամանակ կը շահէր
 ու աս եղածը կարելի է երապ էր: Կուրծքին ցաւերը
 ատոնք ալ վերջ շունին, հեռունէրէն կու գան:
 Ես - Ինչո՞ւ հոս ես, ուրիշ մէկը ըլլալու եմ տեղս գետինը
 պանկած է:
 Աչք - Գիտակցութիւնը կու գայ կ'երթայ, հիմա մութին
 տակն է, յետոյ կամաց մը երեսը կ'ելլէ այնքան թեթեւ որ
 ուժ չէ մնացեր մէջը, արդէն սրտի հիւանդութիւն ունի,
 անկէ պիտի երթայ:
 Ես - Պիտի մեռնիմ, երապ չէ՞ ասիկա:
 Աչք - Ուրկէ՞ եկաւ այս մտածումը եւ արդէն խաւարին
 մէջ կը կորսուի, մարմինին ցաւն ալ հետը: Հիմա նորէն
 դուրս ելաւ մութին, լոյսը կը թափանցէ աչքերուն,
 մարմինը կը պաղի երթալով...:
 Ես - Պիտի մեռնիմ ի՞նչ է մեռնիլը:
 Աչք - Վրան բան մը թող գոցեն, շուրջը աղմուկ շարժում
 կայ, ամպիւլանսին ձայնը շատ մօտ է, հիւանդանոց պիտի
 տանին, ողորմելի բան մը պիտի ըլլայ, փշրուած
 մարմինով:
 Ես - Ես չեմ վախնար մեռնելէ:
 Աչք - Կեանքին մէջ վախը ինչ է չէ ճանչցած, միշտ
 ապահով պաշտպանուած՝ երբեք մահացու վտանգի
 առջեւ չէ գտնուած:
 Ես - Մահը կեանքէն աւելցածը ըլլալու է, կամ ալ կեանքին
 պակասածը:
 Աչք - Հիմա նորէն մութին մէջը կ'ընկղմի... յետոյ նորէն
 ետ երեսը կ'ելլէ, բան մը կը փնտռէ ցաւէն անդին, մահէն
 առաջ:
 Ես -
 Աչք - Հայրը ըլլալու է, կամ կինը, միակ անձը՝ որ զինքը
 ճանչցաւ եւ ընդունեց... կամ՝ մայրը որ ամէն տեղ է եւ ոչ

մէկ տեղ: Աղօթող մայրապետին սեւ զգեստին շուքը կու գայ մտքի պաստառին, յետոյ կ'անհետի եւ նորէն առանձին է կատարելապէս:

Ես - Ես եմ, ես եմ սահիկա:

Աչք - Ցաւերը կը սաստկանան, հազիւ կրնայ շունչ առնել, վահէ կը մեռնիս կոր, սիրտդ կեցաւ, չի կրնար աշխատիլ:

Ես - Յստակ է միտքս, դուրսը հեռուն մարդ չկայ:

Աչք - Շուրջը մարդ կայ, բայց ինք չ'ուզեր ընդունիլ... յետոյ՝ ես կամ, գիտէ որ հոս եմ, առանձին չէ: Կ'ուզէ որ մայրը կիներ քովը գան, տեսնեն իր վերջին վայրկեանը ու կարելի է ներեն իրեն... բայց միտքը կը պղտորի, նորէն մութին մէջ պիտի սուզուի:

Ես - Չէ, չէ չէմ ուզեր մութը, կը վախնամ:

Աչք - Հիմա նորէն ետ եկաւ, պղտոր տարտամ ձայներուն եւ շուքերուն մէջ: Վերջին առիթն է որ ինքզինքը ամբողջ, լիացած զգայ, ճշմարտութեան հասնի: Բայց պիտի կարենա՞յ մտածել, ծանր մութը կը կոխէ աչքերուն:

Ես - Ոչ ոչ:

Աչք - Պիտի յաջողի՞ իրականութենէն ազատիլ, երեւակայութենէն ալ ազատիլ՝ որ ինքզինքը ըլլայ գոնէ մէկ անգամ... մեղք է սա մարդուն:

Ես - Մամա...:

Աչք - Ցաւերը կը հատնին արդէն, արիւնը դեռ կը հոսի, պիտի երթայ սա մարդը...: Ոչ բարի է ոչ ալ չար:

Ես - Մամա...:

Աչք - Հիմա ուրիշ բան մըն ալ:

Ես - ... Ար...:

Աչք - Գրեթէ լմնցաւ ամէն բան, բայց վերջին ճիգ մը պիտի ընէ: Մութը արդէն ետ կը հոսի մշուշի պէս, մարմինն ալ չի զգար, լոռութիւնը կը լեցուի մէջը... գնա՛ց... ոչ ոչ վերջին անգամն է ետ լոյսին կը բարձրանայ:

Ես - Ո՞ւր է ո՞ւր է Աչքը...:

Աչք - Մահը պատիժ մըն է մանաւանդ իրեն համար՝ որպէսզի գինը վճարէ իր յանցանքներուն...: (Լուռ է Աչքը) Մահը նուէր մըն է ու կը մաքրէ, կը թեթեւցնէ խիղճը: Հիմա ուրախ է մեռնելուն, իրապէս երջանիկ է՝ հաւանաբար առաջին ու վերջին անգամ ըլլալով, կեանքին մէջ:

Ես - Ներէ ինձի... ա՛խ, ի վերջոյ...:

Աչք - Այո, հիմա բոլորովին ազատեցաւ իրականութենէն եւ երեւակայութենէն... վերջապէս վաւերական դարձաւ:

Ես - ...:

Աչք - Աս է իր ճշմարտութիւնը:

Ես - Այո...:

Աչք - Գնաց, մեռաւ, լմնցաւ:

Ես - Ոչ...:

Հոգեհանգի՛ստ...

Ի՞նչ կը մնայ փրկելիք՝

երբ բռներու խորհրդաւոր որջերէն

պարկիները գազաններն ալ չեն խուժեր

գիրկընդխառն

ճառագայթի ողնին վրայ կեանք պայթելու մահ

տօնելու եւ յանկարծ՝

վայրկեաններէ հեղձահար

ծամանակի լաստակերտը կը փլի

բոլոր լոյսերը կը մարին բայց խաւար չէ՝ այլ ես կամ

մանր պարոյկ՝ մեծ խուճապի փոթորիկին դիմաց

կայնած՝ յայտնելու

անբառ սիրով՝ թէ ահա

ես եմ մարդը որ չճնամ՝ կը մեռնի՞

թէ ոչ մութը կայ Միսոթորեան այս բաւիղին ոչ ալ էլք

միայն քայլել ու խենթի պէս անոր կառչիլ ալ նոյնացած

անոր հետ:

Հոգեհանգի՛ստ...

Անտես մատներ եկեր բառը իր իմաստէն կը վատեն

տանին թաղել խաչին տակը լքուած անտէր Օտարին

աղօթքները յուղարկաւոր թափօր կազմեր՝ կը

սպասեն

խունկը իջեր վերջին անգութ մերկութիւնը ծածկելու

Աչքին ետին կեանքի բեմին վարագոյրը քաշուեր է

Հայր ու Աստուած զգեստները արդէն փոխեր՝ կը

մեկնին

ստերջ լկտի հիւլէներու բոցաւազը կը սատկի

սրտի ծովէ՛ն հողամասէ՛ն թէ երկինքէն կը ծնի

էակը որ աւելի ուշ կեանքն ու մահը կը ստեղծեր

ինքզինքը մարդ կը կոչէր կ'ապաստանէր բառին մէջ -

Հիմա վերջին սէգ ոստումն է իրմէ անդին հասնելու

սիրով անձիր տարածքներուն՝ հոն դադրելու՝

վերջացած:

Հոգեհանգի՛ստ -

ոչինչ մնաց փրկելիք

իր թշնամին Օտարէն վատ որուն վրայ ան

գուրգուրաց

խոցուած խիղճով հետեւելով անոր անգոր

խրախճանքէն փշրանք մըն ալ՝

յետոյ եկէք կոխկոտեցէք աղբանոցը զիս թափեցէք

տարիներս մանրուք դրամ՝ ամէն քայլի վատնուեցան

ածան գինով սակարկութեան ապրանքներով կեանք

լեցուցի

ամէն անկիւն յիշատակի արմատներ կան մէկ մէկ

քաշել

նետելու է ու քայլելու՝ անկարելի վերջին քայլը

ուրկէ անդին վեխ ու խենցէ հիւլէներու կայսրութիւնն

է

ուր մարմինը իր ահաւոր ախորժակը յագեցնէ

ալ ազատած մարդու շուքին կծկուելու ճակատագրէն:

Պատում 6

Հովասուն առաւօտ մըն է: Բլուրներու վրայ փռուած գերեզմանատան մէկ անկիւնը, գոց դազաղի մը շուրջ խումբ մը մարդիկ կայնած են, յանցաւորներու նման: Երիտասարդ քահանան վերջին աղօթքն ալ աւարտեց, աճապարանքով: Ամբողջ կեանքը հրմշտուք մը եղեր էր, մանաւանդ սա թաղումները եւ հոգեհանգիստները: Քահանան աչքերը գոցեց՝ չտեսնելու համար մահուան աներեւակայելի դէմքը:

Փորձեց զգալ պահը աւելի մօտէն - անշարժ, ամալի վայրկեանը, բայց նաեւ՝ խիտ թանձր եղերականութիւնը: Հաշիւ մը որ կը փակուէր մարդոց հետ ու նոր հաշիւը որ պիտի սկսուէր փոսին մէջ: Բայց մարմինը դեռ չէր իջած: Կիները կը հեծկոտային ու քիթ կը քաշէին, մարդիկ անդինները կը նայէին, տղեկ մը թռչունները կը դիտէր: «Բան մը չէմ հասկնար կոր սա եղածէն, ոչինչ» խորհեցաւ ու սկսաւ աղօթել:

Աչքը, ծառի մը ցած ճիւղէն, կը հետեւէր տեսարանին:

Աչք - Հիմա փոսը պիտի իջեցնեն, խաւարին մէջ, հողով պիտի գոցեն վրան, բայց անօգուտ է, անիմաստ՝ որովհետեւ իր տեղը ես առած եմ լոյսին մէջ, հոս, եւ ինձի հետ՝ բոլոր մարդիկը, էակները, առարկաները, ծառ ու կենդանի որոնք ան, իր «ողջութեան» կեանքի բերաւ իր աչքով ու նայուածքով, իր ձայնով եւ ականջով, իր մատներով...: Անոր գիտակցութիւնը հասարակաց գոյութիւն մըն էր որ ան ապրեցաւ աշխարհի հետ միասին եւ աշխարհի յիշողութեան մէջ: Ու հիմա այդ շինուած այս աշխարհին մէջ՝ հակառակ որ մարդը ինքը ոչ մէկ տեղ յայտնի կ'ընէ ինքզինքը:

Մարդը - Ես եմ ձեւն ու բովանդակութիւնը այն ամէն ինչին որ դուրս կը յորդի մարդ արարածի ընկալումէն, երեւակայութեան ահարկու կարկինէն ու մարմնին աշխարհակալ փաղանգներէն: Որքան ատեն որ ես կամ՝ այնքան ատեն անոր յիշատակը պիտի մնայ: Բայց իրականութեան մէջ ես բացակայ եմ ինձի եւ ինձմէ, եւ միայն այդ պայմանով է որ ես կրնամ պահել իմ գոյութիւնս: Այսինքն՝ ես, աղբիւրն ու արմատը բառ կոչուածին՝ չեմ կրնար բառի վերածուիլ: Մահ բառը ինձի համար չէ, ոչ ալ ծնունդ բառը: Ես դուրս եմ բառի կայսրութենէն:

Աչք - Բայց դու չես բառ կոչուածին աղբիւրն ու արմատը: Մարդը - Ես եմ նաեւ ամէն ինչը որ իմ մէջ է բայց կը ծածկէ իր ինքնութիւնը, կը վախնայ լոյսէն, կը պահուրտի բառերէն:

Աչք - Ինձմէ չես կրնար պահուրտիլ, նոյնիսկ գերեզմանին խորը, նոյնիսկ աճիւնի ու փոշիի վերածուած: Ես հապար կերպարանք կ'առնեմ ու մարդու կերպարանքը՝ ատոնցմէ մէկն է միայն, ողջ թէ մեռած: Մարդը - Ողջ թէ մեռած՝ ես այդ բոլոր կերպարանքներուն էութիւնն եմ:

Աչք - Բայց դու միայն մարդն ես, առանց բառի կամ կերպարանքի: Պէտք չունիս հոգեհանգիստի: Դուն հոգիէն ու մարմնիէն անդին՝ մարդն ես եւ մարդուն էութիւնը նոյն ատեն:

Մարդը - Այո:

Քահանան կը հեռանար գերեզմանէն...: Եւ, առաջին անգամ ըլլալով՝ տարօրինակօրէն ուրախ, թեթեւցած: Շուրջը նայեցաւ - մարդիկ ոչ ընկճուած ոչ ալ աճապարուած կը թուէին այլ արդէն հանգստացած, մաքրուած՝ կը խօսակցէին ցած ու հանդարտ ձայնով: Ի՞նչ փոխուած էր: Չհասկցաւ: Միշտ կեանքի վրայ դրած կոյր վստահութիւնը տկարացած էր երբ դարձեր էր գերեզմանոցէն: Հիմա տարբեր էր «կարծես թէ աշխարհին տէրտը հետը գերեզման տարաւ» մտածեց: Չեղբը օթոյին դռնակին՝ աչքը շուրջը պտրտցուց ու ծառերը, ամպերը հեռուն բլուրը աւելի լուսաւոր, աւելի մօտ թուեցան սրտին:

Բացաւ դուռը, ներս մտաւ եւ աշխատցուց մեքենան:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Իր մահուան հետ կր քակուի՞ իր բանաստեղծութեան ստեղծած հարցադրումներուն ցանցը, թէ մահը առիթ մը եւս կը դառնայ, կրկին անգամ խօսելու այդ ցանցին մասին:

Բանաստեղծի մը հուշերը այն է սակայն, որ կը խուսափի չափանշումներէ, իւրաքանչիւր ուսումնասիրութեան հետ նոր ընդլայնում կը ստանայ եւ միշտ նոր յայտնարեւոյթներու առիթ կու տայ: Այս առումով, Վահէ Օշական, իր մահէն ետք իսկ կը շարունակէ խնդրայարոյց երեւոյթ մը ըլլալ, թէ եւ պէտք է ընդունիլ, որ իր առաջին գիրքերը, եթէ ըստ իր ստեղծողի հակադրութիւն չէին ստեղծած, բայց դիմաւորներ էին, լաւագոյն պարագային, լուսութեամբ: 1956ին լոյս տեսած «Պատուհան»ը ա՛յնքան նոր էր, ա՛յնքան հեռու դասական եւ ընտանի քերթողութենէն, որ ընթերցողները ժամանակի կը կարօտէին, «մարտելու» համար այն, գոր Վ. Օշական որպէս քերթողութիւն կը ներկայացնէր: Նախ որպէս ձեւ, այդ գիրքին մէջ միասնարար կը ներկայացուէին արձակ եւ չափածոյ գրութիւններ: Գիրքը, սակայն, որպէս քերթողագիրք կը ներկայանար. ո՛ւր էր այնտեղ քերթողութիւնը, երբ չափածոյ գրութիւններն իսկ հեռու էին մեր դասական քերթողութենէն: Անշուշտ կար շունչը՝ անվիճելիօրէն բանաստեղծական, նոր եւ ցնցող պատկերներու ցանցով, հակա-քնարականութեամբ եւ ամէն ընկալուածի մերժումով. այլ խօսքով՝ բանաստեղծական էր գիրքը, իր հակա-բանաստեղծականութեամբ, երկու եզրերն ալ նոյն շրջարկին մէջ առնելով:

Գրիգոր Պըլտեան այս առաջին գիրքին համար տարիներ ետք պիտի գրէր.

«... եւ տեղ մը, կարծէք ճեղքէ մը ներս, բաց հովն էր որ կը մտնէր, շըլըխտի երբեմն, ցուրտ, բիրտ ու կատաղի, երբեմն ձախաւեր, բայց բոլոր թանգարանի մոմիակերուկ կու տար իրենց իսկական անուկը»:

Այդ առաջին գիրքը լոյս կը տեսնէր շատ կարեւոր եւ նուրբ շրջանի մը մէջ. Վահէ Օշական այդ օրերուն Սորպոնի (Փարիզ) ուսանող էր. Եւրոպան նոր կը սկսէր թօթափել շամաշխարհային Երկրորդ պատերազմին հետեւանքներուն ազդեցութիւնը, իսկ հայկական գաղութները կը շարունակէին մնալ կեթոյացած իրենց ցաւերուն մէջ, հեռու մարդկային այն ծանր տագնապներէն, որոնք կը լարէին աշխարհը: Անշուշտ Փարիզը, որպէս արուեստներու կեդրոն, պիտի ունենար իր ազդեցութիւնը Վ. Օշականի վրայ, որ խառնուածքով բաց էութիւն մըն էր ամէն նորի հանդէպ: Թերեւս միակ եւ առաջին ազդեցութիւնը լոյսի քաղաքին այն էր՝ Վ. Օշականի վրայ, որ իր ընածին ըմբոստութեան կը խառնէր բարկութիւն մը, եւ կու տար իրեն յանդգնութիւնը ընելու այն, գոր ինք ճիշդ կը գտնէր:

Երկրորդը իր քերթողագիրքերուն՝ «Քաղաք» (լոյս տեսած Պէյրութ, 1963ին), կը շարունակէր առաջինին ո՛չ միայն ձեւը, այլեւ՝ ըմբոստ բարկութիւնը, քաղաքի մը անկիւններուն եւ թոհուրոհին մէջ ապրող մարդուն տագնապներուն եւ հարցադրումներուն ընդմէջէն:

Այս առաջին երկու գիրքերէն իսկ յստակ կէտեր կային Վ. Օշականի քերթողութեան մէջ, որոնք դարձան այդ քերթողութեան առանցքը, բանաստեղծին իւրայատկութիւնը նշելով, միաժամանակ գինք թակարդելով շրջանակի մը մէջ, որ կամաց-կամաց, յաջորդական գիրքերու հետ, պիտի փակէր իր շուրջը:

Այսպէս, մարդը եւ կեանքին անհեթեթը պիտի դառնային գլխաւորը այդ կէտերուն: Յատկանշական են առաջին քերթողագիրքին այս քանի մը տողերը.

«Այս վայրկեան
մարդ մը առջիս՝
կը դիտեմ:
Ու մինչեւ վերջ
այդ ընեմ պիտի»

հաւանաբար»

(«Պատուհան», էջ 9)

Եւ անշուշտ կը բացատրէ թէ ինչու.

«Որովհետեւ մարդ էակը
միակ արժէքն է ամպերէն վար
ու մանաւանդ վեր»

Մարդը պիտի դիտուէր իր ամենամտերիմ պահերուն մէջ (սենեակին կամ աւելի ուշ՝ պէտքարանին մէջ), իր ամենահասարակ վիճակներուն ընթացքին (սրճարան, եկեղեցի եւ ամէնէն էտագնապալից հոգեվիճակներուն մէջ (միտք, հոգի, մարմին)):

Այդ մարդը, եւ ասիկա հիմնական է Վ. Օշականի քերթողութեան համար, նոյնքան եւ նոյն ուժգնութեամբ իր պատկանելիութեան տառապանքը ապրող մարդ է. թերեւս իր գրականութիւնը չգրաւէր այն կարեւոր տեղը, որ ունի այսօր ժամանակակից սփիւռքահայ գրականութեան մէջ, եթէ այդ գրականութեան առանցքը կազմող մարդը չըլլար նաեւ հայ, չըլլար իր երկիրը կորսնցուցած, իր տեղն ու դերը փրնտուող, թուրքին հայածախտէն տառապող հայ մարդը.

«Կարծես մարդ էակին գաղտնիքը չէր բաւեր: Հիմա հայ անուկն ալ գաղտնիք մըն է, բազմապատկուած...»: («Պատուհան»: էջ 17):

Երկրորդ կարեւոր կէտը հայ-թուրք հոգեբանական կծիկն է, որ կը շարունակէ չքակուիլ, այլ խօսքով՝ «չկրցանք ատել քեզ, Իշլամիս, որովհետեւ քու պատկերը մեր գանկէն ներս աղօտ ու վերացական մնաց». («Պատուհան»: էջ 17):

Թէ Վ. Օշականի առաջադրութիւնները այս հարցին առնչութեամբ իրապէ՞ս առաջարկներ են, թէ պէտք է գանոնք դիտել բանաստեղծութեան շրջագիծին մէջ միայն, կը կարծենք, որ այս էջերու սահմանէն դուրս մնացող հարց մըն է: Սակայն ի՛նչ ալ որ ըլլան անոնք, նո՛յնքան ցնցում կը պատճառեն ընթերցողին, որքան նոյնինքն Վ. Օշականի քերթողութիւնը: Հայ-թուրք քոնֆլիքթը սկիզբէն իսկ կար եւ կը շարունակէ մնալ մինչեւ վերջին քերթողագիրքը: Աւելի շատ հոգեբանական հարց մըն է ասիկա, որ կը տանջէ, որ կը մերժէ յետին փյան մղուիլ. միակ միջոցը գայն միտքով ընկալելն է:

Վ. Օշականի ամբողջ քերթողութեան մէջ ինքզինք զգացրնող հարց մըն ալ այս է, այս միտքին գորաւոր ներկայութիւնը բանաստեղծութեան մէջ, բան մը, որ այնքան ալ սովորական չէ մեր գաղութներով թաթալուկ քերթողութեան համար: Սփիւռքահայ քերթողութեան մէջ, իրմէ առաջ երեւի նիկողոս Սարաֆեանն էր, որ մտածեց բանաստեղծութիւնը եւ ոչ թէ մտածում դրաւ բանաստեղծութեան մէջ: Անշուշտ մեծ է տարբերութիւնը այս երկուքին միջեւ:

Թէ եւ իր քերթուածները կը շարժին ներքին այնպիսի մեծ թափով, որ այնքան ալ տեղ չի ձգեր մտածումին, բայց անոնք, այդ քերթուածները միտքէն, եւ ոչ թէ ներշնչումէն է, որ ճամբայ կ'ելլեն: Այսպէս է, որ սփիւռքահայ մարդը, իր բոլոր թերիւներով, կը դառնայ հակա-հերոսը Վ. Օշականի քերթողութեան: Հակա-հերոս կ'ըսենք, որովհետեւ անոնք լուսանցքներուն ապրող մարդեր են, մարդեր՝ շատ նման մեր բոլորին, բայց եւ այնքան հեռու իրենց անկաշկանդ մտածում-խօսքերով: Այստեղէն է նաեւ, որ Վ. Օշական կը քանդէ բոլոր «սրբութիւնները», կը տարտղնէ աւանդութիւնները եւ սրբաբանութեան անուկները կը դնէ սովորական (երբեմն՝ սովորականէն իսկ նուազ) կացութիւններու մէջ. Վասակ կրնայ իր արդարացումը գտնել, կամ նարեկացին կրնայ մարդանալ այնքան, որ իր տագնապները կարդանք, ինք, որ մե՛ր տագնապները մեղմելու կոչուած է.

«Նարեկի մեր Հայր Գրիգորը ատոր շատ յստակ պատկերն է: Ճգնաւոր է, այսինքն փախեր է մարդոցմէ եւ եկեղեցիէն, մէկ կտոր կ'աղօթէ ու կը գրէ, սպաններ է կեանքը, չորցուցեր է մարմինը, որպէսզի հաւատքը ապրի ու գորա-

նայ իր մէջ: Ճիշդ է ասիկա, ա՞ն է նշմարտութիւնը ...»: («Համրոյրը»):

Մաշտոց սպասուածէն տարրեր պատճառներ կու տայ իր գիւտին: Ա՛յս է Վ. Օշական, իր բառերով «միտք մը, որ օրուան որեւէ ժամուն ռիթմորի աստիճանով ութ ուստգնութեամբ կը բանի»: կը բանի երկու առանցքներու շուրջ՝ քերթողութիւն եւ սփիւռքեան վիճակ:

Ի՛նչ ալ որ ըլլայ առանցքը իր մտածումներուն, Վ. Օշականի միջոցը ցնցումն է միշտ. ցնցել ընթերցողը, հանելու համար գինք ծանր թմբիրէ մը, որ օրէ օր աւելի վտանգաւոր դառնալ կը սպառնայ: Այդ ցնցումին համար գործածուած միջոցներէն մէկն ալ արգիլեալ բառերու օգտագործումն է: Այս երեւոյթը Վ. Օշականի քերթողութեան մէջ, միշտ ալ լուռած է, հակառակ ստեղծած տակնուվրայութեան, բարկութեան եւ ընդվզումին: Իրեն համար շատ պարզ է հարցը սակայն.

«Ոչ ոք կրնայ լրջօրէն պնդել, թէ բառի մը գրուելը ու կարգացուելը աւելի վնասակար է, քան անոր մեր մտքէն անցնելը» («Գրականութիւն եւ բարոյականութիւն», «Բագին», 1963):

Յանրդարար լոյս տեսած գիրքերը՝ «Քաղաք» (1963, Պէյրուսթ), «Քառուղի» (1971, Պէյրուսթ), «Ահագանգ» (1980, Ֆիլատելֆիա), «Խուճապ» (1983, Նիւ Եորք), «Արուարձաններ» (1991, Լոս Անճելես), «Հատընտիր» (1994, Պէյրուսթ), «Ինքնութիւն» (1996, Անթիլիաս), «Համրոյր» (1996, Սիտնի), բոլորն ալ քերթողագիրքեր, քաղաքը ունին որպէս վայր (սկզբնական ծրագրի մը հիմամբ) եւ կը նշուեն արդի ժամանակներու մարդուն ահագնացող տագնապները:

Թերեւս արեւելքցիներուն համար դժուար ըլլայ պատկերացնել մարդն ու արդի ժամանակներու իր տագնապները, որոնք նուագագոյն չափերու են այստեղ, ուր կեանքը տակաւին կ'ընթանայ իր յայնագոյն ռիթմով, եւ ուր առաջնագոյնն ու վերջնականը Աստուածն է, տէրը յամենայնի, մեծագոյնէն մինչեւ յետին մանրամասնութիւնը կեանքին, այսինքն՝ ճակատագրին:

Սակայն Վ. Օշականի քերթողութեան մէջ, մարդերը կը փորձեն հարցադրել իրենց ճակատագիրը, փոխանակ գայն ընդունելու, հարցումներ կը ձեւարանեն եւ անոնց պատասխանները կը փնտռեն կեանքի մը տարրեր ուղիներուն վրայ: Շատ յաճախ այս տագնապահար փնտռողները այնպիսի անհեթեթ կացութիւններ կամ վիճակներ կը ստեղծէ, որ ընթերցողը ինքզինք եւս «անհասկնալի» վիճակներու մէջ կրնայ գտնել:

«...տիեզերքի սարսափազդու դաւին գոհն եմ ու հեղինակ՝ նոյն ատեն...»

...միջոցին մէջ տարաշխարհիկ ականջ մը կայ բոլորս հոն կծկուած

մտիկ կ'ընենք ձայնի շաղախի անտես ձեռքեր անհեթեթով կը ծեփեն

որ չդպնամ սիրուհիս մերկ տարփակեզ մարմին փուռեր ամէն կողմ

իտեթեցնող գրաւչութիւն բայց անմատոյց անհույս արգիլուած

անդրդուելի դաժան Սֆինքս ճակատագրի ճամբան գոցեր՝ կը նայի,

ոչ հարցում կայ ոչ պատասխան - միայն մէկ յոյս լուրիւնը հեղքելու

ու երթալու անդին անդին լոյսէն անդին հանդիպումին կեանքին հետ»: («Համրոյրը»)

Մահուան գաղափարը սկիզբէն իսկ տեղ գտած է Վ. Օշականի եւ մտածողութեան, եւ քերթողութեան մէջ. «Սեռն ու մահը այն միակ հարցերն են, որոնք կարող են գրադեցնել լուրջ միտք մը», կ'ըսէ Իրլանտայի ամենանշանաւոր բանաստեղծը՝ Ուիլիըմ Պաթլըր Եէթց. նոյն ուստգնութեամբ Վ. Օշական կը գգայ մահուան առեղծուածն ու կարեւորութիւնը եւ նոյնքան լրջօրէն կը ներկայացնէ գայն:

Իր առաջին քերթուածներէն մին, լոյս տեսած «Ակօս»-ի մէջ (1957, թիւ 8), կ'ըսէ.

«Մահուան վախ մը կը սաւառնի սրտերու բարձրութեան ու սերը կ'ուռի կուրծքերու տակ»:

Վախով կը սկսի մահուան գաղափարը, մինչեւ հասնի «Մահէն անդին»ին, «Արուարձաններ» քերթողագիրքին մէջ.

«Ֆիլմը հագիւ աւարտած գիտակցութիւնը չորս պատերէն վար կ'անուսնի»

կը լուամ կը չորցնեմ կ'արդուկեմ մեծ ինամքով կը ծալիմ

ետ իր տեղը կը դնեմ»:

Իր վերջին քերթողագիրքերէն մին՝ «Ինքնութիւն»-ը, ամբողջ շարք մը ունի «Հոգեհանգիստ»ներու, նուիրուած իր ծնողքին, եղբոր եւ ... իրեն՝ «Վահէին». այստեղ գիտակցութիւնը ինքն է, որ կը փնտռէ ճշմարտութիւնը, խուսափելով իրականութեան եւ երեւակայութեան գոհ երթալէն: Կը յաջողի՞. կարեւոր չէ, որովհետեւ հիմնականը ճշմարտութեան փնտռումն է, անոր անհրաժեշտութեան գիտակցութիւնը: Անշուշտ, այստեղ հոգեհանգիստները աւելիներ են միայն մտածելու կեանքի մասին՝ մահուան հեռաւորութենէն, մա՛նաւանդ անոնց համար, որոնք իրապէս մեռած էին, իսկ իր պարագային՝ վարժութիւն կարծես, մահուան խուճապին մէջ իսկ, մտածելու կարողութիւնը պահելու:

«Նոյնիսկ անմահ եմ շատ հաւանաբար ջուրին օդին պէս մեջտեղ թափուած»

կամ «Ի՛նչ կը մնայ փրկելիք

երբ բառերու իտրիքաւոր որջերէն պարիկները գազաններն ալ չեն խուժեր գիրկընդիսուն ... բոլոր լոյսերը կը մարին բայց խաւար չէ՛ ալ ես կամ մանր պարոյկ մեծ խուճապի փոթորիկին դիմաց կայնած՝ յայտնելու

անբառ սիրով՝ թէ անա ես եմ մարդը որ չծնած՝ կը մեռնի՞ ...»:

Այս բոլորով՝ Վ. Օշական, իր առաջին քերթողագիրքէն մինչեւ վերջինը, մեծ պատուհան մը բացաւ սփիւռքահայ բանաստեղծութեան վրայ. հակառակ անոր, որ այդ պատուհանէն յաճախ այնքան ալ անուշահոտ լոյսեր չէին, որ կը թափանցէին մեր բանաստեղծութենէն ներս, բայց կը ստիպէին, որ մարդիկ վերանային եղածը, ժամանակակից մօտեցում ցուցարբերն եւ փորձեն արթուն ըլլալ ժամանակին առջեւ:

Իր մահը մեծ պարագ մը կը ձգէ սփիւռքահայ գրականութեան ապրող հոլովոյթին մէջ, քանի մը պատճառներով.

● Իրմով է, որ սփիւռքահայ գրականութիւնը կը սկսի իր ժամանակը ապրիլ,

● Իրմով է, որ ցնցումը կը մտնէ մեր գրականութեան մէջ, ստիպելով, որ ընթերցողը գգալու կողքին նաեւ մտածէ,

● Ինքն էր, որ իր հրապարակագրական յօդուածներով ոչ միայն փորձեց դասակարգումի ենթարկել նորագոյնը սփիւռքահայ գրականութեան, այլեւ իր վիճայարոյց յօդուածներով բանավէճի մղեց գրագէտները. իսկ բանավէճերը, գրականութեան պարագային մա՛նաւանդ, միայն դրական արդիւնքներ կրնան ունենալ, հակառակ վէճերուն յաճախ լեղի պատկերներուն:

Շատերու համար Վ. Օշականի քերթողութիւնը ինքզինք, որպէս քերթողութիւն, հարցադրումի ենթարկող երեւոյթ մը թուացած է. անշուշտ կարգ մը ազդակներ, ինչպէս արձակ եւ չափածոյ միասնարար նեկայացնելը, տողերուն երկար եւ արձակունակ ձեւը կամ դասական յանգերու չգոյութիւնը, հաստատում որպէս օգտագործուած են անոնց կողմէ: Բայց եթէ արդիականութիւնը ամէն աւանդականի դէմ երթալն ու այդ աւանդականին փոխարէն նոր տարրերակներ յայտնարբերլն է, ուրեմն կրնանք գինք, Վ. Օշականը արդիական բանաստեղծ նկատել: Կայ նաեւ արդի ժամանակն ու մարդը ներկայացնելու իրողութիւնը:

Կարելի է վիճիլ այս բոլորին մասին եւ առանց ճշգրիտ արդիւնքի դուրս գալ վէճէն, որովհետեւ Վ. Օշականի քերթողութիւնը վիճող բոլոր կողմերը գոհացնող եզրեր ունի: Երկար պիտի շարունակուի վէճը այս քերթողութեան շուրջ, ուր մէկ կէտի վրայ յստակ համաձայնութեան կարելի է հասնիլ՝ Վ. Օշական կրցաւ շարժել անելի մը ուղին բռնած սփիւռքահայ բանաստեղծութիւնը, ցնցումով, վէճերով թէ արգիլեալ գօտիներ մտնելով: Բայց բացաւ իր պատուհանը եւ անկէ ետք ա՛լ յստակ ու հաստատ չէ մեր բանաստեղծութեան ուղին: Ճշմարիտ արուեստը անակնկալներով չէ՞ որ կ'ընթանայ արդէն...

Վ Ա Հ Է Ն

«Ամենայն տեղ մահը մի չէ
կախում ունի ինչի համար կը մեռնիս,
մարդ բիւր անգամ, գաղտագողի պիտ' մեռնի
որ հասկնայ եթէ կրնայ՝ ինչ ըսել է ծնիւր,
բայց երանի մէջ մը մարդուն՝
որ պայքարի ընկերներուն հետ կը զոհուի,
մէջ մ'ալ անոր
որ ազգէն անդին, մարդէն անդին,
միս մինակը՝ կ'անհետի»:

Վ. ՕՇԱԿԱՆ

(«Ահագաւիգ»)

Մարդ-ազգ մակերեսային պարզ յարակցութիւն մը թուա-
ցող բարդ վիճակին մէջ տազնապոյ մըն էր Վահէն: Տազնապ
մը, որ իր բոլոր երեսներով դրսեւորուեցաւ իր կեանքի բոլոր
հանգրուաններուն՝ ծնունդէն մինչեւ...

Այս բարդ յարակցութեան մէջ յարատեւարար տուայտոյ
մը եղաւ ան: Չկրցաւ, չուզեց հասնիլ յարակցութեան ծայրա-
մասերուն: Մնաց տարուրբերողը, անհանդարտ մ'իտքը, աւելի
ինքզինքին հետ կուռուող, քան ուրիշներու, հակադրուող ինքն
իր անձին մէջ, ճակատող ընկերութեան եւ ազգին հետ: Իր
մշակած գրականութեամբ՝ ան այս յարակցութեան «ազգ»ին
սահմանները ուզեց անտեսել. յաջողեցաւ այդ ընել իր բա-
նաստեղծութիւններով, յաճախ, բայց քաջողական թելը գինք
կապեց միւս եզրին: Պայքարի մը ծնունդն էր, պայքարի մը
արդիւնքը: Վահէն մակընթացութիւն չէր՝ ժամանակի շրջա-
դարձութեամբ ակնկալուող: Խորքի մը, յորձանքի մը ար-
դիւնքն էր: Այեկոծ յաճախ եւ առ այդ սանձարձակ ճամբորդը
մարդկային ծփացող մարտերուն: Չուզեց սահմանափակ-
ւիլ, որ իր պարագային պիտի թարգմանուէր կաշկանդուիլ:
Ուզեց պրկուած իր աղեղին նետը արձակել դէպի «նոր»ով
սահմանուած աշխարհները:


Մարդ-ազգ յարակցութենէն կը բխէր իր էութեան ամբող-
ջութիւնը՝

Մարդ = բանաստեղծ, մտաւորական:

Ազգ = պարտաւորութիւն, տոհմականութիւն:

Եւ դեռ այս երկուքին ենթաշերտերը — բանաստեղծ, բայց
գաւազը միւս Օշականին, հօրը: Վահէի՝ իր հօրը հետ կապին
մասին դեռ պիտի խօսուի: Դիւրին չէր Յակոբ Օշականի
գաւազը ըլլալ, ան ալ բանաստեղծ գաւազը: Հօրը գրական
վաստակը, ուրուական դարձած՝ Վահէի կեանքին ընկերա-
կիցը եղաւ: Դպրոցական գրասեղաններէն սկսեալ, երբ հայ-
րը իր գրած բանաստեղծութիւնը կը պատուէ եւ իր անձնա-
կան տառապանքը գաւազին ուսերէն հեռացնելու անյաջող
փորձեր կը կատարէ: Յակոբ Օշականի «Դուն գրող պիտի
չըլլաս»ը Վահէին մէջի բանաստեղծը չէր կրնար լռեցնել:
Բայց կար հայր-գաւազ այս յարաբերութեան ճնշող ծանրու-
թիւնը: Պիտի կրնա՞ր Վահէն հօր անունէն անկախանալ,
պիտի կրնա՞ր Օշական Յակոբին հետ ըլլալ Օշական մը՝ որ կը
տարբերի, որ գաւազն է, բայց քովնտի գրողը: Հետաքրքրա-
կան է այդ փոխյարաբերութիւնը, աւելի ճիշդ պիտի ըլլար
ըսել՝ Վահէի՝ կեցուածքը իր հօր՝ հսկային նկատմամբ:

Գիտէր հօրը մեծութիւնը, կը յարգէր հօրը գրականու-
թիւնը, կը պաշտպանէր գայն: Վերջին տասը տարիներուն
հօրը գրականութիւնը կեանքի կոչելուն մէջ մեծ դեր խա-
ղաց: Դեռ անցեալ տարի իր տանը մէջ հանդիպման մը ատեն
ինձի տուաւ իր արտագրած (մեքենագրուած) հօրը թատերա-
խաղերէն մին: «Ա՛ն, նայէ, բաղդատէ բնագրին հետ», ըսե-
լով: Իր գրասենեակին մէջ, գրասեղանին եւ գիրքերուն հետ
տիրապետող ուրիշ բան մըն ալ կար՝ հօրը նկարը, որ գետեղ-
ւած էր իր նստած աթոռին ետեւի պատին վրայ, բաւական
բարձրութեամբ: Ա՛յդ նկարին ներքեւ կ'արտադրէր Վահէն:
Այն տպաւորութիւնը կը թողուր, որ դեռ կը սպասէր հօրը
խօսքին՝ իր գրականութեան մասին: Ինչէր պիտի չտար՝
այդ դատումը լսելու համար: Բայց Յակոբ Օշական իր խօսքը
ըսած էր Վահէի մասին: Նամակի մը մէջ, ուղղուած իր աշա-
կերտներէն Ասքանազ Վարդանեանին, Պասրա, Իրաք: Յա-
կոբ Օշական, իր աշակերտուհիին «Մնացորդաց»ը դրկած
ատեն կը գրէր, «Ա՛ն, կարգա՛, դուն պիտի հասկնաս այս



Վահէ Օշական

գիրքը: Տղաս՝ Վահէն կարգաց ու բանաստեղծ դարձաւ»: Որքան ալ գեղեցիկ հնչեն այս բառերը, Վահէն բանաստեղծ
էր, եթէ նոյնիսկ «Մնացորդաց»ը կարդացած չըլլար: Երբ
Վահէին կը յիշեցնէի այս տողերը, ան ժպտուն կ'ըսէր.
«Ատա՛նկ ըսած է»: Հօրը նկատմամբ Վահէի ունեցած բարդ
վիճակի մասին ալ օր մը պիտի գրուի. ինք, անտարակոյս,
լաւագոյնը պիտի ըլլար, որ խօսէր յատկապէս իր վրայ կրած
ազդեցութեան մասին (իր վրայ ըսելով՝ կը հասկնամ իր հոգե-
վիճակին, մտածելակերպին եւ ի վերջոյ գրականութեան
վրայ):

Բայց Վահէն տազնապաներու թէ՛ խառնուրդ մըն էր եւ թէ՛
անոնցմէ յիշած արդիւնքը: Բարդ, շատ բարդ հոգեվիճակնե-
րու խառնուրդ մը, երբեք միաձոյլ: Միշտ յարափոփոխ, միշտ
պրպտող, միշտ ճախրող: Այս տազնապաններուն խորքը, թե-
րեւս ալ տազնապանը պարփակողը (յաճախ պատուտուած)
ազգ հասկացողութիւնն էր:

Վահէն ազգային պատկանելիութիւնը՝ հայութիւնը սի-
րող, յարգող ու պաշտող մըն էր: Տարօրինակութիւն մըն ալ
հոս կը պարզուի: Երբ տեսնէր, որ ազգը հանդարտ է, խնդիր
մը կը նետէր «կրկէս»ին մէջ, որ կուլ յարուցանէր, մտքերը
լճացումէ հեռացնէր: Իր արձարձած նիւթերուն կարելի էր
համաձայն չըլլալ, բայց կարելի չէր իր մտահոգութիւնը
չհասկնալ: Իսկ եթէ մէկը յարձակում մը ընէր մեր տոհմակա-
նութեան, յատկապէս մեր գոյութեան վրայ, այն ատեն ան
պահապանը կ'ըլլար իր իսկ հարուածած հարցերուն:

Վահէին յատկութիւնները շատ են եւ ժամանակի ընթաց-
քին պիտի գրուին անոնց մասին:

Ազգային կեանքին մէջ իր տեսնելու կարողութիւնը պիտի
փնտուուի, մանաւանդ իր խիզախ կեցուածքը:

Գրականութեան մէջ իր բերած հիմնական նորարարու-
թեան մասին ալ պիտի գրուի եւ երկար, ո՛չ միայն ոճի, այլեւ՝
բովանդակութեան ու խորքի մասին:

Մեծանուն գրողի գաւազ, Վահէն, յստակօրէն, իր անունը
ամենայն հպարտութեամբ դրոշմեց հայ գրականութեան,
յատկապէս բանաստեղծութեան մէջ: Ան ներկայ է առանց
Օշականի օգնութեան եւ օժանդակութեան: Ան կը մնայ 20րդ
դարու հայ մեծ բանաստեղծը՝ Վահէ Օշական:

ՀՐԱՆԳ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Օ Ր Է Ն Ք

ՏԵՍԱՐԱՆ 6.

Ոսկանեանեանց հիւրասենեակը: Չուսպ է կահաւորումը: Երեկոյ է: Դաւիթ նստած է բազկաթոռին, բերթ մը բացած կը կարդայ: Ճերմակ գիշերազգեստ մը հագած է: Լուռ է:

Ներս կը մտնէ Հրայր: Փողոցի գգեստաւորում: Առանց եղբօր նայելու, կը նստի ակնոր դիմացը դրուած բազկաթոռին: Դաւիթ վար կ'առնէ ձեռքի բերթը:

ԴԱԻԻԹ. - Է, ի՞նչ կ'ընեն կոր մեր հին ընկերները, կրէկէն լուր ունի՞ս, ի՞նչ կ'ընեն կոր միւսները, կէրի՞ն:

ՀՐԱՅՐ. - Չէ, չեմ գիտեր: (Ակնոցը կը սկսի մաքրել):

ԴԱԻԻԹ. - Սիմոնը:

ՀՐԱՅՐ. - Ո՞ր Սիմոնը:

ԴԱԻԻԹ. - Քէյէչեանը, մեր հայերէնի ուսուցչին տղան, ան որ միշտ ծեծ կ'ուտէր:

ՀՐԱՅՐ (լուռ է, կը փորձէ յիշել).- Հա, կը յիշեմ... բայց չէ, չեմ գիտեր ինչ ջուրի վրայ է... գիտե՞ս, քու երթալէդ ի վեր ա՛յ չեմ տեսնուիր անոնց հետ, իմ կապս անոնց հետ դուն էիր, Դաւիթ, ես քեզի համար կ'ընէի ամէն բան: (Երազկոտ է նայուածքը): Այդ տարիքիս դուն իմ հերոսս էիր, գիտե՞ս: (Լռութիւն): Անկեղծ ըլլալու համար, հիմա ալ ես, որոշ իմաստով:

ԴԱԻԻԹ. - Դուն շատ փոխուեր ես, Հրո, նոր մարդ մըն ես գրեթէ:

ՀՐԱՅՐ (յանկարծ բռնուի թոնով).- Դուն ալ մի սկսիր այդ պուշիթիւն, թէ փոխուեր եմ, մարդիկ չեն փոխուիր, միայն անձն է, որ կ'արթննայ, կ'ածի, կը խորանայ: (Լուռ է):

ԴԱԻԻԹ. - Լաւ, լաւ, ինչ է նէ:

ՀՐԱՅՐ (լուռ է).- Համայնարանն էր, ամէն ինչ նորոգեց մէջս, հազար տեսակ մարդ ճանչցայ, աս մեր հայերուն խեղ-ճուղիներ տեսայ, քարացած սովորութիւնները, կուսակցական յիմար կռիւները, ամէն ինչ յետամնաց, հինցած: (Լուռ է): Ես հայ եմ, հայ ալ կը մնամ, բայց ես աս նոր, շարժուն, կեանքով հարուստ եւ անսահման մեր աշխարհին մէջ կ'ուզեմ գործել եւ ապրիլ: Հայութիւնը արեանս մէջ է, Դաւիթ, այնքան՝ որքան դուն: Մի վախնար որ կը կորսուիմ: (Լուռ է): Բայց կուսակցութիւնը շատ նեղ, միօրինակ եւ անհետաքրքրական գտայ, քունի մտած...: Սփիւռքը շնչող, կենդանի իրականութիւն մըն է: Չգացի, որ կուսակցութիւնը յիսուն տարի ետ է աշխարհէն:

ԴԱԻԻԹ. - Ա՞յն ատեն էր, որ քաշուեցար շարքերէն:

ՀՐԱՅՐ. - Այո:

(Լռութիւն):

ԴԱԻԻԹ. - Սա ալ ըսեմ, որ կուսակցութիւնը լաւ գործ տարաւ Ղարաբաղի մէջ, մա՛նաւանդ առաջին տարիներուն, մեր տղաքը չըլլային...

ՀՐԱՅՐ. - Գիտեմ, գիտեմ... կռիւի համար շինուած է, պէնքի պէս բան մըն է, շատ նստի, չգործածուի՝ ժանգ կը կապէ, չ'աշխատիր:

ԴԱԻԻԹ. - Պէտք է նորոգես գործիքդ, մաքուր պահես, կուսակցական չեղայ, բայց մեծ յարգանք ունիմ անոր հանդէպ:

ՀՐԱՅՐ. - Մաքուր պահելը իմ գործս չէ, Դաւիթ, ես իմ կեանքս պիտի ապրիմ, եւ շատ կը խնդրեմ, ինծի խրատ մի տար, կ'ըլլա՞յ: (Դրան զանգակը կը հնչէ): Ասիկա Անահիտը ըլլալու է: Ութուկէսին պիտի գամ ըսաւ՝ ճիշդ ատենին եկաւ: (Ոտքի կը նետուի, սենեակէն դուրս կ'ելլէ):

* Դաւիթ կ'անշարժանայ, նայուածքը կորսուած հեռունե-րը: Ներս կու գան Հրայր եւ Անահիտ, որ մեծ դրամի հետ խաղցող դաժան կիներու գործնական վայելչութիւնը ունի:

ԱՆԱՀԻՏ. - Հէ՛յ, Դաւօ՛:

Ուժեղ քայներով կը կտրէ բեմը, կու գայ Դաւիթի քովի բազմոցին կը նստի, ձեռքի տրցակը վար կը դնէ:

ԴԱԻԻԹ. - Հէ՛յ, քոյրիկ, չճանչցայ քեզ շուկայի աս կերպարանքով: Ասքան ո՞ւր կ'աշխատիք:

ԱՆԱՀԻՏ. - Երբեմն... այսօր ծանր էր: Ի՞նչ նորութիւն:

ՀՐԱՅՐ. - Բան մը չկայ:

ԴԱԻԻԹ. - Ատ ի՞նչ տրցակ է, Անօ:

ԱՆԱՀԻՏ. - Գիրք է, հետո տանիս Ղարաբաղ, վստահ եմ չկան հոն: Նուէր է, քեզի եւ Յասմիկին:

ԴԱԻԻԹ. - Ի՞նչ գիրքեր են:

ԱՆԱՀԻՏ. - Լաւ գիրքեր են, ամէն բանի մասին, - գիտու-թիւն, պատմութիւն, արուեստ: Ֆրանսերէն, անգլերէն:

ԴԱԻԻԹ. - Հայերէն կա՞յ:

ԱՆԱՀԻՏ. - Հա, հարկաւ, քանի մը դասականներ, արեւմ-տահայ անշուշտ:

ԴԱԻԻԹ. - Մե՞ր ուղղագրութեամբ:

ԱՆԱՀԻՏ. - Հարկաւ:

ԴԱԻԻԹ. - Միլ մէրսի, քոյրիկ:

(Լռութիւն):

ԱՆԱՀԻՏ. - (կը դառնայ Հրայրին).- Բժիշկը եկա՞ւ այսօր:

ՀՐԱՅՐ. - Այո:

ԱՆԱՀԻՏ. - Է, ի՞նչ նորութիւն, ի՞նչ լուր:

ՀՐԱՅՐ (ուսերը կը շարժէ).- Ի՞նչ պիտի լուր մարդը, իմ ըսածս կրկնեց: (Լռութիւն):

ԱՆԱՀԻՏ. - Յոյս չկա՞յ:

ՀՐԱՅՐ (զուլիւր կը շարժէ աջ ձախ).- Ոչ:

ԱՆԱՀԻՏ. - Ծերանո՞ց:

ՀՐԱՅՐ. - Այո:

ԴԱԻԻԹ (շեշտակի կը նայի ակնոց, ձայնը՝ սուր ու իլիստ).- Ոչ, չ'ըլլար, չ'ըլլար, չ'ըլլար:

ՀՐԱՅՐ. - Ասոր վրայէն հազար անգամ անցանք: Լմնցած հարց է:

ԴԱԻԻԹ. - Ոչ, չէ լմնցած:

ԱՆԱՀԻՏ. - Դաւիթ...

ԴԱԻԻԹ (կը պոռթկայ).- Պապա՛մ, մարդը մեզի երդիկ տուաւ, տունի մէջ մեծցուց, մենք ալ իրեն տունի մէջ պիտի պահենք մինչեւ մահը, ծօ՛, հայրերնիս է, հայրերնիս:

ՀՐԱՅՐ (բարկացած ձայնով).- Ծօ հազար անգամ լսինք քեզի, աս ի՞նչ քարէ գլուխ է, կարելի չէ այս մոտերն աշխարհին մէջ տունը պահել... աս քու հին-դաժն գաղափարներդ հոս չեն քայեր, հոս Ղարաբաղի գիւղերը չենք, հոս Մոնրէալ ենք...

ԱՆԱՀԻՏ (նոյնքան տաք շեշտով).- Դաւիթ, հասկցիր, մենք ալ կ'ուզենք տունի մէջ պահել, բայց չ'ըլլար: (Դառնալով Հրայրին)՝ Հրայրը գալ ամիս կը մեկնի Ափրիկէ, ես երեխայիս հետ գլուխ չեմ կրնար կոր ելլել, ո՞ւր դնեմ, ո՞ւր տանիմ, որ գործս քայեցնեմ, կեանքս ապրիմ... ծերանոցը է՛ն լաւ լուծումն է, Դաւիթ, լաւ մտածէ:

(Լռութիւն):

ԴԱԻԻԹ (ձայնը իջած է).- Սարսափելի մարդիկ էք ծօ դուք... խեղճ մարդը ձեր գլխէն տէ՛ք ընելէ գատ ուրիշ տէրտ չունիք դուք...: (Դառնալով քրոջը)՝ Դուն, ատ ֆրանսացի մարդը աւեր նստեր...

ԱՆԱՀԻՏ (կը պոռթկայ).- Դաւիթ. լու՛է՛, քու գիտնալիքը չէ ատիկա, ես ինչ ուզեմ նէ՛ կ'ընեմ իմ կեանքովս, մի խառնուիր իմ գործերուս, ի՞նչ իրաւունքով...

ԴԱԻԻԹ (նոյնքան բռնուի).- Պոչ խօսք, մէկ ընտանիք ենք, չէ՞, մէկ ընտանիք, մէկ է օրէնքը, կը յիշե՞ս մը հինգ տարի առաջ, վարը սրճարանը, դուն էիր օրէնքէն կը ճառէիր մե-զի... ի՞նչ եղաւ հիմա, հէ՞, խօսէ՛:

ԱՆԱՀԻՏ (քիչ մը մեղմացած).- Այո, բայց...

ԴԱԻԻԹ (նոյն բափով).- Բայց-մայց չկայ, երբ այդ ֆրանսացի հերկէլէն մտաւ մեր մէջ, ամէն ինչ խանգարեց:

ԱՆԱՀԻՏ (ոտքի կը նետուի, մատը կ'ուղղէ Դաւիթին ու կը պոռայ).- Դուն ո՞վ...:

ԴԱԻԻԹ (նոյն վայրկեանին ոտքի կը կանգնի ամբողջ հրս-կայ հասակով, ձախ թեւը մարմնին փակած).- Նայէ՛, քոյրիկ, ես պապան կ'առնեմ, կը տանիմ կոր ինծի հետ Ղարաբաղ, մեծ

մայրիկը հոգ կը տանի: Լմնցաւ-գնաց: Ո՞ւր է: (Շուրջը կը նայի բան մը փնտռողի պէս):

ՀՐԱՅՐ. - Մեծ մայրիկը ով է:

ԴԱԻԻԹ. - Յասմիկին մաման:

ԱՆԱՀԻՏ. - Չէ, չէ, անկարելի է: (Կը քալէ Դաւիթին վրայ):

Չեմ թողուր:

ԴԱԻԻԹ. - Ինչո՞ւ:

ԱՆԱՀԻՏ (թեւերը լայն բացած).- Ոչ, չեմ ձգեր, իմ այ հայրս է, ես մեծն եմ ընտանիքին, չ'ըլլար:

ԴԱԻԻԹ (յանկարծ ուժգին կը բռնէ Անահիտին դաստակը ու նորէն կը պոռթկայ).- Ծօ դուք ի՞նչ խայտառակ մարդիկ էք, մէկը կծիկը կը դնէ կը փախչի, միւսին՝ ճիւղերուն պէս... Խեղճ մարդը այնտեղ պիտի նետեն օտարներուն ձեռքը, ծօ դուք հէ՞չ մը սիրտ ըսուած բանը չունիք: (Կը լռէ, բառերը հատած կամ անբաւարար: Կատաղի նայուածք մը կ'ուղկէ անոնց վրայ ու կ'ըսէ յստակ ու դանդաղ, աչքերը բոռըր ուղղած): Աստուած վկայ, եթէ լսեմ, որ պապան ծերանոց մը նետեր էք՝ ձեր վրայէն գիծը կը քաշեմ, կու գամ ձեր մուկը կը մարեմ, կ'առնեմ պապան Ղարարայ կ'երթամ:

Դաւիթ կը ծռի, կը վերցնէ տրցակը գետնէն, եւ ուժեղ քայլերով կը մեկնի սենեակէն: Լուռթիւն:

ԱՆԱՀԻՏ (կը նստի կամաց մը, սիկարէթ մը կը վառէ, նայուածքը տարտամ).- Կ'ընէ հա:

ՀՐԱՅՐ. - Հարկաւ:

ԱՆԱՀԻՏ. - Կը մեռնիմ՝ չեմ ձգեր, որ տանի պապաս: (Կը եզմէ նոր վառած սիկարէթը): Ամբողջ մանկութիւնս, պատանութիւնս իրմով յեցուած է... Ինչ գեղեցիկ մարդ էր... ամբողջ հայութիւնն էր, Հայաստանն էր ինձի համար, անանկ կը նախանձէի մամային... աս մարդու չեմ ըսած... րայց երբ մաման մեռաւ (գլուխը կախի՝ կը լռէ վայրկեան մը), տեսակ մը ուրախութիւն կար մէջս, յանցաւոր ուրախութիւն... անչուշտ պատիկ աղջիկ էի, րայց նորէն...

(Լուռթիւն: Իրար կը նային):

ՀՐԱՅՐ. - Ի՞նչ պիտի ընես հիմա:

ԱՆԱՀԻՏ (դանդաղ իօսեխով).- Օրէնքը, օրէնքը...

ՀՐԱՅՐ (առաջ կը ծռի).- Ի՞նչ կ'ըսես կոր:

ԱՆԱՀԻՏ (լուռ).- Դաւիթը իրաւունք ունի - տէր պիտի կանգնիս ժառանգութեանդ:

ՀՐԱՅՐ (քիչ մը շուար).- Ա՞յդ է օրէնքը:

ԱՆԱՀԻՏ (ձայնը մեղմ, տխուր թուն մը ունի).- Օրէնքներէն մէկը, թերեւս է՛ն կարեւորը:

ՀՐԱՅՐ. - Անահիտ, չկարծես թէ ես օրէնքի գաղափարին հետ որեւէ խնդիր ունիմ, ո՛չ, ո՛չ մէկ: (յուռ է): Ինձի համար կարեւորը՝ օրէնքը դնողն է, ո՞վ դրած է օրէնքը:

ԱՆԱՀԻՏ. - Այո:

Առաջին անգամ ըլլալով քոյր-եղբայր զգացական նոյն ջերմութիւնը կ'ապրին: Անահիտի աչքերը խոնաւցած են, կը դառնայ եղբոր, անկէ ժէսթի մը սպասումով: Բայց՝ ոչինչ - Հրայր, գոց եւ ինքնամփոփ՝ իրմէ խօսքի կը սպասէ: Կը կախուի գլուխը, յետոյ կը խօսի եղբորը:

ԱՆԱՀԻՏ. - Ես այ չեմ գիտեր, րայց կը խորհիմ, թէ... հայութիւնը դրած է:


ՀՐԱՅՐ (գլուխը վեր-վար կը շարժէ, հաստատական, յետոյ, շատ մեղմ՝ ձայնով).- Այո:

Անահիտ ոտքի կ'ելլէ: Հրայր իր կարգին կը կանգնի, կը ծայէ թեւերը: Լուռ են պահ մը, յետոյ Անահիտ ձեռքերը զգուշութեամբ Հրայրին ուսերուն կը դնէ: Իրարու կը նային, խիստ ու ներուժ: Չայնը գուսպ է, գրեթէ անզգացում:

ԱՆԱՀԻՏ. - Պապան ինձի ձգէ, ես հոգ կը տանիմ անոր:

(վարագոյր)

ՎԱՇԷ ՕՇԱԿԱՆ



ՎԱՇԷ ՕՇԱԿԱՆ. «Մեծ հորդ գերեզմանին վրայ փոքր պիտի խաղաս, եթէ գրող ես»:

(«ԲԱԳԻՆ» ամսագիր, քիւ 2, 1962)

Գործ՝ ՈԱՖՅԻԻ

ԱՆԺԱՄԱՆՅԵԼԻ ԻՐԱԽՈՒՆՔՆԵՐ...

Ընդհանուր առմամբ, կրթանք քսել, թէ առաջին ու ամենէն կարեւոր բերող՝ որ պէտք է գրաւենք, առաջին բանալին՝ որուն պէտք ունինք, Տեղասպանութեան ճանաչումն է: Ատկէ կը բխին լուծումի միւս բոլոր ճամբաները: Յարդ այդ խճուղին տանող ուրիշ ճամբաներ փորձած ենք, որոշ յաջողութեամբ...

Դժուար ըլլալու չէ նաեւ տեսնել, թէ ինչու է եւ ի՞նչպէս Շայ Դատի հետապնդումը սոսկ քաղաքական նպատակէ աւելի բան մըն է: Անիկա է նաեւ միջոց արեւմտահայութեան եւ սփիւռքահայութեան, Արեւմտահայաստանի, այսինքն՝ իրենց բռնագրաւուած հայրենիքին յիշատակներովը իրենց միութիւնը եւ ինքնութիւնը պահելու ցիրուցան գաղութներու միջեւ ոգեկան կապերու ցանց մը ստեղծելու: Եւ տեր կանգնելու հողին ու կեանքի յիշատակին, ո՛չ այնքան կարօտի ժխտական զգացումով, այլ՝ իրրեւ բարոյական սկզբունք: Յիշատակն ալ իրաւունք է: Աւանդութիւնները, զգացական կապերը, հողին վրայ մնացած արուեստի կոթողներու տրտում աւերակները իրենց մշակութային արժէքով - ասոնք ալ իրաւունքներ են: Ահա 50 տարի կ'ընէ նոր սերունդներ կը ծաղկին Սփիւռքի մէջ, որոնք իրենց ժողովուրդին բարոյական ու իմացական ժառանգութենէն շատ քիչ բան կը ստանան:

Ահա այս իրաւունքին ալ հետամուտ պէտք է ըլլանք ու տանք երիտասարդներուն արդար ժառանգը՝ որուն արժանի են: Նոր թարմութիւն եւ հրապոյր տալու ենք մեր մշակոյթին, գայն արդիականացնելու ենք - այդ ալ անժամանցելի իրաւունք է: Երիտասարդները մեզ կը լքեն կ'երթան, որովհետեւ չեն գիտեր ինչ հիմնալի ժառանգ ունին մեր մօտ պահ դրուած ու մոռցուած: Այս ամբողջը շատ աւելի անժամանցելի է ու աւելի ծանր կը կշռէ մարդկային կշիռքին վրայ, քան քաղաքական Դատը եւ, սակայն, ոչ որ կը գրադի առով, որովհետեւ հաս Սփիւռքի մէջ ունի մեկուն հաշուետու չենք բացի Պատմութենէն ու մեր խիղճէն:

Ու հոս է, որ նոր ուղիներ փնտռելու ենք՝ տեր կանգնելու մեր անցեալի հարստութեան, որ մէն մի հայու իրաւունքն է: Նոր առաքելութիւն մը հայ ազգին՝ մանաւանդ հիմա, որ մեր հայրենիքը ետ պատմութեան մէջ մտած է:

ՎԱՇԷ ՕՇԱԿԱՆ

(1993)

ԿԸ ՓՆՏՌԻՒՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԴ...

(ՎԱՇԵ ՕՇԱԿԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Այս օրերուն կը փնտռէի ներկայութիւնդ, բայց մահուանդ թոթը հասաւ...

Այն պահուն, երբ Յակոբ Օշականի «Մինչեւ ո՞ւր» թատերախաղին հանդիսատես էի «Յ. Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ, բեմադրութեամբ «Գասպար Իփէկեան» թատերախումբին, վարագոյրը փոխուեցաւ, բանալով տասնամեակներով խտացեալ էջեր...

Ինչպիսի՞ գուգադիպութիւն: Վաթսուն տարիներ առաջ, Երուսաղէմի մէջ, նոյն թատերախաղին պատանի ունկնդիրներն էինք Վահէին հետ: Երբ բեմադրիչ ու դերասան Նուպար Արսէնեան, Արման Արծրունիի դերով՝ խստաշունչ համոզումով հարց կու տար. «Բայց... մինչեւ ո՞ւր, մինչեւ ո՞ւր...», պատանի մեր գգայնութեամբ անմիջապէս կը ձայնակցէինք անոր ընդվզումին եւ մեր երկուքին ծափերը կը դառնային միահամուռ:

Այժմ, նոյն թատերախաղի ներկայացումի պահուն կը լսէի այդ հեռաւոր ձայնը եւ յանկարծ՝ բեմէն յայտարարուած Վահէին մահուան թոթը, որ կ'ուրուագծէր վաթսուն տարիներու մտերմաձայն խորութիւն մը: Ժամանակն ու հեռաւորութիւնը ոչինչ կրնան փոխել մարդկային ներաշխարհին մէջ:

Մարդկային մտածողութեան ծանրութեամբը կը կանգնիս մահուան դիմաց: Վաթսուն տարիներ ապրած էինք մենք եւս հարցնելով՝ մինչեւ ո՞ւր... բայց մինչեւ ո՞ւր մեր մարդկային ու հայեցի էութենէն բարձրացող տառապանքներով... եւ մինչեւ այսօր՝ նոյն հարցումով: Պատասխանը գիտենք, բայց գործելու համար կը սպասենք: Իսկ դուն չսպասեցիր ըրիր որքան որ կրնայիր...

Թէեւ հեռու, բայց դազող շայկած քայեցի քեզի հետ եւ չբաժնուեցայ: Բացուեցան անցեալի էջերը, տարիներու մտերմաձայն խորութեամբ, յիշատակի շղթաներով կաշկանդելով բացակայութեանդ առթած տխրութիւնը:


Ծնած էր Պուլկարիա, ուր թաղուած էր Քրիստափոր Միքայէլեան: Հօրենական կեանքին հետ անցած էր գաղութէ գաղութ, հասած էր Երուսաղէմ, ուր Ս. Յակոբայ վանքին մայր դրան մուտքին ծորակ մը կայ, որմէ կախուած էին պղնձեայ երկու գաւաթներ. այդ ջուրէն խմողը ակամայ կը կարողար Սուլթան Սալահէտտինի կոնդակը՝ փորագրուած մարմարէ կոթողի մը վրայ (1179ին), ի պաշտպանութիւն հայոց վանքին եւ իրաւունքներուն: «Երիցս անիծից անիծեալ ըլլայ ով կը վնասէ հայոց վանքին»: Յաճախ կը յիշէինք գրութիւնը: «Երբ Երուսաղէմ երթաս, մի մոռնար ջուր խմել կոնդակին աղբիւրէն», կ'ըսէի իրեն: Հայրենի հողը կը սպասէր վերադարձող իր գաւակներուն...

Վարելու ծուխը մարած մեր հիւղերուն,
կերպադրելու փառքն անուշիկ ոստաններուն

Այսպէս հաւատացած էր Յակոբ Օշական եւ անոր սերունդը: Այդպէս կը հաւատայինք նաեւ մենք...

Իր հետ կարելի չէ չյիշել Երուսաղէմի Հայ Մշակութային Միութիւնը, որուն շարաթական հերթականութեամբ կազմակերպած դասախօսական պահերուն մնայուն անդամներէն էր: Անոնց շուրջ մէկտեղուած էր գաղութին իսկապէս մշակութասէր երիտասարդութիւնը: Դպրոցական դրութեան պէս կանոնաւոր, տարեկան ինը ամիսներու գործունէութեամբ, անոնք գաղութին կը հրամցնէին ակադեմիական բացառիկ պահեր, որոնք օրհնարբեր էին ժամանակակից հայ սերունդին նկարագիրին ու կենցաղին համար:

Հայ մշակոյթի մ'իծնոյրտին մէջ հանդիպեցանք իրարու եւ այդ մնաց... ուր ամէն անհատ քար մըն է կեանքի ճանապարհին:



հին: Որքան ալ մ'իջոցի տարածութիւնները հեռացուցին մեզ, սրտամօտութիւնը մնաց իրրեւ թանկագին ժառանգութիւն: Մղկտացող յիշատակ մը բախտի ալիքներուն դիմաց իր ծուխը կը բարձրացնէ կեանքի բոլոր պահերուն...

Բ. Աշխարհամարտի դաժան տարիներուն, ապրուստի սղութիւնը շրջած էր կեանքը: Հարկ էր անդուլ աշխատիլ, գոյատեւելու համար: Երիտասարդութեան սեմին գտնուող Վահէն ստիպուած էր ընտրել արհեստ մը եւ մեկնած էր Հայֆա:

Բանուորներու միջավայրը վիճակուեցաւ իրեն, երկաթի դէմ յանդիման: Այդպէս փափաքած էր հայրը. կերտել երկաթեայ ամրութիւններ մնայուն: Տունէն հեռու՝ բանուորի մենութեան մէջ իր ապրումները գիտցաւ բարեխառնել իր նկարագիրին հետ: Բանուորի ու երկաթագործի իր աշխատանքին հետ կերտուեցաւ գաղափարախօսական ջերմութեան մէջ՝ ծաղկումի կեանք մը: Հոն էր, որ դաշնակցականի իր երդումը տուաւ:

Յակոբ Օշական թելադրած էր իր գաւակին «թուղթի հետ գործ չունենալ, երկաթի՛ հետ գործ ունենալ»:

Սակայն Վահէն ինք եւս հաստատեց իր հօր նման, թէ թուղթը աւելի մնայուն է, քան երկաթը, եւ կառչած մնաց թուղթին ու գիրին, հոգիին ու գաղափարին: Զուսպ ու յորդուն հակադրեցութիւններով հետեւեցաւ կեանքի պայմաններուն, ժպիտն ու գուարթութիւնը իրեն հետ: Մնաց պարզ ու մտերիմ, առաւօտեան արեւի նման սպասուած՝ բոլորին համար: Բոլոր գինք ճանչցողներուն սրտերուն մէջ մնաց մշտապէս յիշողութեան արժանի:

Երկաթը թուղթի վերածեց եւ գրիչի, ջուրը՝ մելանի, արհեստը՝ արուեստի...: Անծանօթ հորիզոններն ու հեռաւոր սերունդները միացուց մայր լեզուին ու հայրենիքին: Հայ գրականութեան անդաստանը, հայ մամուլն ու հայութեան

ճանապարհը խառնեց իր էութեան, ապրեցաւ իր ժողովուրդին բոլոր ոլորտներուն մէջ, եւ ո՛ւր որ գնաց՝ իր հետ տարաւ հայ ամպիոնի շունչը:

Գրիչը եղաւ անոր մականը, որմէ իր մտածումներն ու ապրումները կ'արձագանգէին պատմութեան: Հայ շինարար ոգին միաձուլեց իր խանդավառութիւնն ու կարողութիւնները: Մնաց երիտասարդ եւ միշտ՝ երիտասարդութեան հետ, շնչատու՝ բոլոր բարի ու գեղեցիկ բաներու: Պէջրութ հաստատուելէ ետք դարձաւ Զաւարեան Ուսանողական Միութեան գործունէութեան առողջ երանգներէն մէկը, իմացական, ընկերային եւ ոգեկան խանդավառութիւն ստեղծելով իր սերունդին կեանքին մէջ: Դասախօսական շարքերով, մամուլի յօդուածներով («Ակօս», «Բագին», «Ազգակ», «Յաւաջ», «Կամք», «Հայրենիք», «Ասպարէզ» եւ այլ թերթերու մէջ) եւ ընկերային հանդիպումներու առիթով մնաց միշտ սիրելի ու փնտռուած ներկայութիւն: Մաքուր նկարագիրի ու կենցաղի օրինակելի ու օգտաշատ տիպար, միշտ հաւատարիմ գրականութեան ու արուեստի բարձր կոչումին:

Կայ մարդկային տոհմիկ ազնուականութիւն մը, որ ժառանգական է, հասակի եւ մորթի գոյնի նման:

Դրօշի նման ծածանող մտերմութիւն մը գայն կապած էր իր սերունդի տղոց: Ընտանեկան հեռաւոր յարկէն բերած էր այն բոլորը, որ վստահութիւն կը սերմանէր իր շուրջ: Յետ Եղեռնի սերունդ մը կը կազմէին այդ տղաքը, որոնց մէջ երէց եղբոր հովանին կ'ապրէր պարզ ու հարազատ:

Յաղթական հասաւ մինչեւ Սորպոն, միշտ վերադառնալով իր հունին, արմատը՝ խրած հայ հողին ու ոգեկանութեան: Իրրեւ աւարտաճառ ներկայացուց «Արեւմտահայ գրականութիւնն ու Երուսաղէմը», ուրախութիւն պատճառելով ժամանակակից հայ մտաւորականութեան եւ ուսանողութեան: Դարձաւ դասախօս՝ համալսարաններու մէջ: Երկաթը գրիչի վերածած, գրիչը՝ խօսքի, գիրքի ու կեանքի, շաղախուած մնաց հայ կեանքին, Արեւելքէն Արեւմուտք, մինչեւ հեռաւոր Աւստրալիա եւ մինչեւ Արցախ...: Արեւմտահայ գրականութեան ենթահողը իրեն համար մնաց «ազատ ու անկախ» եւ ինք՝ անոր կամաւոր գինուորացրեայր:

Տէր կանգնեցաւ պապենական ժառանգութեան եւ սրտաբաց գուրգուրաց ամէն մտածումի, խօսքի ու գործի: Տարածուն հայ աշխարհը վահէին սրտամօտ ապրումներուն մէջ փոքր էր գիրքի մը չափ, ուր կար անսահմանութիւնը լեցնող գեղեցկութիւն եւ սիրտ:

Բագում քաղաքներ փոխեց, ցամաքամասեր, միջավայր ու քաղաքակրթութեան հնոցներ, բայց ապրեցաւ Հայաստանը՝ գայն միշտ ունենալով իր հոգիին մէջ: Վճռականութեամբ ապրուած կեանք մը, ուր գոհողութիւնն ու աշխատանքը իրենց արդար նպաստը պարզեւած էին աշխարհատարած իր կեանքի էջերուն, իրեն ընծայելով սրտամաշ օրեր, ժպիտ ունենալով իւրաքանչիւր ծաղիկի հետ եւ ուրախութեան արցունք՝ իւրաքանչիւր նուաճումի դիմաց:

Բայց իր շանթարգել կարողութիւնները չկրցան գսպել կեանքի յորձանքները...:

Հաւատաւոր ու գաղափարական ընկերոջ մը մեկնումով կը բացուի մեր յիշատակներուն անխափան էջերուն յուսաշող առաւօտը եւ գալիք ճանապարհներուն վրայ անոնց ներկայութիւնը կը մնայ մեր մէջ:

Կանգնած է վահէն՝ իր մտերմիկ ժպիտով եւ յեղափոխական մտահոգութիւններով, միշտ երիտասարդ ու հաւատաւոր, իր հոգիին մէջ պահած մարդկայնութիւնն ու հայկականութիւնը ամէն բանէ վեր: Այդ պատճառով դարձաւ իր շրջապատին համար մշտապէս սիրելի:

Դժուար է կեանքի մը հասակովը ճանչնալ անձ մը, ուրախութիւն մը, ապա գայն փակել՝ գիրքի մը պէս:

Դժուար է կանգնիլ վահէի բացակայութեան ամպիոնին դիմաց: Մեզ ժպիտով առաջնորդողը կրկին ինքն է՝ իր անկեղծ եւ արդարամիտ մտերմութեամբ:

Դարձեալ կանգնած ենք դէմ դիմաց...

Մեզ կազդուողը դարձեալ իր էութիւնն է՝ բարի ու հարազատ...

ՅԱԿՈՒ ԿԻԼՈՅԵԱՆ

ՀՈԳԵ ՀԱՆԳԻՍՏԻ ՓՈԽԱՐԷՆ

ԿՇԻՌՔ

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆԻՆ

Ծառի ճիղերն,
անակնկալ թոփշէն ետք քաղէին՝
միջոցին մէջ նժար-նժար կ'օրօրուին
եւ ցոյց կու տան միշտ մեզի
ծանր քացք մեկնողին ...

SONATA

Հայեացքին մէջ
անբացայայտ վայրեր կային.

լեզուին վրայ
չյօրինուած երգեր կային.

ժամերուն մէջ
չժամանած պահեր կային,

իսկ երբ քամին
յանկարծ երգն իր աւարտեց,
չաստուածները մթին աստղին արշալոյսը պարզեցին ...

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

ՊԷՐՈՒՔ, ՅՈՒԻՍ 2000

Արցախի պայքարը աւելի զօրացուցած է իմ մէջ յամառութիւնը: Ես յաճախ գրած եմ, որ մեր հարցի լուծումը զենքով չըլլար - ոչ մէկ հարց զենքով կը լուծուի բայց երբ թշնամին կը յարձակի վրադ, պէտք է ինքզինքդ պաշտպանես: Իմ կարծիքով, - երկար ժամանակաշրջանին մէջ, մենք պէտք է կրթենք, զարգացնենք եւ քաղաքակրթենք մեր շրջակայ երկիրները, որովհետեւ առյաւելտ մենք ալ հոն ենք, իրենք ալ հոն են, չեն կրնար իրարու հետ կռուելով ապրիլ:

Արցախի մասին պէտք է ըսեմ, որ եթէ կորսնցնենք Արցախը, կը կորսնցնենք նաեւ Շայաստանը, Չանգեզուրը...
* * *

Շայութեան գերագոյն շահը կը պահանջէ զօրաւոր սփիւռք մը՝ իբրեւ կռուան նորաստեղծ անկախ Շանրապետութեան բայց նաեւ զօրաւոր Սփիւռք մը՝ ինքնիրեն եւ ապագային համար, տեղաւորուած համաշխարհային խարխիսներու վրայ, բազմաձևակոյթ եւ քաղաքակիրթ աշխարհի ամենէն յառաջադիր դիրքերու վրայ:
* * *

Անվարան կարելի է ըսել, անգամ մը եւս, որ դժուար է տոկալ Սփիւռքի մէջ, թէ ատիկա ամեն մարդու գործը չէ եւ սակայն ան որ կը դիմանայ՝ իրապէս ընտրեալ, բացառիկ ժողովուրդի մը մասնիկն է: Սփիւռքը պատերազմի դաշտ մըն է, ուր քսանելչորս ժամ կռիւ կայ, եւ ասիկա՝ հազար տարիէ ի վեր, առնուազն:
* * *

Կեանքը իր տարազը կը գտնէ լեզուով: Ինձի համար ամենէն յստակը, ամենէն վճիտ վայրը լեզուն է: Եւ մասամբ հայ լեզուն, հայ մշակոյթը եւ ինքնութիւնը պաշտպանելու համար է, որ պզտիկ տարիքէս կուսակցութեան մէջ մտած եմ, որովհետեւ այդ ձեւով կրնամ քաղաքական գործ տանիլ ի շահ մեր մշակոյթին, մեր աւանդութիւններուն, մեր հայկականութեան. տեսակ մը պատասխանատուութիւն կ'առնեմ վրաս, իմ միջավայրս՝ հոգեկան ու մարդկային միջավայրս պաշտպանելու եւ հաշտ ըլլալու անոր հետ:
* * *

Ամբողջ կեանքիս մեծագոյն տառապանքը ու հարցը եղած է՝ ի՞նչպէս ընել, որ ապրիմ. ինչպէս ընել, որ մօտենամ կեանքին: Կեանքը անհասանելի, անմերձեցանալի, անիծեալ չեմ ըսեր, բայց կարողութեանս դուրս բան մըն է:
* * *

Դժբախտութեան, մահուան ցաւին ու մեծ տառապանքին առջեւ մարդ միշտ ոգեկան բարձր իտեալի մը պէտք է կառչի: Իտեալ՝ որ կրօնական հաւատքը չէ միայն, այլ նաեւ՝ վստահութիւնը ազգային արժէքներուն, բարոյական մեծ սկզբունքներուն, եւ այլն, իտեալներ՝ որոնք չեն փաթրուած անձին սոսկական ճակատագրին, այլ կը յորդին իրմէ եւ զինք կը կապեն մարդկային մեծ զգացումներուն:

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

Վահէ Օշական սփիւռքցի գրողն է, ամէն բանէ առաջ: Իր արտադրութիւնը՝ արձակ թէ՛ բանաստեղծութիւն՝ այսօր-ւան մեր սփիւռքեան կացութեան պատկերն է անկասկած: Օշականի գործին գլխաւոր առանցքը մարդն է, նաեւ ու մանաւանդ սփիւռքահայը՝ իր բարդ եւ տարատեսակ հարցերով, բնագանցական տուայտումներով, առօրէական դրսեւորումներով, իր գոյութեան ու գիտակցութեան «առեղծր-ւած»ին դէմ յանդիման: Արդիապաշտ գրողն է Օշական, որու գործը անտարրեր չձգեց երբե՛ք: 20րդ դարու այս վերջին տարիներուն, ինք կը շարունակէ մնալ պատնէշի վրայ: Ապրելուն ապսիւրտը (անհեթեթը, հայերէն բառով մը), կեանքի խորունկ անձկութիւնը, գայն «նորմալ» ապրելու անկարելիութիւնը, փրկանքի մը յարածուն ցանկութիւնը, ստեղծագործութեան գերագոյն իրականութիւնը ըմբոստութիւնը ընդդէմ բոլոր ստացական՝ ազգային թէ՛ մարդկային՝ քիչնեւրուն, գիտակցութեան (կեանքի) ու մահուան միջեւ երկփեղկուածութիւնը, ահա՛ Վահէ Օշականեան problèmesներու արագ թուարկում մը:

«Ահագանգ»ին ու «Արուարձաններ»ուն մէջ նոյն խօսող «ես»ն է, որ ինքզինք սենեակէն դուրս կը նետէ, «փողոց կ'իջնեմ խուճապահար կը վազեմ, /», (Ահագանգ), որ «յուզարկաւոր հտպիտի պէս» կը վազէ, «ասդին անդին թեթեւ ազատ կը վազեմ/ ու չեմ գիտեր ինչ կը փնտռեմ/ ու չեմ գիտեր ինչ կը փնտռեմ/ բայց երբ գտնեմ՝ պիտի գիտնամ ինչ էր որ գիտ / ամէն առտու Յիլատեյֆիոյ փողոցները կը նետէր/» (նոյն), իրեն համար չկայ փախուստ, չկայ յարութեան յոյս, «միայն անել սանսիւնիք մը առանձնութեան /» (նոյն): Արդարեւ «ինչպէս ապրիլ ու ողջ մնալ նոյն ատեն/ դուրսն ինչ է խաչուած մեռնիլ/ ինչորք խաչին վրայ մագլցիլն է ու հոն ապրիլ/ առանց յոյսի պահեստի ու խմբական տոմսակի/» (նոյն): Որով եկեղեցին դարձեր է «հսկայ, ձրի քոմբըրը» («Խուճապ»): Աստուած մեծ փորձութիւնն է, «որու դիմաց անգոր եմ» (նոյն):

Հոս կ'ուզեմ նշել, որ շատ հետաքրքրական էջ մը կը թուի ըլլալ Վահէ Օշական Աստուած փոխ-յարարերութիւններու պատմութիւնը, որ կարելի է «լուբեայն» կարդալ, հեղինակին տողերուն ընդմէջէն: Սակայն այս ուրիշ նիւթ է ու կ'անցնինք: Հակախուճապ իրրեւ կ'առաջարկուի սէրը, «սէրը հոսի որպէս սոսինձ՝ օտարութեան լուրթեան մարմինները մածանէ/ սէրը սուզակ՝ միակ յոյսը Մեծ Խորհուրդի դեմակին ջրափոսը կտրելու՝ դէպի ափը անցնելու...» («Արուարձաններ»): Այստեղ եւս երկար չի մնար ինք, որովհետեւ «բայց իմ տարտս ուրիշ է, ես փնտռողն եմ/ պէտք է քայլեմ անդադար, տենչ ու կարօտ՝ ուր/ «դեռ կը գտնեմ» կը մտածեմ/ մկաններս կը պրկեմ ու գաղտնիքս մտքիս մէջը ուժգին սեղմած՝ / ես կը քայլեմ դէպի քաղաք/» (նոյն):

«Ես»ը, այո՛, հերոս մը չէ, անանուն հակահերոսն է գուցէ, բացակայ- ներկայ մը, ձայն մը՝ արդեօ՞ք բնագանցական: Ոչէութեանէն ըխած, արկածային, անկարելի- բայց որովհետեւ գիտակցութիւնը գոյութիւն ունի, որովհետեւ մտածում ըստուած բան մը կ'ա՛յ վերջապէս, հարկ է անդադար քողարկել, ծպտել այդ գէրօ- կէտը, այդ պարապը՝ որմէ կը սերիս: Ընկերութեան «առաքելութիւնն» է ատիկա: Ընկերութիւն մը՝ որ կ'ուզէ ամէն գնով բացատրել, պեղել, փաստել եւ ինքզինք հաստատել: Օշականի համար շատ կարեւոր է քաղաքը, ուր կարելի ըլլար հանդիպիլ մարդուն, «մարդու հրաշք հանդիպումի մը կարօտը» («Խուճապ»), ապա թէ՛ ոչ պէտք էր անձնասպանուիլ պարզապէս:

Բայց կայ ճշմարտութեան մը սպասումը, «Օտարականը՝ առանձնութեան քառուղիի լամբէ սիւնին կռթնած / թամադրուած մարդուն հետ՝ հաւանարար/» («Արուարձաններ»), անկախ այն հանգամանքէն որ «ապսիւրտը չի մոռցուիր, չի մոռցուիր ու չ'ապրուիր» («Ահագանգ»): Հարկ էր տակաւին խօսիլ ճշմարտութիւն-ոճիր գոյգին մասին, ուրեմն նաեւ գրողի թեքաթին մէջ բրտութեան (violence) յայտնարերման մասին: Բայց կ'անցնինք:

Այո՛, բանն է «միակ երիտասարդը յաւիտեան» («Արուարձաններ»): Հակահերոսին կը մնայ «միայն յոյս մը ապրելու, սիրելու եւ մեռնելու (առանց երբեք բառի ամուլ արգանդէն

դուրս կարենալ ելլելու)» (նոյն): «Մի՛ սարսափիլք բառերէն / անոնք մեզմէ շատ աւելի շուարած են եղածէն/» (նոյն):

Այստեղ՝ երկու խօսք Օշականի բանաստեղծական ոճին, Վահէ Օշականեան լեզուին մասին: Տարբերակիչ, իւրայատուկ, բացարձակապաշտ ու ծայրայեղ բանաստեղծական լեզու մըն է իրենը, լեզու մը որ իր մէջ կը պահէ լեզուին «խանգարումը», որ իր մէջ կը կրէ թրքերէն հայհոյանքն ու բազմաթիւ օտար (Ֆրանսերէն անգլերէն, արարերէն) ըռերը՝ որոնք այնքա՛ն բնականօրէն կու գան հեղինակի գրչին տակ: Հայերէնը կը դադրի կարծես իր աւանդական «սրբութեանէն», իր մէջ կը ստանձնէ լեզուի ենթագիտակցական շերտը: Բանաստեղծ է Օշական, կ'աշխատի լեզուին մէջ, անդադար կը խախտէ գայն եւ յարատեւօրէն բախումներ կը ստեղծէ: Խօսակցական արեւմտահայերէնը կը թափանցէ գրական արեւմտահայերէնէն ներս: Կարելի էր նաեւ խօսիլ օշականեան ութմիւսի (կշռոյթին) մասին եւ այլն...:

Հեղինակի ողջ գրականութիւնը անդուլ ու կրքոտ փորձ մըն է պեղելու սփիւռքահայու նոր կազմաւորուող տիպարը: Այս իմաստով, չափազանց հետաքրքրական են Օշականի արձակները («Փախստականը», «Թակարդին Շուրջ», եւ այլն...): Անձկոտ, լուսանցքային, ջղային, միայնակ ու դժուար մարդարարած, որ բռնուած է թակարդի մը մէջ: Անհեթեթ, խուճապ ու անդադրում ահագանգ: Սփիւռքահայ նոր տիպարը (քիչ էր մնացել ըսէի «Նոր Մանչուկը»), իրանանահայ երիտասարդ ահարեկիչ թէ՛ ամերիկահայ միջին տարիքի բժիշկ, («Ահարեկիչ» արձակը), կ'ապրի տառապագին օտարացում մը աշխարհէն: Կ'ուզէ ազատագրուիլ քիչնէ կեղծ յղացքներէն, կ'ուզէ ստեղծել ինքզինք գերոյնէ՛ն՝ իրրեւ հայ եւ իրրեւ մարդ: Վ. Օշականի արձակը հոյասքանչ հայերի մըն է, ուր կը դիտենք մենք գմեց, վերջին քսան տարիներու ընկերային քաղաքական, հոգեբարոյական մե՛ր առօրեան՝ իր տարօրինակ ելեւէջներով, ըկուսումներով եւ ինչու չէ նուաճումներով: Կ'ուզեմ այստեղ յիշել «Թակարդին Շուրջ» հատորէն «Օծումը» եւ «Թէյէֆոնը» (Լիզպոնի նահատակներուն նուիրուած):

Այսպէս «Օծումը» վիպակին մէջ Գաղտնի Բանակի ժագր կ'ըմբոստանայ եկեղեցիին դէմ, «Սովորական եկեղեցի մըն է, շատ հասարակ, կեղծիքով, ձանձրոյթով շինուած»: Կ'ըմբոստանայ իր հայերէն ստանձնուած հայութեան յղացքին դէմ, «Փախողը պիտի փախի, վախկոտը պիտի հեռանայ, միայն տոկունները պիտի մնան», անոնք որ պէտք են հայութեան: Մնացեալը գիպիլի թէնէքէն»: «Եկեղեցին այրելը սիմպոլիք է Սփիւռքի ծնունդին («Ըսէ որ Սփիւռքի «ծնունդը» տօնենք պիտի»): Հարկ է քանդել բոլոր ստացական միթոսները, «Հայութիւնը՝ սառած, քարացած ըրածոյ դարձած է կրօնին կեղծ դրախտին մէջ: Նախ քանդենք եկեղեցին ու կրօնին միսթիքը, անկէ ետք հայութիւնը կ'ազատենք իր կրաւորական անփոփոխ վիճակէն, կը վերածենք կեանքի, ապրող բանի մը, որ կարելի ըլլայ սերունդէ սերունդ փոխանցել»: Նոյնիսկ հայերէն չգիտցող ամերիկահայ Պրուսը մասնակից է նոր խորհուրդի մը փնտռուութիւն իրմով ու քահանայի թուան Մհերով է, որ «ցեղը կը շարունակէ քայլ վտանգաւոր իր ուղին ապագայի մէջ»: «Մեր Գործը... բանայն է մեր սեռային ուժերու բանտերը՝ ամէնէն դժուարը, ամէնէն վայրագ ձեւով... եկեղեցիին մէջ ան ալ, հայու էն թանկագին տեղին ու վայրկեանին մէջ... չե՛ս տեսներ հոյակապ կացութիւնը»: Ըմբոստացումի ու յարատեւ պայքարի գաղափարն է, որ պիտի ընկերանայ նոր հայուն՝ սերունդէ սերունդ: Նոր հայը կամ «օտարութեան աշխարհի միակ ընդի տեղացին», ինչպէս կ'ըսէր հեղինակը իր «Նոր Մանչուկը» բանաստեղծութեան մէջ («Քառուղի»):

«Թակարդին Շուրջ» հատորով, Օշական կը վերլուծէ հայկական ահարեկչութեան միսթիքը, հայ-թուրք հարցը, հայոց պատմութեան տարօրինակ խորհուրդը («Թէյէֆոնը», «Թուրք Շօֆէօրին Օրագրէն» եւ «Անկարելի Հանդիպումը»):

ՇՈՒՇԻԿ ՏԱՄԵԱՊԵՏԵԱՆ

ՅՈՒՆԱԿԻՆԵՐԸ ՀԱՄԱԴՐՈՂ ԵԶԱԿԻՆ

«Եթէ բառը ունենար միայն մէկ իմաստ, ա՛յն՝ որ բառարանին մէջ նշուած է, եթէ երկրորդ լեզուն չիսխատէր եւ չապատագրէր լեզուին հաւաստիութիւնը, գոյութիւն չէր ունենար նաեւ գրականութիւնը»:

ՌՈՒԱՆ ՊԱՐԹ

Հեռուէն՝ Վահէ Օշական գրագէտին դիմանկար կը թուի աւելի հրապուրիչ եւ ա՛յլ աւելի ամբողջական: Մանաւանդ հիմա, երբ հակադրութիւնները հրաշալիօրէն համադրելու արուեստը նուաճած Սփիւռքի ամէնէն ինքնատիպ այս բանաստեղծը արդէն աւարտած է իր կեանքի երկր, որուն ընդ լեզուն նաեւ իր 78ամեայ հեքիաթին խորքն ու արտայայտչամիջոցն է, ինչպէս իր կեանքը շնչաւորած ներքին փոթորկումներն ու անսանձ յարկութիւնները՝ իր գրական լեզուն կազմաւորած բաղադրիչներն ու էտարրերը:

«Երկրորդ լեզուն», կամ այլ սահմանումով մը՝ իր խօսքին ժամանակը քաղաքակրթական գիտակցութեան մը յայտնագործող ուժականութեամբ, այսինքն՝ կեանք — գրութեան յարաշարժութեան օրինաչափութեան ուղենշաններուն թելադրանքներով հիմնադրելու ստեղծագործական աշխատանքը Վահէ Օշական կը սկսի առաջին իսկ օրէն, Փարիզի մէջ, երբ գերիրապաշտ գրականութեան եւ գոյութեան պաշտ իմաստասիրութեան հարցադրումներով ու հաստատումներով հարստացած երիտասարդ բանաստեղծը ձեւ ու կերպարանք կու տայ գայթակղիչ ու առինքնող գրական ծրագրի մը, որուն նախագիծը յստակօրէն Իւրոուազժուի 1956ին լոյս տեսած «Պատուհան»-ի էջերուն: Արեւմտահայ, աւելի ճիշդ՝ հայ քերթողութեան տաղաչափական օրէնքներուն, քնարական, իմացական - խոհական, խորհրդապաշտ եւ գեղապաշտ աւանդներուն ու ուղղութիւններուն հետ ամէն պորտակապ խցած եւ տարօրէն ինքնանման բանաստեղծութիւն մը, որ նոր ժամանակներու թոհուրոհին դէմ իր ռատարները լարած՝ քսաներորդ դարու հայ մարդուն դիմագրաւած տազնապներն ու անհեթեթ գոյամիճակները «կ'երգէ» ինքնաստեղծ ու ինքնայատուկ «երկրորդ լեզունով» մը՝ միաժամանակ լայն պարզելով ընդդիմադիր գրականութեան կեդրոնախոյս ախորժակներն ու հակադասական արժեքափերը:

Ազատագրումի եւ ինքնակերտումի ճամբով ինքզինք շարունակ յայտնագործող նոր լեզունով մը, որ թափ կ'առնէ աւօրեայ խօսակցական լեզունի տաք ու ճկուն ներուժէն, կը գսպանակուի ժողովրդային դարձուածքներու եւ պատկերաւոր ասոյթներու բարախուն կշռոյթով ու, կեանքի հեքիին խարտոցներուն պարնուելով՝ անբանաստեղծական կարծրած իրականութիւններու (սրճարան, մեթրօ, աֆիշ, պերճադիճ, մանրքէն, եւայլն) փոխ — յարարերութիւններէն ձեւաւորուած մասերու միութիւնը կը բարձրացնէ արուեստի ամբողջական գործի մը մակարդակին:

«Պատուհան»-ի ընդմէջէն հայ քերթողութենէն ներս խուժած այս նոր ու ապստամբ լեզուն իր վայրի գեղեցկութիւնը կը կատարելագործէ կարճ ժամանակէն, երբ «Պատուհան»-ի կարգ մը քերթուածներուն («Ծառ», «Հիմա», «Հարցում», «Ժամադրութիւն», «Քերթուածի մը համար») մէջ յամեցող քնարական արձագանգներուն ու քերթողական գառածումներուն փոխարէն, Վահէ Օշական լայն կը բանայ արդի ժամանակներու տրամին վարագոյրը եւ կանգ կ'առնէ սուտի, կեղծիքի, անբարոյութեան ահաւորագոյն անդուհանքներուն եւ կեանք-մահ ողբերգութեան ամէնէն ափոքալիփսեան տեսարաններուն դիմաց: «Քաղաք»-ի թանձր ու անշնչելի մթնոլորտով ծանրարեւն այս տազնապը, անհեթեթին փլատակներուն տակէն գոհ մարդը դուրս բերելու առաջադրանքով, տակաւ առ տակաւ, յաւելեալ ուժգնութեամբ կը յայտարարէ արդի մարդուն գոյամարտը, յանձնառու բանաստեղծներուն վայել յայտնատեսական գորութեամբ մը, կառչելով կեանքի գնացքի անիւներուն անհակակշռելի թաւալումին, որպէսզի

կիրքով, գայրոյթով, ինքնաճաղկումով բանաստեղծը վերառնէ կեանքին Ուժը, պոռթկում առ պոռթկում հաստատագրէ անհեռանկար մարդուն ողբերգութիւնը եւ իր գեղարուեստական վկայութիւնը ամբարգէ կեանքին չափ վարակիչ, դաժան, հակասական, քինախնդիր, վայրագ, բայց եւ գրաւիչ, գեղեցիկ, անսպառ, ոգեշնչող ու վաւերական արժեքներուն մշտարորոք այլարանութեան եղանակներով:

Գոյութեանական ճշմարտութիւնները յարափոփոխ ու բազմաշերտ այլարանութեան մը վերածած այս քերթողական յեղափոխութիւնը, որ գրական սեռերու պատուարները քանդող իր անեղաթափ հոսքով, լեղապատառ երկարաչունչ նախադասութիւններով, արձակ տողերուն ջղապիրկ շնչառութեամբ, անսպասելի պայթումներով եւ ափոքալիփսեան ահաւորութեամբ մերօրեայ մարդկային ողբերգութիւնները, պատիժներն ու անհեթեթութիւնները կը վաւերագրէ, աւելի շեշտ տարողութիւն եւ ուժգնութիւն կը ստանայ Վահէ Օշական բանաստեղծի իրերայաջորդ քերթողագիրքերուն մէջ:

Լիրանանեան քաղաքացիական պատերազմին դժոխային ոլորտներէն մինչեւ Աստուծոյ բացակայութիւն, մարդ էակին անգտանելիութենէն մինչեւ կեանքի անկարելիութեան անդունդներն ի վար գահավիժող օշականեան դիւցազներգութիւնը աւելի կը գարգանայ եւ կ'ամբողջանայ ո՛չ միայն «Քառուղի»-ին յաջորդած քերթողագիրքերուն, այլեւ՝ հեղինակին արձակ ստեղծումներուն մէկ կարեւոր մասը ամփոփած հատորներու էջերուն:

«Ահագանգ»-ի, «Խուճապ»-ի, «Արուարձաններ»-ու էջերուն գրական հին ու նոր սեռերը մէկ կողապարի մէջ ձուլած Վահէ Օշականի գրական ծրագիրը, այսպէսով, աւելի լայն կը բանայ իր բազմահորիզոն էութիւնը, երբ այս բանաստեղծական աշխարհը կը հաստատուի արձակ գործերու մէջ: Սփիւռքի հզօրացման հրամայականէն մինչեւ նորանկախ Հայաստանի Հանրապետութեան դիմագրաւած խնդիրներ, Արցախի ազատագրական պայքարի ոգեշնչող գրաւորութենէն մինչեւ իր իմացական ու գիտակցական ուժին ապաւինած նոր սփիւռքահայու դիմագրի յստակացում, իրերայաջորդ սերունդներու յարաճուն բախումներ եւ այս բոլորէն ճիւղաւորուած տոկունութեան, հաւատարմութեան, խիզախութեան եւ ինքնակերտման գոյութեանական հարցադրումներ, Վահէ Օշական հայութեան մերօրեայ հիմնախնդիրները կը գետեղէ նոր ենթահողի մը վրայ: Նոր հայր, թուրքին մնայուն հոգեսարսափէն ազատագրուած, պատմութեան կեդտն ու փոշին թօթափած եւ մեր ժամանակներու խարտոցներուն դիմացող «գիտակից սփիւռքցի»-ն կը հասունանայ նոյնինքն իր ուժերով, «առանց հայրական հովանիի եւ խրատի», ինչպէս կ'ըսէ Սփիւռքի նորագոյն սերունդը ներկայացնող իր տիպարներէն մէկը:

«Աւելի արթուն, աւելի ուժով, աւելի ազատ» ըլլալու այս գիտակցութիւնը կ'աճի տողընդմէջ, կտրիճ, տաք եւ ջղուտ նոր լեզուն կը հիմնէ իր ձեռագիրը, որ ստեղծում առ ստեղծում ա՛յլ աւելի կ'ամբողջանայ եւ նորանոր հարստացումներով վաւերականօրէն կ'ամբողջացնէ հակադրութիւններն ու յոգնակիները ամենայն հմտութեամբ ու ներդաշնակութեամբ համադրած Սփիւռքի գրականութեան Ծուռ Հերին դիմանկարը:

ՀԱՇՈՒԵՓԱԿ

Այս էջով տրուած Վ. Օշականի «Շաշուեփակ» անուն յօդուածը մէկն է հանգուցեալ գրագէտին նորագոյն գրութիւններէն: Եայ մշակոյթի, բայց ի մասնաւորի հայ գրականութեան դարաւոր կենսափորձին ուսանելի դասերը, սփիւռքահայ գրականութեան դիմագրաւած տազնապնդը եւ ողջ հայութիւնը յուզող շարք մը հիմնահարցեր լուսարձակի տակ արձանացուցած այս յօդուածը, կը հաւատանք, լաւագոյնս կը ներկայացնէ պարտութիւն չճանչող Վահէ Օշական գաղափարաւարչտ հայ մտաւորականին հարազատ դիմանկարն ու էութիւնը: Այդ իսկ պատճառով, սոյն յաւելուածը ուզեցինք փակել Վ. Օշականի վերոնշեալ խոհուն գրութեամբ:

Այս գրութիւնը չի ծնիր 2000 թուականի «կոյր թիւ» ըրալու հանգամանքէն, ոչ այ հազարամեակ փոխելու արարքին կապուած սնտուի ու ծիծաղելի նախապաշարու մէ: Այլ՝ այն համոզումէն, թէ մեր ազգը ինքնութեան հիմնական սագնապ մը կ'ապրի քառորդ դարէ ի վեր եւ թէ մեր պատմութիւնը նոր փուլի մէջ կը մտնէ, եւ մեզ շրջապատող հայ երիտասարդութիւնն ու մեր մշակոյթի արժէքները նոր սահմանումի կը կարօտին: Առաւել՝ Սփիւռք մը, որ յրջօրէն իր սեփականութիւնը եւ իր «նէզոն սիւթը» կ'որոնէ, եւ ի վերջոյ՝ գերիշխան, ազատ եւ անկախ Հայաստան մը ու ժողովուրդ մը, որ օտար լուծ մը թօթափած՝ նոր ու հարազատ սահմանումներու եւ սահմաններու կը ձգտի — այս բոլորն ու աւելին՝ անհրաժեշտ կը դարձնեն արագ վերաքննութիւնը մեր կտրած ճամբուն եւ ներկայ կացութեան:

Մեր մշակոյթի բնոյթին մասին գլխաւոր որոշումը 4րդ եւ մ'անաւանդ 5րդ դարերուն առնուեցաւ, երբ քրիստոնէութեան որդեգրումն ու ալրուրենի գիտութիւնը մեր ազգը անվերապահօրէն եւ անվերադարձօրէն դէպի Քրիստոնէական, Միջերկրական եւ Յունական քաղաքակրթութիւնը դարձուցին, ինչպէս կը բնորոշէ Անթուան Մէլլէ: Յաջորդող միջին եւ անվերջանալի դարերուն այս ուղղութիւնը անփոփոխ մնաց, հակառակ անթիւ փորձութեանց եւ մեծ մասամբ շնորհիւ Արեւմտաքի հետ սակաւ գարգացող վաճառականական եւ մշակութային կապերու:

Այսպէս էր, որ միջին դարերուն մեծ դժուարութեամբ շարունակուեցաւ այս ոգեկան կեանքին գարգացումը, սառնապանքի մէջ թրծուելով մեր ազգային նկարագիրը, մինչ կրօնական գագացումին արմատները աւելի կը խորանային մեր մէջ, հակառակ պատմական շատ ծանր պայմաններու, ինչպէս ցոյց կու տան Լեւոն Խաչերեանի հաստորները Միջնդարու հայ ուսումնարաններու մասին: Այս շրջանի փոթորիկոս պատմութեան մեծ վնասներէն մին այ այն եղաւ որ 15րդ եւ 16րդ դարերու Եւրոպական վերածնունդը շատ քիչ ազդեցութիւն կրցաւ ունենայ մեր վրայ:

Երբ կը հասնինք 18րդ դար, կը նշմարենք Հայկական յուսատորութեան շրջանին առաջին նշանները, որոնք յաջանի կ'ըլլան Պոստոյ, Նոր Զուղայի, Մասրասի եւ մ'անաւանդ վենետիկի կեդրոններէն: Այս 18րդ դարն էր արդէն Եւրոպական յուսատորութեան, որ շարունակութիւնը հանդիսացաւ երկու հարիւր տարի առաջ սեղի ունեցած վերածնունդին: Սակայն մեր պարագային, ճիշդ հակառակ սեղի պիտի ունենար ու մեր վերածնունդը պիտի սկսէր 19րդ դարու կէսերուն, մեր Լուսատորութենէն հարիւր յիսուն տարի ետք: Եւ եւրոպական էրկոյթուկէս դար ուշ...: Եւրոպայի պարագային, վերածնունդը յառաջ բերաւ Լուսատորութեան դարը, մեր մէջ՝ Լուսատորութեան դարն էր, որ պատճառ դարձաւ վերածնունդին:

Ահա այս «ուշացած ըրալու» հոգեբանութեան վերագրելու է մեր գրականութեան երկու թեւերուն՝ արեւմտահայ եւ արեւելահայ խոճապի մօտեցող աճապարանքը, 19րդ դարու կէսերէն անդին՝ հասնելու Արեւմտաքին, ի գին ամէն գոհողութեան, բնօրինակելով, կապկելով կամ պաշտամունքի առարկայ ընելով Արեւմտեան արուեստի թեմաները եւ գրական գաղափարաբանութիւնը: Հայկական վերածնունդը ծայր կու սայ 19րդ դարու 30ական թուականներուն, արեւելահայ թեւին մէջ Խաչատուր Արուսեանի սերունդով ու կը գարգանայ ժողովրդապաշտ, օգտասէր եւ դաստիարակիչ գաղափարաբանութեամբ: (Ոմանց համար գրական վերածնունդը կը յասկանչուի գրական լեզուի մը գործածութեամբ, որ յստ իրենց կը նշանակէ թէ Խաչատուր Արուսեանի Արարատեան բարբառով գրուած «Վէրք Հայաստանի»ն չէ արեւելահայերէն գրական լեզուին արմատը, առաջին օրինակը, ինչպէս բնորոշուած է առհասարակ: Այլ՝ Միքայէլ Նայպանսեանի «Միւնի խօսք, միւսին հարսն» վէպը, գրուած Նոր Նախիջեանի բարբառով, «Վէրք Հայաստանի»ն երկու ամիս առաջ յոյս սեփած՝ բայց «գրեթէ» ամբողջութեամբ բունագրաւուած ու փճացուած ցարական ոստիկանութեան կողմէ...): Մինչ արեւմտահայ թեւին մէջ վերածնունդը կը յաջանուի առաջին անգամ 1850ական թուական-

ներու սկիզբը, վաղի մէջ Խրիմեան Հայրիկի ու վենետիկի կամարներուն տակ Հայր Անտոն Այլուանի քնարերգական, կրօնաշունչ եւ հայրենասէր բանաստեղծութեանց մէջ:

Արեւմտահայ գրական գագանութեան համար կէս դար բաւարար էր հասնելու համար ուսճացու մի բարձր աստիճանի, շնորհիւ գլխաւորաբար արեւմտեան, ու յասկապէս ֆրանսական մշակոյթի յաւ ու գէշ ազդեցութեանց, գաւառի բնիկ սաղանդին եւ սարօրինակօրէն՝ թրքական բունաստիճանութեան:

Եւ յանկարծ ամէն ինչ կը փոխուի 1915ին: Միւս կողմէ, արեւելահայ թեւը գրեթէ մէկ դար պիտի դնէր մինչեւ իր բարձրակէտին հասնելու 1930ական թուականներուն, Ակսել Բակունցի, Եղիշէ Չարենցի, վաղարշակ Նորենցի եւ իրենց սերունդի գործերուն շնորհիւ: Եւ սակայն, ան այ իր կարգին գոհու պիտի երթար ստալինեան բունակալութեան: Երկու պարագաներուն այ, մեր 20րդ դարու աղէտի մը ապրումին ու ցաւին մէջէն է, որ ծնունդ կ'առնէ: Բայց որքան այ առհաւական եղած ըլլար արեւմտահայոց համար Մեծ Եղեռնի այդ ողբերգական փորձառութիւնը, ան միայն ու թ սարկով կասեցուց կամ ուշացուց հայ մտքի երկրորդ ծաղկումը: Արդարեւ, ստեղծագործական թափու աշխատանքներու մեծ կողմը կը 1900էն մինչեւ 1910, որ Արեւմտահայ գրականութեան գրեթէ բոլոր մեծ դէմքերը կրկէս կ'իջնէին այդ սասնամեակի ընթացքին: Եւ այս թափն էր, որ շարունակուեցաւ մինչեւ 1930ական տարիները, երբ հրապարակը գրաւեցին «Փարիզի Տղարք»՝ Նիկողոս Սարաֆեան, Շաւարշ Նարդունի, Չարեն Որբունի, Եհան Եհանուր եւ իրենց սերունդը, գորաւոր նոր թափ մը ստարկ հայ մտքի յառաջխաղացքին:

Այսպէս էր որ, երբ եւս կը նայինք աւարտող հարիւր տարիներուն, արդար հպարտութեան գագացում մը կը համակէ մեզ: Այդքան սենդագին ու բարձրորակ արուեստ՝ սա պատկազ ազգին կողմէ...: Վարուժանի, Թէքէեանի, Տէրեանի ու Չարենցի սաղանդներուն վկայութիւնը հայ միտքը միջազգային արուեստի մակարդակին կը հանէ, մինչ Օշականի վէպով հայ գրական սաղանդը աշխարհի պատմութեան մեծագոյններուն հետ կը նայ մըցիլ: ԲԱյնարհամարտը կրկին քանդեց մեր հաւաքական ճիգը, բայց աւանդութիւնը կը շարունակուի Նիկողոս Սարաֆեանով, Պարոյր Սեւակով ու նորերով: Հակառակ մեր փոքր թիւին, մեր ազգին թեքնոյթիք եւ արհեստագէտ մտաւորականութիւնն այ, մ'անաւանդ Հայաստանի մէջ, մոյոններով առաջ է՝ բաղդատմամբ մեզի նման ազգերու:

Գեղարուեստի կայուն ամեն մէջ, մեր արուեստագէտները թիւով ու որակով ոչ մէկէ վար կը մնան: Ինչ կը վերաբերի գրականութեան, ճիշդ է, որ Սփիւռքի մէջ հայերէն գիրք կարդացողներու թիւը նուազած է, սակայն բարձրորակ գիրքեր կը շարունակեն գրուիլ, հոս թէ Հայաստան: Պէտք է շեշտել, թէ շուկայի, «չարչի» մտայնութիւնն է միայն որ մեր գրական մշակոյթի առողջութիւնը թիւերով ու ցանկերով կը կշռէ: Մշակոյթ մը առաւելաբար ոգի է, ազգային գաղափարաբանութիւն ու իմացական հասունութեան մակարդակ է: Եւ այդ սեփականէն՝ 20րդ դարուն հայ միտքը ոչինչով վար կը մնայ նախորդին: Եւ միայն կեանքն ու հաւաստիք պարպուած մարդիկն են, որ «դրախտային անցեալի» մը կարօտով համակուած՝ անգիտակ կը մնան իրենց շուրջի արժէքներուն:

Մեզի պակասած սաղանդը չէ, ոչ այ ներքին ուժը, այլ՝ քաղաքային ու ընկերային կեանքի հասունութիւնը, խելքն ու կամքը՝ անցեալի փորձառութենէն օգտուելու: Անգլիացիք կ'ըսեն. «Խելացի ժողովուրդ մը ճգնաժամի մը պարագային կը մոռնայ իր սարակարծութիւնները ու կը միանայ»: Ամբողջ 20րդ դարը ճգնաժամի շրջան մը եղած է մեր ազգին համար ու մարդ կ'ակնկալէ, որ մեր ներքին կոնիւնքը մէկդի դնենք ի վերջոյ ու դառնանք իմացարուեստ մեզի սպաննացող արտաքին փտանգը: Իմացական գորակոչի պահն է: Սակայն անցեալին դաս առնելու չի բաւեր — կարեւորը գիտակցիլն է մեր երկու հաստաւաններու իմացական իւրաքանչեւութեանց, մանաւանդ գրական կայուն ամէն ներս: Եւ համարելը պանոնք, բան մը՝ որ կապէս գրագէտներուն կ'իջնայ ընել: Անցնող երկու դարերը ցոյց կու տան, թէ արեւմտահայ միտքը ոչ միայն կը նայ գէշ - աղէկ քայլ պահել գարգացած աշխարհի հետ, այլ նաեւ կը նայ կամուրջի դեր կատարել Արեւմտաքի եւ Արեւելքի հայութեանց միջեւ, սեփական մը շոշափուկները հանդիսանալ լեռնամուկ մեր Հայրենիքին եւ արտաքին աշխարհին միջեւ: Իր կողմէ, արեւելահայ միտքը «Տողի» միտքիքին, աւանդականին, «ժողովուրդ» ապրումին աւելի հողորդ՝ դիւրաւ կը նայ այդ հարստութիւնը բաժնել Արեւմտաքի, քաղաքայինի, արդիականի հոսքին մասնակից հայութեան հետ:

Բացուող դարաշրջանը, հողորդակցական նոր միջոցներու իր յայն կարելիութիւններով, մեծապէս պիտի օգնէ այս գործընթացին: Անհրաժեշտ է սակայն համերաշխութիւն այս երկու քիւն միջեւ՝ թէ՛ յաջող կերպով յուժելու Հայաստանի հայութեան դէպի դասական ուղղադրութիւն անխուսափելի վերադարձը եւ թէ՛, աւելի յայն իմաստով՝ երկու գագանութիւններու եւ մտայնութիւններու միաձուլումը: Կը մնան սակաւին Հայ Դասի հետ առնչուած ուրիշ հարցեր, ինչպէս բարոյական հասունացումը անոնց, որոնց կեանք կամ արդարութիւն գլացուեցաւ համայնափար սիրապետութեան ժամանակ: Եթէ գրուի հանեցինք այս բոլորը, այն ասան կը նանք իրապէս անցնող դարուն հաշիւը փակուած համարել: